 որինակ, Հոգ ստանալ կարող էր գյուղացիների միայն 8 տոկոսը²⁹,
 թացի այդ, Հողատիրության առավելագույն շափերը սահմաններին
 հաջոյի չէր առնվել այն իրողությունը, որ իրարի տարրերը շրջան-
 ներում հողի բերքատվությունը. և ընդհանրապես մշտակված կուլ-
 տուրաները տարրեր էին: Այդ իսկ պատճառով էլ, թականաբար,
 տարրեր էին նաև նրանցից ստացված եկամուռները: Այս հարցի
 ուշագիր ստումնաստրումը բացահայտում է հետեւալ հետաքրքիր
 պատկերը: Օրենքի հրման վրա սոսպվող Հողատարածության աի-
 րոցը տրամադրվում էր երկու անգամ պակաս հող, քան անըրդի
 Հողատիրույն, պայմանականերն հաշվելով, որ սոսպվող հողի
 բերրիությունը երկու անգամ գերազանցում է անըրդիին³⁰: Այս
 սկզբունքը միշտ չէ, որ նիշտ էր արտահայտում իրական վիճակը:
 Բանն այն է, որ ինչպես նշում էր ժետարթութերթը, երկրի մի շարք
 շրջաններում, մասնավորապես Թրդատանում, սոսպվող հողերի
 բերրիությունը գերազանցում էր անըրդի հողերի բերրիությունը ոչ
 թե երկու անգամ, ինչպես նշված էր ազգարային ռեֆորմի օրեն-
 քում, այլ երեքից շուրջ անգամ: Ազելին, Ենթանի և Իրաք-
 յան Թրդատանի մի շարք այլ բերքառատ շրջաններում սոսպվող և
 անըրդի հողների բերքառավության տարրերությունը կազմում էր
 նույնիսկ վերը նշված թվերի կրծնապատիկը³¹: Մրանից հետեւամ է,
 որ կառավարությունը թրդական շրջաններում ընդհանրապես կա-
 րող էր Հողատիրության առավելագույն շափերի ավելի ցածր մա-
 կարդակ սահմանել, որի շնորհիվ հետարավոր կլիներ ավելացնել
 Հոգ ատացող գյուղացիների թիվը:

Այսպիսով, նման իրավիճակի անտեսման պայմաններում,
 նույնիսկ ագրարային ռեֆորմի լրիվ իրականացման դեպքում,
 հիշյալ պրարեմը Թրդատանում պրեթե մնալու էր լլուծված:
 Սակայն միայն դրանով հարցը չի սպասվում: Բանն այն է, որ,
 նիշտ է, Իրաքյան Թրդատանում առավելագույն լայն տարածում ունի
 ոչ շրովի հողամշակումը, սակայն գյուղություն ունեին հողատարա-
 ծությունների երկու տարրեր կատեգորիաներ ևս, որոնք իրարից
 տարրերվում էին սոսպման հղանակներով՝ սոսպելի և կիսաոռողե-
 նությունը:

²⁹ محمد حسين أبوالعيس، «شورة ونزراحة في العراق»، بغداد ١٩٥٩، ص ٢.

³⁰ «کوارٹرها»، ٤.7.1960:

³¹ Նոյն ակտում:

իլ: Կիսուոռոգելի Հողերը այն հոգերն են, որտեղ չըի աժանդակ ապրութենք կան Հողը մշակելու համար, եթե անձրևները պահան են տեղում: Ի արրերսություն անշրջի շրջանների, այսուղ ամեանը Հողը կարելի է ռառվել աղբյուրների շրով: Միանգամայն ընական է, որ այս հողատարածությունից սահցվող նկամուտները անհամեմատ ազելի բարձր էին, քան մեկ անշրջի Հողատարածությունների: Սակայն այս առարերսությունները ապրարային ռեֆորմի մինիստրության կողմից հաշվի չէին ռանդելու: Ըստ առաջ կիսուոռոգելի հողատարածությունների շրջաններում կարգաժամկետ թողարկում էր 2.000 դռնում, այնպես, ինչպես անշրջի տարածություններում:

Հողային հարցի լուծման համար քրդական գևմոկրատական կուսակցության ապրարային ծրագրի մեջ նշված էին նրաքյան Թրդստանի պյուղացիությանը հողով ապահովելու և ընդհանրապես պյուղատեսնական արտադրանքը ազելացնելու մի շարք միջոցառումներ:

«Թրդստանում մենք լափի են հուսնում շմշակվող Հողատարածությունները, — նշված էր այդ ծրագրում, — ուստի անհրաժեշտ է սուսպաման ցունցի տակածման միջոցով գրանց ռուսկի դարձնել և բաժանել Հողազուրկի. ինչպես նաև այն պյուղացիներին, որոնք ունեն ապրարային որևէնք ուահմանած լափից պահան հողատարություն: Այս խնդիրը լուծելու ռուսպաման նոր ցանցերի շրամքարների, ինչպես նաև պիետական սուսպաման սիստեմներից պյուղացիներին օգտվելու իրավունք տալու միջոցով»: ՔԴԿ-ն պահանջում էր օգնել պյուղացիներին սերմերի Հայթայթման, քիմիական պարարտանյութերի ձեռք բերման գործում, որպեսզի նրանք ի վիճակի լինեն Հարատացնելու մշակվող կուլտուրաների տեսակները: Խնդիրը էր զրավում պյուղացիներին արամադրել երկարաժամկետ արտոնուակարկ, նրանց աղատելով վաշխառուների ձևեկներից: Նրաքյան Թրդստանի պյուղատեսնություն մեջ իրականացվելիք միջոցառումների հաշողության կարեռ պայմաններից մեկը ՔԴԿ-ն համարում էր պյուղատեսնական կոռպերատիվների սուսպամը, որը տպեաց է մի կողմից օգներ պյուղացիներին վաճառելու իրենց անտեսությունների արտադրանքը: Մյուս կողմից՝ ձեռք բերելու պյուղատեսնական ժամանակակից գործիքները և տեխնիկա՝, Քանի որ անառնապահությունը համարվում էր նրաք-

²⁰ «Թրդստան գևմոկրատական կուսակցության ծրագրը», Շնորհիք, 4.7.1985,

յան Թրդստանի գյուղատեսեսական արտադրության հիմնական հյուզերից մեկը, թ՛հեւ հանդիս էր զալիս այդ բնագավառում ֆեոդալական ամեն տեսակ արտօնությունների և անառնազմության զարգացումը կաշկանդող այլ արգելքների վերացման պահանջով:

Սրադրի այցի ընկերող պահանջներից մեկը վերաբերում էր բրդական շրջաններում ծխախոտագրքության զարգացման հարցերին, թ՛հեւ պահանջում էր փոփոխության ներքարկել ծխախոտագրքների իրավումքները սահմանափակող օրենքը և սահմանի այնպիսի գներ, որոնք համապատասխանեն ավյալ կուլտուրան մշակող գյուղացիների շահերին և նպատակն եղաւ հետագա զարգացմանը, նշվում էին ծխախոտագրքություն զարգացման նպատակին ուղղված մի շարք կոնկրետ միջոցառություններ: Համանման թեսույթի խնդիրները էին առաջադրվում Թրդստանում անտառարեսեսության պահպանման և զարգացման բնագավառում:

Հիմնավերելով Թրաքյան Թրդստանի գյուղատեսեսության մեջ վերափոխություններ կատարելու անհրաժեշտությունը, թ՛հեւ իր ծրագրում առաջադրվում էր հետևյալ պահանջները.

1. Փոփոխություններ մոցնել ագրարային ռեֆորմի որենքի մեջ այն հաշվով, որպեսզի Թրդստանում հողային սեփականության առավելացույն շափերը անշրջի և ոռոգվող հողատարածություններում համապատասխանարար կազմին 500 և 200 դրամում:

2. Բնեագրավիլ բոլոր այն ֆեոդալների հողերը, որոնք թշնամական դիրք են դրավել հանրապետական կարգի նկատմամբ և համագործակցում են ռեֆերենտների իմպերիալիստական ռաժերի հետ, Բնեագրաված այդ հողերի համար նրանց փոխհատուցում լվնարել:

3. Արժատական գոտոխոսություններ կատարել պետական ապարատում, վարչական և ռատիկանական օրգաններում, Այս օրգանների գործունեությունը հարմարեցնել հողագոխության և ապարային ռեֆորմի պահանջներին: Անհրաժեշտ է պետական ապարատը յաքրեւ մողովրդի թշնամիններից, որպեսզի հարազոր լինի իրականացնել ազրարային ռեֆորմը:

4. Արագացնել գյուղացիների միջև հողերի բաժանման գործը, Դյուլացիներին տրամադրվող հողատարածությունների շափերը ավելացնել: Անշրջի հողատարածություններում նախատեսված 120

գունումի գործարքներանց առ 200 դրամ, իսկ ոռոգվող հոգա-
տարածություններում՝ 100 դրամում²⁴:

Քննիկից առաջարգութ պահանջները ազգարային վե-
րափխությունների թշագավառում էին իրաքյան Թրդատա-
նի ժողովրդական լայն զանգամածների շահերից և կոչված էին ա-
րապնդելու հանրապետական կարգերը: Ընդունելով հանգերձ Թըր-
դատանի գեմովերատական կուսակցության ազգարային ժրագրի
անօդինելի առաջադիմական բնույթը, միաժամանակ հորի է նշել
նրա կարևորագույն պահանջներից մեկի կիրառման աննպատա-
կանարժությունը: Քննիկի ազգարային ժրագրի այն մասը, որը
պահանջում էր պահանջնել խոշոր հողատերերի հոգացին սեփա-
կանության առավելագույն լափերը, միշտ պահանջ էր, որը պահա-
պանաթյուն էր զանում նաև Իրաքի կոմունիստական կուսակցու-
թյան կողմից: Ինչ վերարկրվում է այն հարցին, թե ինչպիսի
սկզբունքով հողատերերից վերցված հողամասերը պետք է հանձ-
նելին պյուղացիներին, ապա ալտեր տարրեր մատեցում կար Քննիկի
և կամկուսի կողմից: Քննիկ պահանջում էր կալվածատերերին
թողնվող հողերի առավելագույն լափերը կրնատել և դրա հաշվին
ավելացնել գյուղացիներին տրվող հողամասերի լափերը, ուռոգվող
և անըրդի հողերում հատցնելով այն 60 և 120 դրամումից, ինչպես
նախատեսված էր օրենքով, մինչև 100 և 200 դրամումից:

Այս հարցում Իրաքի կոմունիստական կուսակցությունը այլ
տեսակետի էր, որն ըստ հության ազնի նիշու էր հաշվի առնում
հոգացին հարցում Իրաքում և քրդական շրջաններում գյուղական
ունեցող իրավիճակը և համապատասխանությունը ընդհանուրապես զյու-
ղացիության և մասնավորապես լքավոր գյուղացիության շահերին
կամկուսի, ինչպես նշեցինք, ևս հանգես էր զայիս հողատերերի
ձեռքում թողնվող հողատարածությունների առավելագույն լափե-
րի պահանջման օգտին: Սակայն համաձայն իրաքյան կոմունիստ-
ների ժրագրի, ազգարային ուժորմի որների սահմանած կալվա-
ծատերական հողերի լափերի նոր կրնատման հետևանքով առատ-
վող հողատարածությունները լսկեաթ է սպառագործվեին հող սառ-
ցող գյուղացիների հողատարածությունների առավելագույն լափե-
րը մեծացնելու համար, ինչպես այդ պահանջում էր Քննիկ, կո-
մունիստական կուսակցությունը միաժամանակ պահանջում էր
իշեցնել գյուղացիներին տրվող հողատարածությունների առավե-

²⁴ Նոյն տեղում:

լագույն շափերը, և ի հաշիվ դրա, որքան կարելի է շատ թվով դյուզացիների ապահովել Հողով՝ Կոմիտասի քաղաքականությունը այս հարցում, անտարակույս, ավելի խելամբան ու նպաստականարմար էր Խելու⁷, որովհետեւ Իրաքի արարտական և ռազմական շրջաններում ավալ պայմաններում պատագործման համար պիտօնականի Հողատարածությունները բավականին բիշ էին և միայն կոմիտասի առաջադրած ծրագրի իրավութումով կարելի էր առավելագույն թվով սահավաճող և հողագործի գյուղացիների ապահովել Հողով՝ Խել վերաբերվում էր ԹՇի-ի ծրագրին այս հարցում, առա նու ուներ հետեւյալ նրկությունները։ Խախու, քառ նրա պահանջի, գյուղացին այնքան Հող էր ստանալու, որի մշակումը առանց վարձու աշխատանքի և գյուղատնտեսական մեքենաների օգտագործման (որուց թիմը, ի դեռ, շատ թիշ էր) անհնարին կլիներ, ովհեծ Հողամասների տրամադրությունը գյուղացիների մի մասին և խոշոր հողատիրության պահպանումը, — այս առթիվ գրում էր Իրաքի կոմիտասի ԿՇ-ի անդամ Զաքի Խայրին, — կհասցենն այն բանին, որ սրոշ գավառներում, որինակ, Սուզեյմանիեյում, Հող կոտանան անեցան թվով գյուղացիներու⁸, Ծրկորդ։ Խեման պահմաններում, հասկապես Իրաքյան Քրդաստանում, փաստորին անհնարին կլիներ լուծել գյուղացիներին Հողով՝ ապահովելու պրարքեցը, քանի որ գյուղացիների յուրաքանչյաւ անտեսությանը 100 և 200 դոնում Հող արամացրնելու դեպքում հողագործի և սահավաճող գյուղացիների մեծ մասը Հող ստանալու հնարավորությունից բնդմիշտ կղրկվեր։

Այսպիսով, լնայած այն բանին, որ ազգարային ռեֆորմի գիշավոր նորատակ հայտարարված էր Եֆեռդալդմի լիկվիդացիան (Հողածած առաջին), իրականում նա զնաց ֆեոդալական հարաբերությունների լրիվ վերացման նաևապարհով, այլ միայն սահմանափակեց խոշոր հողատիրությունը։

Խելպես և պետք էր սպասել, ազգարային ռեֆորմը խորը թշնամանքով ընդունվելց Իրաքի արար և քուրօք Հողային արխատոկրատիվի կողմէց։ Վերջինս ոչ մի միջոցի առջև կանգ էր տևում ազգարային վերափոխությունների գործը խափանելու։ Համար Հանճախակի գործուն ազգարային ռեֆորմի կիրառման ակտիվ գործիչների սպասությունները, անորի և անորեկման զու էին

⁷ Закон Хайду, Закон об аграрной реформе в Иракской Республике, «Проблемы мира и социализма», 1959, № 4, стр. 57.

գառնում գյուղացիական միությունների անդամները։ Կայզածա-
տհրերը շատ զիազբերում ընօհանրապես հրամարվում էին սերմա-
ցու տրամադրել գյուղացիներին։ Հրամումների տերերը գյուղա-
անուական արտադրանքը կրնաւելու, երկրում պարենային
գժվարություններ ստեղծելու և ընդհանրապես ոճֆորմը վարկարե-
կելու միասնական ձևություն էին ցանքառարածությունների ոռոգ-
ման գործը։ Արարական և քրդական շրջաններում ֆեոդալական-
կարվածատիրական տարրերը ակտիվ դայրար ծովալեցին ագրա-
րային ոճֆորմի գնմ։ Ուշագրություն է գրավում քուրդ հետազիմա-
կան ֆեոդալների գործունեությունը այս ուղղությամբ, որը ուղղա-
կի կամ անուղղակի աշակցություն էր ասանում իրանական և մաս-
նավորապես թուրքական իշխանությունների կողմից։ Վերցիններու,
ինչպես Հայութի է։ Շաբախոր բոլոր միշոցները գործադրում էին
իրարում դեմոկրատական վերափոխությունների քաղաքականու-
թյունը ձախուզներ, Համար։ Այս երկրներում ապաստանած ոճակ-
ցիներ քուրդ ֆեոդալները այստեղից կանոնավոր կերպով կազմա-
կներպում էին իրենց կողմնակիցների հակադեմակրատական գոր-
ծունեությունը։

Կառավարության միշտցառումները այս ուղղությամբ աշքի էին
ընկերում իրենց անհետողականությամբ։ Ազգին, Կասեմի կառա-
վարությունը և տնտեսական իշխանությունները շատ հաճախ իրենք
էին գժվարություններ ստեղծում ոճֆորմի իրականացման հաեւ-
պարհին։ Դյուլացիական միությունները, որոնք ստեղծվեցին հե-
ղափոխությունից հետո, լուրջ ուժ էին ներկայացնում և ի վեճակի
էին լրցորն նպաստելու ոճֆորմի իրագործմանը։ Սակայն կառա-
վարությունը ոչ միայն նպաստավոր ոպայշաններ չէր ստեղծում
նրանց արդյունավետ գործունեության ծովալման համար, այլև
արգելքներ էր հարուցում նրանց առջև ներկայուղ իրենով գյուղա-
ցիական միություններում կոմունիստական և քրդական դեմոկրա-
տական կուսակցությունների ազգեցության աճից, կառավարու-
թյունը գնալով, բայց չության, թշնամական գիրք գրավեց նրանց
նկատմամբ։

Ազգարային ոճֆորմը կիրառվում էր դանդաղ անմաքրով, և
կառավարությունը վճռական միշոցների լրջ գիմում այն հետեռ-
դականորեն իրականացնելու համար։ Մտորե բերվող վիճակա-
զրական ավյալներից կարելի է պատկերացնել կազմել ազգարային
ոճֆորմի իրականացման ընթացքի մասին։ 1959 թ. միեւն 1962 թ.
կայլածատերներից վերցվել է միայն 7.414.407 դոնում հոգ, այ-

նին; ազգարային ռեֆորմի օրենքով սահմանված էր, որ 5 տարվա ընթացքում՝ 1958—1963 թթ. պետք է վերցվէիր կալվածատիրական Հոգատիրության ողջ ավելցուկը, որը կազմում էր 11.418.003 դրամ՝²⁴ Ասկայի բնագրավածքած Հոգատարաժությունները, որոնք կազմում են ընդհանուր նախատեսվածի շուրջ 2/3-ը, թերևս ինչ-որ չափով կարողանային նպաստել Հոգային պրորեմիրի կարգավորմանը, եթե լրիվ բաժանվեին գյուղացիների միջն Շիրախատարար տվյալ ժամանեակացրանում այդ բանը տեսկ լունեցավ. Ահա այստեղ է, որ դրսուրդում է Իրաքի կառավարության ազգարային բազարականության անվճառականության մեջ այլ կողմը. Բանն այն է, որ բնագրաված Հողերը միանգամից չեն բաժանվում գյուղացիներին: Բնագրավմանից մինչև բաժանումը ընկած է մի ժամանեակացրան, երբ Հողը զանգում է ժամանեակավոր կառավարման տակ, որի տևողությունը երրեն զարմանալի կերպով երկար է, Այսպիս վերը արդեն եշմեց, որ 7.414.407 դրևում գրավված Հողերից գյուղացիների միջն բաժանվել էր միայն 4.709.086 դրեռում, այսինքն՝ կեսից մի քիչ տվելին: Բայց ինչպիսին էր ընդհանուր վիճակը տվյալ ժամանեակացրանում քրդական լիվաներում: Քրդական շրջաններում Հոգային ավելցուկների բնագրավման պատեհը ներկայացնում է հետեւյալ աղյուսակը (դրեռումներով):²⁵

Ակտ	1959	1960	1961	1962	1963	1964 թ- 1965 թ. մարտ
Մասուլ	398.254	386.213	395.304	53.570	53.850	128.534
Հցըի	198.206	83.546	117.562	77.409	1.572	14.394
Առևելքաներներ	225.793	1.564	45.083	702	—	160.075
Հիքուս	15.951	112.852	135.082	72.414	53.890	—
Ընդհանուր	1.029.204	584.287	693.433	210.095	109.312	

Այս տվյալները վկարում են, որ ազգարային վերափոխությունների բազարականությունը վերընթաց գեով լի գնացել: Հարկ է նշել, որ քրդական շրջաններում այդ գործի անմիտությունը վիճակը պայմանավորված էր ոչ միայն մեզ արդեն հայտնի պատճենով:

²⁴ „Statistical Abstract”, Baghdad, 1965, p. 39.

²⁵ Աշոտ Խալու ալ-Սադդի, Ազրայի ազօտական-դեմոկրատիկ քաղաքացիության առաջնային հարցերը, Երևան, 1965, էջ 22.

հայս, որները բայց էտիւժյան հաշվի շէր առել Թթուտանի հոգատիրության առանձնահատկությունները և երկրորդ, համախրաբյան մասշտարազ Շետաղիմական ուժերի աշխաւացման և կառավարության հակագիծը պեղարուցման դիրքորոշման հետևողություն պղարաբյին վերափոխությունների գործը առաջեց), այլև երանավ, որ 1951 թ. պատերազմ հայտարարելով քրդական ազգային դիմոկրատական ուժերին, Երաքի կառավարությունը նոր լուրջ արգելըներ ստեղծեց ազրարային հարցի լուժման հանուպարություն կառավարությունը իր հսկողության տակ գտնվող քրդական շրջաններում ագրարային ռեֆորմի իրագործումը դադարեցրեց: Մասունի լիվայում, օրինակ, ռեֆորմի իրականացումը շարունակվում էր այս կամ այն կերպ իրագործվել արարական շրջաններում, ինչը շէր կարելի ասել քրդարանակ շրջանների մասին, որունք նույնապես կառավարության հսկողության տակ էին: Կիրկուկի լիվայում քուրդ կալվածատերների և ֆեռզայնների շահնքին լցիրուիլու կառավարության քաղաքականությունը ավելի էր աշք ժակում: Այսանդ ազրարային վերափոխությունների արդյունքներն աճենաանշանն են: Սա բացատրվում է Երանավ, որ կառավարությունը քրդական ազգային դեմքրատական ուժերի դեմ մզգազ պատերազմում ձգտում էր ամրապնդել իր կառաջը քրդական ֆեռզայա-կալվածատերական ունակցուն աարքիր հետ և պառակտում մացնել քրդական շարժման շարքերում: Սուբյեմանին լիվայում մինչև 1964 թ. հունվարի 1-ը կալվածատերներից բռնազրագվել էր 68 հազար հեկտար (կամ 272,000 դոնում) հող, որից գլուզացիներին բաժանվել էր ընդամենքը՝ 8 հազար հեկտար: Այս լիվայում հող ստացող գրուզացիական ընտանիքների թիվը հասեւմ էր 1549-ի: Ստացվում է, որ 5 հազար հեկտարը բաժանվել է 1549 ընտանիքներին²⁸: Այսանդ արգել պարզ հաշվումները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր ընտանիքին ընկենում էր 5 հեկտարից (20 դոնումից) մի քիչ ավելի հող, որը Երաքի պայմաններում չէր կարող բավարարել մեկ ընտանիքի պահանջները: Այլ կերպ ասած, նույնիսկ ռեֆորմի իրականացումից հետո ասկավանող գյուղացիներին հողով ապահովելու պրոբլեմը մնում էր լլուծված:

Կառավարության քաղաքականության անվճականությունը, երկրի հետաղիմական ուժերի հակազդեցությունը և վերջապես ներքաղաքական լարված միջակի առկայությունը, որը կապված էր

²⁸ „Statistical Abstract”, Baghdad, 1964, p. 10.

առաջին Հերթին Իրաքյան Թրդատանում սկսված իրազարձությունների հետ, հանգամանելիքը էին, որոնք լրջորեն խանգարում էին Հողային պրորշեմի կարգավորմանը: Խնդիքն նշեցինք, արարուեան և բրդական շրջաններում բռնագրավզած Հողերը անմիջապես չեն բաժանվում պյուղացիների միջև: Բռնագրավումից մինչև բաժանումը այդ Հողերը գտնվում էին ագրարային ռեֆորմի մինիստրության ստամանակազոր կառավարման ներքո: 1965 թ., որինտեղ, Իրաքյան Թրդատանում ստամանակազոր կառավարման ներք զանգող Հողատարածությունները կազմում էին ռեֆորմին ննիթակա Հողերի 43,7%-ը: Այս Հողերի գնայի մասը, կամ ավելի քան 2 միլիոն դուումբ, գտնվում էր Մասուդի լիվայում: Անցման ժամանակաշրջանում այս Հողերի մշակումը կազմակերպելու նպատակով, գրանց գործակալման հիմունքներով Հանձնում էին պյուղացիներին: Նշված ժամանակաշրջանում Իրաքյան Թրդատանի գյուղացիներին վարձակալման էր Հանձնվել 3.138.427 դուում Հող²⁸:

Ազրարային ռեֆորմի հարրոց և կարևոր հանդիսանում էր Հողի բաժանումը գյուղացիներին ի սեփականություն: Միանգամային հասկանայի է, որ այս փուլն ամենակարեարն էր, քանի որ գյուղացիներն իրենց տեսութափում վիճակը պետք է բարելավվերին ի հաշիվ կարգածատիրական Հողերի բաժանման: Այդ նշանակում է, որ միաժամանակ լուրջ հարված էր հացվում կարգածատիրերի անահանական և բազարական դիրքերին: Սակայն ռեֆորմի օրենքի ընդունումից հետո ընկած ժամանակաշրջանը ցույց է տալիս այդ գործի անբավարար վիճակը: Այսպես՝ 1965 թ. վիճակապրական ազյալների համաձայն պյուղացիներին վերջնականացնեն ի սեփականություն բաժանվել էր պետության ձեռքում գտնվող ամբողջ Հողերի 25%-ը, որը կազմում էր պյուղացիներին վերջնականացնեալու անցելիքը Հողատարածությունների միայն 15,4%-ը²⁹: Պաշտոնական ամյալների համաձայն ագրարային ռեֆորմի իրականացման շնորհիվ Հող ստացող ընտանիքների թիվը պետք է հասնի 232.000-ի, տակային հող ստացել էր միայն 45.311 ընտանիքը: Այդ նշանակում է, որ յոթը արագա ընթացքում որպես սեփականություն Հող ստացել էին պյուղացիական անահանությունների նախատեսված ընդհանուր թիվ 20%-ից էլ պակաս մասը: Հաշվումները ցույց ձն տալիս, որ Հող ստացող պյուղացիների տվյալը Հողագորկ ընտա-

²⁸ „Statistical Abstract“, Baghdad, 1966, p. 92.

²⁹ Նայն տեղում:

իերսերի բնդշանուր թվի մեջ կազմում է մոտ 3 տոկոս¹¹, Պարզ է, որ առ անհջան մի թիվ է, որի հետևում թաքնված է Հողային պրորեժիսի կարգավորման գործի անրագարար վիճակը Իրաքի արտական, ինչպես նաև բրդական շրջաններում:

Ընթարմի մասին որենքի բնդուումից հետո էլ շարունակ հավելումներ և ուղղումներ էին արվում, որոնք առաջնապես ուղղված էին կալվածատերների շահերի պաշտպանությանը:

Երկրի տեսհասական ու բազարական կյանքում հծովագուական վերափխությունների ուղղուց Կասմիմի կառավարության հրամագումը բացասական աղղեցություն ունեցավ ունիորմի իրականացման վրա: Ընթարմի իրականացման առնվազաւթյամբ ժամկետությամբ ժագով զինները որպես կանոն լուծում էին Հոգուած Հոգաւաներների: Կամունիատական կուսակցության տակերում կաղմանակառաված պատգացիությունները, որոնք ակտիվ մասնակցություն էին ցուցարկում ունիորմի իրականացմանը, սկսեցին շնորհացման պետական իշխանությունների կողմից: Ի Հակաղորությունն որպա, կառավարությանը հատուկ գներներով ստեղծեց, այսպէս կոչված, «Դրազացիանան ընկերություններ», որոնց անմիջականութեն ենթակա էին պետական իշխանությունների Հոգուած թյանը: Ընթարմի իրականացման համար պատասխանատու ազգարային ունիորմի մինիստրությունը ամեն կերպ աշխատում էր: Հիշյալ միջոցառումների իրականացումից հետո պահել պյուղացիական ակտիվ գործիչներն, զրանց գոխարնեն անդ տարով ֆեղարական ատարերին և նրանց համակրողներին: Ֆեղայիններին ազնիք բայց իրավունքներ ու Հարավորություններ արվեցին իրենց ձեռքում պահերու ընտրովի բավ Հոգերը: Այսպիս էրրիում և Սուլեյմանիեում շնորհ հայտարարվեցին արգել ընդունված որոշումները Հոգերի բնագրավոման մասին, որպեսպէս Շարավորություն արվի կալվածատերներին ընտրելու առավել բերրի հոգերը: Խույնապիսի իրավունք զիրապահնեց նաև Դիզարի շրջանի Հոգաւաներին¹²:

Ազգարային ունիորմի օրենքին կատարված Հավելումների և ուղղումների մեջ ուրույն տեղ ունի 1963 թ. մացված ուղղումը: 1963 թ. հանեսին բասառական Հարարեմիսիունների ունիորմի հական գոխայիւթյուններ մացրեց ազգարային ունիորմի օրենքի մեջ: Հոգաւանությունը պյուղացին այժմ արգել որպես գոխառանուցում պետք է

¹¹ Խոյե տեղում:

¹² С. Н. Азатоевский, Аграрный вопрос в современном Ираке, стр. 149.

վճարեց Հոդի գնի 50%-ը, և ախճին 100%-ի փոխարձն. չնզ որում
 այդ գումարը վճարվելու էր ոչ թե 20, ոչ 40 տարում: Տարեկան
 տոկոսը 2-ից իւնցվեց 2-ի, իսկ հետո՝ 1%-ի, և վերջո 5 տոկոսով
 կրօնավճից պարարային ռեֆորմն իրականացնող վարչական մար-
 մինների ժախսերի գումարը⁴³: Նոր ուղղումն համաձայն կառավա-
 րության իրավունք էր զիրապահվում Հոդի գնի կեսը վճարելուց
 ազատել այն գյուղացիներին, որոնք բազում են բարձրացնել
 գյուղատնտեսական արտադրությունը, կատարում են կառավարու-
 թյան և իրենց կոռուպերատիվների առքե ստանձնեած պարտավորու-
 թյունները⁴⁴: Բառապահն աշ է բարեկմիտական ռեֆորմի ակրե-
 ալյա հակադիմուկրատական քաղաքականության, արևմտյան իմ-
 պերիայի ասական երկրների հետ մերձեցման և սոցիալիստական, ինչպես նաև առաջադիմական ռեֆորմ սննդող երկրների հետ հա-
 րաբերությունները վասթարացնելու և հակածողովրդական այլ
 քայլերի ֆոնի վրա ապրարային ընույթի այս միջացառումները կա-
 րող են առաջինակ թվակ: Մակար բանը նրանումն է, որ կառա-
 վարությունը գրանով ուղղում էր զարկ տալ գյուղատնտեսական
 մթերքների արտադրության ավելացմանը, որի պահանջը հատկա-
 պես սրբել էր Թրդատակում մզգող պատերազմի հետեանքով: Հար-
 ցի էությունը միայն մզգող բուն իսկ պատերազմի ժախսերի մեջ
 էք: Այսուղ էական նշանակություն ուներ Իրաքյան Թրդատակի
 հացահատիկային կուլտուրաների և անասնապահական մթերքնե-
 րի այն մասը, որը լրացել էր պատերազմի հետեանքով: Ի վերջո,
 կղզիացած բաասական ռեֆորմը կզտում էր Հանձին Հոզ սաացող
 գյուղացիների, իր համար հենարան ստեղծել գյուղում: Այս վերըին
 հարցի հետ սերտորեն առնչվում է փոխհատուցումը վնարելու հա-
 մար սահմանված նոր՝ 40-ամյա ժամկետը: Վճրյին մի գործոն
 էր, որը երկար ժամանակ գյուղացում ուղղակի կախման մեջ կպա-
 հեր կառավարությունից: Այսանդ կարենու է նշել մեկ ոյլ հանգա-
 մանը ևս: Բառապահների ապրարային քաղաքականության այս
 պրոցեսիվ քայլերը բառ էության շէին վերաբերում Իրաքյան Թըր-
 գրատանի մի զգալի մասին, քանի որ վերցինս զանգում էր Մու-
 սաֆա Բարզանու ղեկավարած քրդական ազգային զիմուկատա-
 կան ուժերի հսկողության ներքո և այսպիսով ենթակա չէր կառա-
 վարության զեկրնեներին:

⁴³ «ՀՀ-Հարց» («Հայաստան»), Բազմակ, 16.12.1993.

⁴⁴ Նոյն տեղում:

Բրաբի կառավարության ազգարային բնույթի այս թայլերին մեծ նշանակություն տալ առաջիկ ևս արգարացված չէր լինի, բայց որ երկու տարի անց այդ ուղղումները ի շիր եղան 1965 թ. զեկամեմբրին Բրաբի կառավարությունը նոր ուղղումներ մտցրեց ազգարային սփորմի օրենքի մեջ, որոնք ոչնչի հավասարեցրին 1963 թ. ուղղումները. Փոխհատուցումը վճարելու ժամկետը նորից սահմանվեց 20 տարի, զերական զնովեցին պլուղացիների կողմից վճարվող տարեկան տոկոսների նախակին շահերը⁴⁵, Այսպիսակ, եթե բնադրանոր հայացք նեանենք հետոնիքորմյան ժամանակաշրջանի վրա, ապա կենացներ, որ կառարժած ուղղումների և լրացումների զդայի մասն ավելի ընդգծված գարձրեցին սփորմի տանց այն էլ ոչ ռատիկալ ոչ ոչ հետևողական բնույթը:

Հետոնիքորմյան ժամանակաշրջանի ավյալները խոսում են այն մասին, որ Բրաբում ազրարային հարցը հիմնականում լուծված չէ. 1965 թ. ազրարային սփորմի նախորդին քրդական շրջաններում բնակչության ընդամենը 3,2% կազմող մանր, միջին և խաշոր կալվածատերները աիրում էին բոլոր մշակվող հողատարածությունների 59,5% -ին⁴⁶. Ընթորմի մասին սրկերի ընդունումից վեց տարի անց քրդական լիվաներում հոգ ստացել էր պլուղացիական միայն 13.261 ընտանիք⁴⁷. Մինչև 1965 թ. գարենը երաբյան քրդացուանի 1057 կոլվաժատերներին պատկանող 6,4 միլիոն գննումից վերցվել էր միայն 708 հազ. գննում. Բայց այդ հողերից զյուղացիները ստացել էին ընդամենը 241 հազար գննում⁴⁸. Դժվար չէ նկատել, որ նման պարմաներում քրդական լիվաներում հոգը շարունակում էր հիմնականում մնալ կալվածատերների ձեռքում:

Այսպիսով պարզ է դառնում, թե ինչու քրդական ազգային զեմուկրտական շարժման զեկավարները անհրաժեշտ ուշադրություն էին զարգելով ազրարային հարցի վրա, եթե նկատի առնենք նաև այն կարևոր իրազությունը, որ ինքնազարության համար պլուղ պայմանագրի հիմնական շարժի ուժը պլուղացիությունն է: Այդ պահանջով էլ 1964 թ. սկսած Բարզանու զիյավկրած քրդական ազգային հեղափոխական ուժերի հսկողության տակ գտնվող շրջաններում քրդական զնմուկրտական կուսակցության և գործադիր իշ-

⁴⁵ „Quarterly Economic Review“, December, London, 1965, p. 10.

⁴⁶ «Ա Խաչ: աշ-Զիրաք (الصلاح الزرقاء),» Բաշգադ, 1969, 36 Յ, էջ 273.

⁴⁷ تقرير وزارة الاصلاح الزرقاء في العراق، بغداد، ١٩٦٤، ص ١٨.

⁴⁸ القشرة الاقتصادية لوزارة الاصلاح الزرقاء، بغداد ١٩٦٥، ص ١٥.

խանության ֆունկցիաները կատարող ռևելվագույնական հրամանաւարության խորհուրդը՝ Հողբ գյուղացիներին հանձնելու ուշադրավ քայլեր ենուարիկնեց, Դյուլացիներին բաժանվեցին պետական, ինչպես նաև ռեակցիոն այն ֆեռզալեների Հողերը, որոնք հանդիս էին գույնի բրդական աղօային զեմոկրատական շարժման զմբեկության մասնակի կամ գնելի իրենց արզատ Հողբ Հողբ հայտարարվեց Համազային սեփականությունը¹⁰, Մի քանի շրջաններում բանագրավճած Հողերի վրա կազմակերպվեցին գյուղատնտեսական կոռուպտատիվներ, որոնց անդամները համարական դաւերերով իրականացնում էին Հողի մշակումը¹¹,

Որպես որներ սահմանվեց, որ կալվածատերը իրավունք լունի ոչ մի գյուղացու հեռացնելու մշակվող հողատարածությունից հարկեր չվճարելու համար Թանի որ գյուղացիության մի զգայի մասը այնունաղերձ շարունակում էր Հողազարկ մեալ և այդպիսով, առ ժամանակ գոյատելու էր կալվածատիրական հողերը վարձակալման հիմունքներով մշակելու պրակտիկան, ցրդուկան շարժման զեկավարությունը որոշեց կարգավորել վարձակալման հանունները, ի նկատի ունենալով գյուղացիների շահերի պաշտպանությունը Սահմանօդեց վարձակալման և Հարկերի պատվելու լավիր ժիամենության ցանքատարածություններից¹² 2 տոկոս և մոտավորապես վեց տոկոս՝ հացանատիկային կուլտուրաներից¹³: Աշակերպ է, որ անքերը հոգերից հարկի վճարման ավելի շածք չափեր էին սահմանված: Հարկերը համարվում էին ոչ միայն Թրդատանի Հյուսիսային շրջաններում, այլև խոշոր քաղաքների մոտակայքում գրանցող քրդական գյուղերում:

Թեև վերը նշված ազգարային միջոցառումները գանգածային թնությ չեն կրում և մի շաբթ պատճառաներով երանց գործողությունն ուղրաց լայն շեր, այնունաղերձ նրանք որոշակի հետաշըրբություն են ներկայացնում այն իմաստով, որ պատկերացնում են աաշին քրդական զեմոկրատական կուսակցության տնտեսական ծրագրի ու նրա իրականացման մասին, հաստատում այն իրազւթյունը, որ ազգային զեմոկրատական շարժումը երացյան քրդական գյուղատիկան-զեմոկրատական թնությ:

Խոսնելով իրացյան հանրապետությունում, այդ թվում և քրդական շրջաններում ազգարային վերափոխությունների անբավարար

¹⁰ «Հայրած», № 488, Հոկտեմբեր, 1868:

¹¹ Խուժ ականում:

¹² Խուժ ականում:

տեմպերի մասին լսեաբ է Հակովի այն մտքին, թե դրանք որնէ գիտական լմտցրին իրաւում զյուղում։ Որքան էլ ապրարացին ոեֆորմի քաղաքականությունը անհանողական էր, նա, այնուանչընք, զգայի փոփոխություններ մտցրեց զյուղական թեականիքան գաստկարգային կառուցվածքի մեջ։ Եթե մինչ Հեղափոխությունը խոշոր կարգաժամանակի ձեռքում հենարուեցված էր 25.294.151 դրույմ Հոգ, արախիքն՝ Աշակվոզ Հողատարածության 79 տոկոսը, ապա մինչև 1965 թ. կեսերը նրանց բաժինը կրնտավեց մինչև 39 տոկոսի, կազմելով 10.414.855 դրույմ Հոգ³², Ազրարային ոեֆորմը ունեցավ մի կարևոր հետևակի հա։ առավելապես ավելացավ միշտ զյուղացիության թիվը։ Եթե մինչ Հեղափոխությունը միշտ զյուղացիությունը կազմում էր Հողագործ աղջարեական 6 տոկոսը, որոնց ձեռքում գտնվում էր ընդամենը 2.145.268 դրույմ մշակվող Հողատարածությունը, ապա 1965 թ. կեսերին այդ կատակորիայի զյուղացիների թիվը զբարիոններ աճեց և հասավ 295 հազարի, որոնք տիրում էին 10.757.928 դրույմ Հոգի, այլ կերպ առաջ զգալի յափով աճեց միշտ զյուղացիական տեսառությունների թիվը³³։ Մինչև Հեղափոխությունը նրարում կար Հողագորկ 497 հազար ընտանիք։ Այս թիվը մեջ չեն մտնում առավաշող զյուղացիները, որոնց Հողատարածությունները չեն բաժարարում նրանց ընտանիքի պահանջները։ Այս կարգի սակագահու զյուղացիական ընտանիքների թիվը հասեաւմ է 182.054-ի։ Այսպիսով, Հողագորկ և սակագահու զյուղացիական ընտանիքների ընդհանուր թիվը հասեաւմ էր մոտ 650 հազարի։ Ազրարային ոեֆորմի որներով այս զյուղացիները Հոգ ստանալու իրավունք ունեն։ Սակայն զերը նշված ժամանակաշրջանում, որպես սննդականությունն և վարձակալական հիմունքներով, ըստ որում այս զերշինը կազմում էր բացուրդակ մեծամասնությունը, Հոգ ստացել էր միայն 269.750 ընտանիք, այսինքն՝ Հոգի կարիք ունեցող զյուղացիների 41 տոկոսը³⁴ առաջիկա նման մեացին Հողագորկ կամ սակագահու³⁵։

³² Մրման Խալմեա ու-Ծյուտի. Ագրարն առօք, տր. 113.

³³ Խոյք ունեցում։

³⁴ Խոյք ունեցում։

مکرراستاکان կուսակցությունը տալիս են ազգարային խնդրի լուծմանը։ Այսպարավ է այս տեսակետից այն փաստը, որ բրդերի ինքնազմության մասին 1970 թ. մարտի 27-ի Համաձայնագրությունը կառավարության և քրդական ազգային զնմուկրատական ուժերի միջև պարունակում է հատուկ կետ նրաքյան Քրդութանում Հոգային Հարցի կարգավորման մասին։ Խնդրի է դրվում ազարտել ազգարային և էֆորմի իրականացումը քրդական շրջաններում։ Ռեֆորմի իրականացնելիս իրաքյան Քրդութանի առանձնահատուկ պայմանները նկատի առնելու համար կառավարության և ԹՇՆ-ի փոխադարձ Համաձայնությամբ ստեղծվեց Հանձնաժողով։

Իրարում և քրդական շրջաններում պարաբային հարցը լուծելու առավել հետևողական ժրագրով հանգեստ է գալիս կուլուսիսական կուսություններ և նրա քրդական մասնանյուղը։ 1959 թ. մայիսի կեսին տեղի ունեցավ իրաքի կոմիտասի քրդական մասնայությունի առաջին համագումարը, որի ընթացած ծրագրի մեջ առաջ է քաշվում Հոգային Հարցը լուծելու գնաուկան պահանջը։ Խնդրի է դրվում որոնազրավել խոշոր կարգաժամանակակից գյուղացիներին²⁵, Կոմիտասի քրդական մասնանյուղը գյուղացիական անտեսությունների ձեռքում թողնվող հոգատարածությունների առավելացույն լավը ոռոգվող և անշրջի շրջաններում համապատասխանաբար սահմանում է 50 և 200 զոնում²⁶, և գրաբարային և էֆորմին ճեթակա հոգերը։ — առաջ է ծրագրում, — հանձնել գյուղացիական կազմակերպության տնօրինությանը, որը ընտրվում է ամյալ շրջանի աղքարինակչության հոգմենտ։ Այս կազմակերպությունն է իրագործում Հոգերի բաժանման գործը, կիրառելով առանց փոխհատուցման լուրջաբանը²⁷, Հոգերի առաջ է քաշում մի շարք պահանջներ, որոնք կուլմաժ են նպաստելու նրաքյան Քրդութանի գյուղատանելության զարգացմանը։ Նման կարգի առաջնահերթ խնդիրներից են՝ նահապարհաշինությունը և փոխադրամիջոցների գործի բարելավումը, այգեգործության և ծխախտագործության մեջ առավել արդյունավետ մեթոդների սպառագործումը, գյուղացիներին վարկեր

²⁵ «برنامجه منظمة القليم كردستان للجعوب الشيعي (العرائفي)»، بغداد، ١٩٦٩، ص ٤

²⁶ նոյն տեղում։

²⁷ նոյն տեղում։

արամազրելը, ոռոգման սիստեմի ստեղծումը, անունապահության գար գարկ տալը, տեղում մրցի պահաժոյի և կաթնամշտկման գործառների կառուցումը և այլն²⁸.

Ներդաշտ-կարվածատիրական խոշոր հոգատիրությունն այլևս սպանել է իր գոյատեսության իրավումը։ Անընդունակ գանձելով բավարարելու երկրի ժամանակակից զարգացման պահանջմունքները, այն համբեկությունը քենաշատության առարկա է դարձել և առաջատար է բիուս է ազրարային ռեֆորմների անհրաժեշտությունը։ Բոլորովին այլ հարց են նրա իրականացման ձևերը ու մեխոդները, նրա վերջնական նպատակները։ Իրացյան հանրապետությունը կառավարության ազրարային քաղաքականությունը իր վրա կրում էր և շարունակում է կրել երկրի քաղաքական ուժերի պիտօնարարերության այլ վիճակը, որի պայմաններում կառավարության զենքի մոտ գտնվող ազգային թույլ բուրժուազիայի ներկայացուցիչները անկարող գտնվեցին վճռականորեն իրականացնելու նույնիսկ իրենց կողմից առաջարկման ոչ արմատական ազրարային ռեֆորմը։ Տարբեր գուսակարգեր և քաղաքական ուժեր ազրարային հարցի լուծման արքրեր ուղղություններ են ներկայացնում։ Հանրապետական իրաքում ազրարային ռեֆորմի քաղաքականության զբանավոր արատն այն է, որ այն չվերացրեց խոշոր հոգատիրությունը, այլ միայն սահմանափակեց այն։ Դրա անմիշտկան հետեւնքն է հոկայական թիվ կազմող հոգագործեկ և սակավահող ընտանիքների գոյությունը։

1958 թ. ձեռք բերելով քաղաքական անկախությունը, Իրաքը թեակունց պատմական մի նոր շրջան՝ անտեսական անկախության համար երկարատև ու համառ պայքարի ժամանակաշրջան։ Վերցինս իր մեջ պարունակում է հարցերի մի ամրողություն, որի մեջ ուրուցն տեղ ունի ազրարային հարցը։ Առանց ազրարային հարցի հնականական, զննուկրատական լուծման իրաքի անտեսական ներգաշնակ զարգացումը աներևակայիլի է։ Ուստի իրաքյան հանրապետության ոչ միայն տեսանական, այլև քաղաքական գարգացումը շատ բանով կախված կլինի նրանից, թե երկրի կառավարուղ շրջանները ինչպիսի վճռականությամբ կշարունակեն ազրարային հարցի կարգավորմանն ուղղված քաղաքականությունը։

²⁸ Նույն տեղում։

Իրաքի գաղաքական անկախության եզրանումը իրոք պատմական եշտակություն ունեցող իրադարձություն էր. Մակար. խորապես սխալ են բուրժուա-և աշխարհական գաղափարախռովները, որոնք զրանով Իրաքի զննուեատական հեղափոխական ուժերի խնդրեները ազարտված են համարում: Վ. Բ. Հեծինը ժամանակին վճռականորեն քննադատել է նման հարցադրումները: Նա նշում էր, որ բուրժուական գաղափարախռովները խոսում են «ազգային ազատագրման մասին... սովետի առկ թաղներիվ տնտեսական ազատագրումը... Մինչդեռ իրականում հենց վերջինն է զիմա-վարը»²⁸.

Ոչ միայն Իրաքի, այլև Արևելքի մյուս երկրների պատմական փարձը փառագույն է լննինյան հարցուրման հզմարտացիությունը:

Ш. Խ. ՄԳՈՒ

АГРАРНЫЕ ПРЕОБРАЗОВАНИЯ В КУРДСКИХ РАЙОНАХ ИРАКСКОЙ РЕСПУБЛИКИ

В работах ряда советских авторов освещены вопросы аграрных отношений и преобразований в современном Ираке. В этих работах Иракскому Курдистану отведено небольшое место, ибо эти авторы не ставили задачу отдельно изучить постановку данного вопроса в курдских районах. Между тем такая необходимость очевидна, если принять во внимание, что аграрные отношения и, в частности, аграрные преобразования в Курдистане имеют ряд специфических особенностей, освещение которых в известной мере способствовало бы правильному пониманию политических событий в Ираке и его курдских районах.

В статье на основе статистических данных, материалов иракской прессы, а также программных документов Иракской компартии и Демократической партии Курдистана делается попытка осветить особенности аграрных преобразований, трудности решения аграрной проблемы в Иракском Курдистане.

²⁸ Վ. Բ. Ամբե, Երև, Ը. 18, էլ 502:

العلاقات التزراوية في مناطق العراق الكردية
(ملخص)

سيق المعديد من الكتاب السوفييت ان غالباً العلاقات والاصلاحات التزراوية في العراق المعاصر، لكن كردستان العراق لم تعظ بالتصبيب عواقب من الدراسة عند كتاب المذكورين آنفـاً، الا انهم لم يضعوا نصب اعينهم مسألة بحث الموضوع المذكور، وحالة في مناطق الكردية، الا ان المسؤولية تعود الى ذلك، خصوصاً، اذا اخذنا باليعـين الاعتبار ان العلاقات والاصلاحات التزراوية في كردستان ذات ميزات كبيرة، يؤدي شرحها لفهم العلاقات السياسية في العراق و مناطقه الكردية فيها صحيحاً.

استناداً الى الصحف و مواد الاحصائيات و الوثائق البرمجية للحزب الشيوعي العراقي و الحزب الديمقراطي الكردستاني، يحاول المقال الاجابة عن الاسئلة المتعلقة بالعلاقات ، الاصلاحات التزراوية في كردستان.

ՀԱՅ-ԱՐԱԲԻԱՆԱՆ ԳՈՒԽԱՐԱՐԻԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՄԻՒՅԱՆՄ

(1918 նոյեմբեր—1919 նույնիւ)

Արքական ազգայնական դեկազարները համաշխարհային առաջին պատերազմը երկիրնեղիւած դիմավորեցին:

Ազգայնականների մի փոքր խումբ, որը արար ժողովրդական խավերի վրա զգալի ազդեցություն ուներ և որին զիսավորում էին Արդի Ռահման Շահընդիրը և Մոհամմեդ Քուրդ Ալին, երկրաշերտ Անգլիայի և Ֆրանսիայի գաղութարարական յատըրություններից և բարեմտորեն հավատարով հաղթանակի դեպքում արարներին լայն ինքնավարություն տալու երիտրութափական խռովուններին, չանում էր սիրիացիներին կողմնորոշել դեպի Անտանտի դիմ հայարարված սորրազան պատերազմը¹:

Ազգայնականների մյուս խումբը, որի մեջ մտնում էր հատկապես ռալ-Անդ կազմակերպություն շուրջ խմբած սպարական և մտավորական զատը, հետապնդում էր զինված ապատամբությամբ արարական լիակատար անհախությունը նվաճելու ժրագիր:

1915 թ. գարնանը, երբ թուրքական բազմատեսակ բռնամիջոցների ներգործությամբ սիրիական ժողովրդի մեծամասնությունը ավելի ու ավելի էր հակառակ դեպի ՇԱՀՀականներից հակատը, Դամակառ ժամանեց Հիշաղի կառավարի և Մերքայի շերիֆ Հուսեյն Ալի ալ-Հաշիմիի որդի Ֆեյսալը:

Բրիտանական գործակալները ավելի քան մեկ տարի էր, ինչ շոշափում էին Հուսեյնի տրամադրությունները և Բարձրագույն Դուռ հետ նրա փոխհարաբերությունների լարզածության հետ հույսեր կապելով՝ չանում էին նրան զինված ապատամբության

¹ Բ. Բ. Լեզկան, Новая история арабских стран, М., 1966, стр. 326.

մղել։ Հիշապի կառավարիւը, ստեղծեն, վճռական քայլերի դիմելուց առաջ ցանկանում էր ու միայն երաշխերենից ստանալ Անգլիայից։ այն որդու միջոցով ստուգել սիրիական ազգայնականների արամագրությունները։

«Ենցականները, որոնց հետ գաղտնորն ըփզեց Ֆերայր, 1915 թ.- մայիսին կազմեցին Շամամակոսի արձանագրությունները կոչվող պատմությանը հայտնի մի փաստաթուղթ։ որի հիմնական բովանդակությունը հետևյալն էր։

1. Պետք է ստեղծվի արարական թերակղզին (ի բաց առյալ Ազգենը), Տորգանանը, Պաղեստինը, Իրաքը, Արբանան ու Սիրիան միավորող արարական մի պետականություն։

2. Անգլիան պետք է ճանաչի և երաշխավորի նորանունք պետության անկախությունը, հրաժարվելով նաև կապիտուլյացիաներից։

3. Այդ դեպքում արարական պետությունը Անգլիայի հետ կինը պաշտպանուեկան դաշինք և նրան 15 տարով կարամադրի անհասունան առանձնաշնորհումներ։

«Արձանագրությունը Ֆերայրին հանձնելով, սիրիական ազգայնականները խորհուրդ տվեցին, որ Հռոմեյն իրեն Ալին այն Անգրիային ենթադրացնի որպես Թուրքիայի դեմ համարական առատամբյան նախապայման։²

Հիշապի կառավարիւը ւԱրձանագրությանը շուրջ բանակցությունների մեջ մտավ օգիպատուում Անգլիայի գլխավոր կոմիսար Մակ-Մառոնի հետ։ բնուածուն—Մակ-Մառոն նամակագրությունն անվամբ հայտնի բանակցությունները³ (1915 թ. հունիսի 14—1916 թ. հունվարի 30) ավարտվեցին ու հօգուտ արարենքի, բանի որ հաշիմյան ֆեռգաւական վերնախավը՝ իր իսկ մականի ներքո արարական նոր խալիֆայություն ստեղծելու հնուղեարից հարրած, զգալի զիշումներ կատարեց անզինացիներին։

«Արձանագրությամբ արարական պետության հյուսիսային սահման էր նշառորշված 37-րդ զուգահեռականը, այլ խոսրով

² Ա. Հայնանիսյան, Հայութերը և ազգային-ազատագրական շարժման զերեւը արարական Արևելքում—ուշ. Բ. Հենրից և Մերկուրիու և Միշել Արևելքի ժողովությունը ազգային-ազատագրական դաշտարշա, Օբնան, 1909, էլ. 43—50.

³ Իր առաջին համակամ, փառարձն շաբաթեալ Շնուրակուուի աշխատավորթյունը, Հռոմեյն լոկ մի պահանջ էր ամենացնա՞լ նոնայի արարական խալիֆայությանց։ Փայտակարգած նամակները ուն «O. Antonius, The Arab Awakening, London, 1945, pp. 414—427.

արարական ստեղծելիք պետության մեջ էին մանելու ժողովներակիցին, Հարավային Հայաստանի ու Հյուսիս-արևմտյան Թրոգրատանի մի մասը՝ Մակ-Մահոնի հետ կերպած Համահայեազրով այդ երկրամասերի վրա ամեն հավակեռությունից Հումենի հրաժարվելը եթե բայց էության զնու արարական իրավունքներից զիշում չէր, ապա Հայկա-Համա-Հօմա-Դամասկոս ուղղահայացից արևմուտք ամրաց տարածությունը (Ներառյալ Հյուսիսում Ազեր-առևդրեաց) Հոգուած Ֆրանսիայի արարական պետության կազմից դուրս թողնելը և Բաղդադի ու Բասրայի վիճակի ներում Անգլիայի Հատուկ վարչության հետ հաշտվելը արտքների համազգային շահերի լուրջ ոտնահարումն էր պարզապես:

Հումենի իրեն Ալին թեականարար չէր կարող կռահել, որ Անգլիան մի կողմէից Մակ-Մահոնի միջոցով իր հետ բանակցելով, մշում կողմից և զրեթե միաժամանակ՝ սկզբում արտաքին գործերի մինիստրի տեղակալ Արթուր Նիկոլաոսի, իսկ այսուհետեւ արևելյան Հորցերի գծով փորձագետ Մարկ Սայքսի միջոցով բանակցում էր Բեյրութում Ֆրանսիական զիյավոր Հյուսպանուա Ֆրանսուա Շիրժ Պիկոյի հետ (1915 թ. նոյեմբերի 23—1916 թ. փետրվար) և Խախազարատում Անտանեաի երկրների միջն Օամանյան կայսրության ասիական նահանգների բաժանման շարանենք մի ժրադիր «Մայքրո-Պիկոյի Համաձայնագիր» անվամբ պատմությանը հայտնի արդ գործարքով Ֆրանսիայի ուղղակի տիրապետության առաջ էին գրվելու կրանանց, Արևմտյան Միրիան, Կիլիկիան և Հարավ-արեւելյան Անտուլյան (Կապույտ գոտի), իսկ Արևելյան Միրիան և Մոսուլի վիճակը (Ա գոտի) ենթարկվելու էին ֆրանսիական աղքացության Անդիան իր ուղղակի տիրապետության ներքո էր վերցնելու Անտորեական և Հարավային Իրաքը. Պաղեստինում Հայքա և Աքքա նախահպատերը (Կարմիր գոտի), իսկ իր աղքացությանն էր Անթարկելու Անդրբորդանան ու Բաղդադի վիճակի հյուսիսային մասը (Բ գոտի):

* 1918 թ. Հայքին շարական Ռուսաստանը միացավ Անդիայի և Ֆրանսիայի միջն կերպած զաջութարարական դրամարձին, որին ապա հարեց նաև Խաչիան, Ռուսաստանը հեռ էր թիրեւ Արևմտյան Հայաստան ու Հրահային Թրոգրատունց (Դիօքի գոտի) և իրավունքները՝ Կառասահետապրդը ու հեղուցների վրա, ինչպես նաև Պաղեստինու ուղղափառներին պաշտպանություն հարցում. Խաչիայը ուղղակի անդրապետությանն էր անցնելու Հարավ-արեւելյան Անտուլյան (Կապույտ գոտի), իսկ արևմտյան և հենարանական Անտուլյան (Դ գոտի) հետարկվելու էր յառաջական աշշացությանը. Պաղեստինը առանց Արքայի և Հունիայի (Մըմագույն

Անտանոնի երկրների միջև կերպած խմբերի այլառական գործարքից անանդյան, Հունան իր Ալին 1916 թ. հունիսի 5-ին արարության անկախությունը հայտարարելով զինված ապստամբություն շղթաւագերծեց Թուրքիայի գեմ: Նույն թվի նոյեմբերի 2-ին, երբ հաշիմյան իշխանազումները Ալիի, Արդալյանի, Ֆեյսալի և Զեյդի զինվորները արդեն բակ աղաստագրել էին Ջիզդոն, Յանրոն, Բայ Էլլը, Մերքան, Թափից, Ամիրն ու օմենը, ֆեղալական վերախառնությունիցին հունվարի 15-ին հայտարարվությունը առաջի թագավորություն առաջի թագավորություն, Անգլիան, որ ցանկանում էր Հունանի աշ-Լաշիմիի զինված շարժումը արարական մերակղղուց դուրս ճամփարած ահանել՝ առանց սակայն հաշիմյանների զեկուզար դերի, Ֆրանսիայի հետ համախորհուրդ Մերքանի շերիֆին հարկադրեց բավարարվել ոչիշաղի թագավորությունում:

1917 թ. առաջին կեսին Իրաքում և Սինայի թերակղղում հարարքարար Հեջո Հաղթանակներից Համար բրիտանական զորքերը Դաղայի և Միրզարայի միջև բախմեցին թուրքական բաշլուրմա բանակի Հարգածարքին ուժերի և գերմանական զեղերի ամուր պատճեննեն: Անգլիան Հարկադրվեց սիրիա-պաղեստինյան ռազմական մատուցները բացել ինչպես Էմիր Ֆեյսալի ասպահությունից, այնպես էլ ֆրանսիական դուշի ներքո կազմավորված Արեգելյան լեգենների հայ և արար կամավորների առաջ⁵:

Արար և Հայ զինական ուժերը, բարեմտորեն Համարվություն գաղական և Հայկական բանկախության երաշխիքների ստուգությունը, 1917-ի երկրորդ կեսից զգալի ծառայություն մատուցեցին Պաղեստինի և Սիրիայի ռազմարքմերում զերմանա-թուրքական զորքերի գեմ տարած Հաղթանակներին⁶, որոնց եղանակումը հանդիսացան 1918 թ. սեպտեմբերի 30-ին Ֆեյսալի զինվորների կողմից Դամասկոսի, իսկ Հոկտեմբերի 6-ին՝ Հայկական Յ-րդ գումարտակի մասնակցությամբ Բեյրութի աղատակրությունը:

Դամասկոսի և Բեյրութի աղատագրությունը, եթե մի կողմից նշանագործում էր Սիրիայում և Լիբանանում ուժանյան գարավոր

գործի պիտի գումար միջազգային Համաձայնադրություն ան» „Documents on British Foreign Policy, 1919—1930”, First ser., vol. IV, London, 1947, pp. 241—247.

⁵ Ազգանի շարքերում կային շուրջ 4000 հայեր և 1000 արարեկը լանջավորք, Կահիրե, 1927, էջ 26): Հայքական գումարտակների կազմության և գործունեության մասին ան» Տ. Պայտման, Հայկական լեգեննեց, Առթուրակ, 1955:

⁶ Հայ առաջ, Հայեա, 19.11.1918 թ.:

արքապետության վախճանը, առաջ մշուս կողմից արարենքի Համար սկզբնավորում էր պայքարի մի նոր և նույնագան փոխորդահույզ հանգրվան, որը նոր իրազրության մեջ գասավորելու էր Հայարքական նոր փոխհարաբերությունները:

* * *

Արար աշխարհազորայիններին առաջերդող Հայիմական իշխանաթունները 1918 թ. ապրիլ ամսին իրենց Հար ինքնազրով ու կերպով պատգամ էին ստացել՝ «Հայության Պուրանի ամեն տեսակ ոգնությունը ընձեռնելու տարազրված Հայերին, պաշտպանելու նրանց՝ տիեզերա որ պիտի պաշտպանեիր ձեր իսկ անձն ու ինչը և ձեր իսկ Հարազատներին»:

Արարական թերակղզում թուրքական կայազորների համար իրենց Հայիմականում մաքրելուց հետո՝ Ֆեյսալ իր Հուսեյնի գլուխավորությամբ գեղի Հյուսիսի շարժված ազգաամբները սրբությամբ էին կատարում իրենց վեհապետի Հրահանգը, և Հայարքոր ամեն ինչ անում՝ Հայկական խլակներին մահման ճիրաններից փրկելու համար:

ԵՄեր զաշնակցի՝ Հիշաղի թագավորի քաջարի զինվորները, — պիտիում էր Հայ ազգային պատվիրակության նախաձեռնությունը և Հայասեր ֆրանսիացիների սժանդակությամբ Փարիզում լույս ընծայվող և լուս դր լ'Արմենի («Հայաստանի ձայն») երկարաթիրթը, — Հարավային Սիրիայում և Պաղեստինում իրենց Հայթական առաջազարցքի ժամանակ ազգատապել են տեղահանված բազմահարյուր դժբախտ Հայերի, և արտակարգ հոգատարությամբ նրանց խնամելուց հետո՝ ուղարկել են Ծգիպառուչ:

Արձանագրված փաստն, անշուշտ, ծզակի լիր բնավ, և Փարիզի Հայ ազգային պատվիրակության նախագահ Պաղոս Նոււպար փաշան Հարկ էր Համարում շնորհակալական հատուկ հեռագիր ուղար-

? Համայն թագավորի համակի բնագրը ու.

عثمان الترك، من تاريخ الأمة الارمنية، حلب، 1920، ص 109.
իսկ Հայերն թարգմանությունը՝ ժամանակի, Պայմ, 24.6.1918 թ.,

* „La Voix de l'Arménie“, Paris, 1st année No. 11, 1. VI. 1918, pp. 362—363.

* Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Փարիզում որեմտուայ, բարձրագույն նախաձեռնությամբ առեղծված ՇՊատիրակությունը հոգու ունի Շետակուայի երկրների Հայթականի զնուցու պաշտպանել արձանայիթյան շահերը և ազանգի նրա իրավունքները:

կել արար դորահրամանաստար էմիր Ֆեյսալին։ Որպուց տնօղեկանայսվ Հայերի հրախտագիտական զգացմունքների մասին, Հիշաղի արքան։ Հավասարելուց հետո, որ ինըը թուրքերի զեմ պատերազմ է Հայութարարի ուղև միայն արաբներուն, այլև Հայ ազգին Համար այս¹⁹, անձամբ Հայուղի փաշային Հասցեագրված իր պատասխանում ընդգծում էր. «...ազնություն Հանցենչով հնչվածներին, Էմիր Ֆեյսալը պարզապես մեր կրոնի և արաբների Հավատքի հիմնական պատվերներից մեկն է կատարել։ Վստահությամբ և Հապարտությամբ եմ Հայութարարում, որ Հայ ժողովուրդն ու նույն վիճակի մեջ գտնվող մյուս ժողովուրդները մեր զաշնակիցներն են՝ ինչպես յամ, այնպէս էլ վաստ որերի համար»²⁰։

Հուսեյնի և նրա որդիների (առաջին Շերիֆի՝ Ֆեյսալի) ու Համախոնների²¹ հոգմիջ Հայերին պաշտպանելու հիմնական պատճառը կայանում էր նրանում, որ ի դեմս Հայերի նրանք տեսելում էին գաշխակիցների, ընդհանուր թշնամուն թուրքական բռնապետության դեմ մզվող պայքարում։ Հավանաբար, Հայերի նկատմամբ Ֆեյսալի բարյացակամ վերաբերմունքի մեջ իր դերն է խաղացել նաև այն հանգամաները, որ մասնուկ Հասակում, եղր նա հոր հետ, Արդուս Համիդի կարգադրությամբ, Պոլսում գտնվում էր արտարյալի վիճակում, նրա վրա ցնցող տպավորություն էին գործել 20-ական թվականների Հայկական կոտորածները, որոնց առարկ հանդիսացան նաև առվթանական մայրաքաղաքի փողոցները։ Ֆեյսալի կենացիր էրսկինը, ընդգծելով իր հերոսի Հոգու վրա անթրիբիլ գրոշմ թողած իրադարձությունների պատկերումը, նշում է, որ մոր մահից հետո Հայրը որպես մայրագիր Ֆեյսալին թերել էր իր ազատաբան և Հայասիրական Հայացքներով Հոլակված զորահրամանաստար Ֆուադ փաշայի նույնքան ազատախոն և Հայութ թուուսնուն։ Վերջինիս հաճախ այցի նկող Հայրն ու պապը չեին կարող իրենց փեսայի հետ լրացել զայրայիր խոսք ու զրույց Սամանյան կայսրության վիճակի և Հայկական Հարստահարու-

¹⁹ Հայ Հայեր, 25.11.1918 թ.։

²⁰ „La Voix de l'Arménie“, լ'année No. 11, pp. 362—363.

²¹ Հերացի զանական Հուսեյնի և նրա թողարկեց որդիներ՝ Մերիամի, Համազաւում թագավոր Ֆայտի և Անդրեանց զանական Արդաշանի կազմը միշտ էլ ուրու և է հետեւ Հայության համ նրանց 20-ական սատերացիկ երկրորդ կերպ աշխատու և լու պրոպրումների հայ վերհաջ գործիներու Արդաշանը նույնին մարդկան և Հայկական Հարստահարության տնօղեկան

թյանների մասին, որոնց ուժեղութեա էր լինում գյուրահույզ Ֆեյալը:
Կենսագիրը ընդգծում է, որ 1895 թ. սեպտեմբերին, երբ սաման-
յան յաթաղանք նորից էր գործի անցել, Ֆուադ փաշան՝ որպես Կա-
ղաքայուղի շրջանի պինդորական կառավարի, անդական իշխանու-
թյուններին ամենայն խռովությամբ կարգադրել էր ձեռնուպահ մեալ
Հականայ բանություններից, չեամ ու շատ Հայերի հյանքը փրկած
արդ Հրահանդից հնոտ, — որվազը ևզրափակում է Հրակինը, —
թուրք զորապետն ու իր որդիները ըրլուզի պալատում որշացած
Համիդի ալթից ընկան ու նույնիսկ հնուագայում նրանց հյանքը
Հաճախ վատանգիների հնթարկվեցա¹²:

Պատանեկան տարիներն անցկացնելով պոլսական մինուր-
տում, որ ինչպես Ֆուադ փաշայի և շերիֆ Հուսեյնի, այնպես էլ
իր Համար ուիթեն էր վտանգներով և անորոշաւթյամբ ու ոգիզա-
նագիտության նախապիտակիրները ձեռք բերելով իրեն շրջապա-
տող Հանգամաներներից, Ֆեյալը նրիամբուրքական հօգաշրուուից
հետո հույսից հետ իր Հարաբերությունները էլ ավելի խորացնելու
առիթ ձեռք բերեց սամանյան պատվամենում, որակ նա, հզրու՝
Արդալյանի հետ ներկայացնում էր արարական թերակղզու Ջիզա
և Մերքար բևակավայրերը¹³, ով մինչ ավագ եղբայրը իր ժայռանեղ
Հակումներով ավելի շատ էր առնչակցվում արկածախնդրություն-
ների մեջ փակ աշքերով նետպող Հայ գործիչների հետ, Ֆեյալը
Հակումն էր կայսրության շրջանակներում բարենորոշչական ակրե-
կալություններ հետապնդող մտագորականների կողմբ Տեղին կի-
սի ասել, որ Ֆեյալի զաղագիւրակիցների տեսակետներն էին, որ
Հայֆանակեցին 1913 թ. հունիսին, Փարիզի Արարական կոնցըն-
սում, որի ընդունած բանաձեկի Տ-րդ կետը ուր համակրանքն էր
Հասցեագրում թուրքահայերի բարենորոշչական պահանջներներ¹⁴,
փոխադարձաբար արժանանալով սամանյան պատվամենակ Հայ
երեսփոխանների համակրանցին¹⁵,

Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին, մի կող-
մից Ջեմալի Հակաարարական ունիների ազգեցությունն ներբու և

¹² S. Erskine, King Faisal of Iraq (An authorized and authentic study), London, 1933, pp. 25—27.

¹³ Խոյք տեղում, էլ 26, 29.

¹⁴ Z. N. Zetina, Arab-Turkish Relations and the Emergence of Arab Nationalism, Beirut, 1968, pp. 135—136.

¹⁵ Հ. Ազգայան, Արարական ազգային-ազգայացունենական պարթեզը, Գյուղը, 1959, էլ 14.

մյաւ կողմից Հաշիմյան քեռալական տան՝ դեպի Հյուսիսի արարական երկրամասերը ժավարվելու հեռանկարի դրդմամբ, Ֆեյալի բորբնորոգական ակնկալությունները աստիճանաբար գոխակրոգեցին ուժեղ հավատքի, որ միայն զննցի ուժով Սամանյան կայսրության խորտակմանը նպատակն էր կարծի կլինի հասնել թէ՝ արարտների աղջոյին իդձերի իրականացմանց և թէ՝ սեփական տոհմի միականիրական եռանդի հագեցմանը:

Եվ այժմ, երբ պատերազմն ավարտվել էր Հաղթանակով, Ֆեյալը մասրում էր միայն ու միայն արարտների աղջոյին անկախությունը Հաշիմյանների զիյավարությամբ երազանցից իրականություն գարձնելու ուղիների շրար, որոնց հանգուցված, թեկուզ դեռ աւարտամ, մի արաբէտ հա եշմարում էր Միրիայում հայ գաղթականների բազմաւաղարանոց զանգվածի առկալության փաստի մեջ:

Եշմէր, որ Ֆեյալը իր անմիջական գործակիցների շարքում ուներ իրնեց Հայաստիրությունը լթարցնող մի շարք աղջեցիկ դիմքեր, որոնք ոչ միայն յանում էին հայ տարագիրների նկատմամբ արար ժողովրդական խավերի վերաբերմունքը էլ ավելի հատկացնել ու շերմացնել, այլն իրնեց զեկավարի նման փայփայում էին Հայկական պատկառելի զանգվածը արարական աղջոյին ձգումներին հնեարան զարձնելու ծրագրեր, Նրանց թվում էին Ֆեյալի մերձավորագույն խորհրդականները՝ կրթական նախարար Սատհեղ ալ-Հուսեին (որ միշտ եղել էր թուրքական լուծը թուրթելու համար Հայ-արարական Համազորժակցության շատագովներից)¹⁷ և սիրիական թագի Հավակնորդի անձնական քարտուղար, ռջարդերը Հայաստանում՝ Հանրահայտ զրքի հեղինակ իրավարան Ֆայէ ալ-Ղուսեինը, Նրանց թվում էին Հայեակի շրջանի կառագործի նշանակված Շուքրի ալ-Ալյուրին (Մազրիկյոյի նախկին կառուվարից), որ Պոլսում սամանյան բանկի զնաքի օրերին շատ հայերի կլաներն էր փրկել¹⁸ և Դամասկոսում զգալի հեղինակություն վայելող քաղաքական գործիչ Հաշիմ ալ-Ալթասին (որ մինչ պատերազմը Հաշիմնի պայմագամի և պատերազմի արքիներին Պուրառի մութասարիֆի պաշտոններում Հանախ էր դեմքնթաց զնացնել հակառակական բռնամիջոցներ հաւշող երիտրոքական կարգագրու-

¹⁷ Բայց այս է զիայտկաշել Նրա աշխատաւթյուններից մեկը:

البلاد العربية ودولته العثمانية، بيروت، ١٩٣٠:

¹⁸ ՀՀ Հայաստան, 30.12.1918 թ.

թլունեաբին): Նրանց թվում էր նաև գեղ ծրբառապրդ, բազմաշնորհ Ծմար Յախուրին, լիրանեայան նոր զրականության ապագա Հիմնադիրը, որ Յեշուալի կողմից շար-Ասիմայ պաշտօնաթերթի խըմբագրման համար Թեյրութից հրավիրվելով Դամասկոս, այդ և ուրիշ թերթերում (հատկապես շար-Հակիկաց-ի էջերում) հաճախէ հանդիս ճիկի Շնամուկրառ իրաւուց ժամկոնեռնով՝ հայ գաղթականության սրտապնդելու և արարենքի նկատմամբ հայության բարեկամությունը խորացնելու քարոզով:

إن تاریخ میافارقین لابن الأزرق الغارقی المؤرخ العربي نموذج في میافارقین (ولاية امروز نيك الارمنية) في القرن ١٢، لم ينشر حتى اليوم. تاریخ میافارقین موجود في مخطوطتين بالمتحف البريطاني، ولم ينشر منه سوى بعض المقططفات التي بحثت من قبل لـ. أمدروز ومن ثم دـ. كاتاروف، مینورسکي وـ. قزبروتيلی. وأخيراً به عرض. كان الغارقی موجوداً في العديد من مناطق أرمينيا و جورجيا. ولذا فهو شاهد عيان ومعاصر لكثير من الاحداث التي تتس صورها، من الأهمية يمكن تلك المعلومات التي ذكرها عن الاحداث والمعارك التي وقعت في شمال ارمينيا في النصف الثاني عشر بين مختلف طوائف الاقطاعية في دوليات الارمنية، وبالاخص عن العرب التي خاضوها لاحتلال العاصمة آنکي.

وقد أرتفق المقال بترجمتي أمدروز و مینورسکي و قزبروتيلی للملحوظة المنشورة.

ԱՐՄԵԱԿԱՆ ՄԻ ԸԱՐԳ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ
ԱՐԱԲԻ-ՔՈՒՐՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ*

№ 1

ԹԱԽՐԵՐԻ ԿՈՎՄԻՑ ԱՄԻԱԼՎԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ
ԲՈԼՈՐ ԺԱՎԱՔԱՑՄԱՆԵՐԻ
(1905 թ.)

«Այս հիմքով հայրենակիցներ...»

Մեղնից լուրջաբանվագը ամեն պահ կարող է Հաստատել-
ին արար բազարացու հպարտ և փոռավոր կոչումը որքան արա-
տավոր և արգանատելի է գարձել բոլոր տարերկրացիների և հաշ-
կապեա թուրքերի մոտ։ Ամեն ոք տեսնում է, թե ինչ աստիճանի
թշվառության և տղիտության ենք հասել ասիական կենտրոններից
եկած այս բարբարուների բռնակալության ներքո։ Մեր երկիրը,
որ աշխարհում ամենահարուստն է և ամենազնիկցիկը, ամայի է
և անծշակ։ Երբ մենք դեռ ազատ էինք, հարյուր տարուց էլ պակաս
ժամանակամիջոցում նվաճեցինք արևելքն ու արևմուտքը, ամե-
նուրք տարածեցինք զիսություն, գրականություն ու արվեստ և
երկար դարերի ընթացքում ուղղություն էինք տալիս աշխարհի քա-
զարակարթությանը։ Բայց այն ժամանակներից, երբ էրառուցից
հանուրդները բռնադրավեցին իսլամական խալիֆայությունը,
ազնիք լավ շահագործելու համար նրանք մեզ այն աստիճան
քթացրին, որ դարձանք աշխարհի ամենաթշվառ ժողովուրդը։ Մեզ
պառակածելու համար թուրքերը խառնակլություններ են հրահրում
թեյրութի բրիտանիա և մուսուլման ավագակների միջև։ Նրանք

* Կազմեցին, թարգմանեցին և ծանոթագրեցին Հ. Ս. Սարգսյան և Ա. Հ. Թո-
վույանը։

անկարգությունները վերապրում են կրոնին, որը ժխտում է զրանք, որպեսզի հեռու պահնեն մեղ ամեն մի մերձակցութիւն և հավատացնեն նվազալին, թե մեր գծախտ հայրենիքում անհնար են բարձնորոգումներն ու լավ վարչությունը:

Տերությունների աշխատ այդ միայն մենք ենք, որ կազմում ենք թուրքերի ուժը. մենք ուսւթանի կայսրության ամենամեծամիջն և ամենաքաշ էթնիկական զանգվածն ենք, այդ մեր միջոցով է, որ Արդույ Համիդը ալրանացիներին պահում է իր իշխանության տակ, և այդ ալրանացիների միջոցով է, որ նա չախշախում է մակեդոնացիներին. Խմանապես այդ մեր միջոցով է, որ նա ճնշում է քրողերին, և այդ քրողերի միջոցով է, որ նա կռառում է Հայերին. Այդ սիրիացի մեր զինվորներն էին, որ կանզնեցրին սումներին Կարսում և Գյանեայում այն ժամանակ, երբ թուրք զններալները ծախսեցին ցարի գործակալներին. 40000 սիրիացիներ իրավակի փառացի ղեկավարությամբ շախշախնեցին 120000 թուրքերի Մարդունում այն ժամանակ, երբ թուրք ծովակայր դավաճանում էր Ալեքսանդրիայում իր փաղիշահներ և եգիպտացիներին էր հանձնում ամրող նավատորմը, որի հրամանառությունը էր ինքը:

Հետզանդությունը մեղ մզեց, ի շահ թուրքերի, մինչև իսկ Հառուցանի մեր գրուդ և նմենի մեր արար եղբայրներին կոտորելու, փոխանակ միանալինք նրանց, փշրելու համար ստրկության մեր շղթաները:

Այդքան ժառայություններից և Խվիրվածությունից հետո, այս ավագակները մեղ ինչպիսի փոխառուցում տվեցին նրանք մեղ արհամարհանցով անվանում են տփիս արար (կեղոսոս արարներ), մեղ հետևզականորնեն հեռու են պահում բոլոր բարձր պաշտօններից և անխնա շահագործում:

Արարական հահանգները թուրք և չեղքեղ կառավարողների համար երկրային գրախտ են. մեղ մոտ զալու համար նրանք նախապարհատախմար պարու են անում և շուտով վերազառնում են միլիոններով, որ մեզնից խլել են առանց խիզը ու խղճանքի: Երբեք որնէ թուրք կառավարող լի կարողացել անպատճ կերպով թուրքերից, թրգերից և ալրանացիներից ինչ-որ գումար խլել:

Այդ գեռն մենք ենք մատակարարում կայսրության բյուզենի երկու երրորդը և փաղիշահի գերատեսչության բյուզենի շորս հինգերորդը: Համեմատեցներ, թե տասանորդները ի՞նչ շափով ներցնում արարական երկրներում և այլ նահանգներում՝ Ալրանիայում, Թրքատանում և այլուր, և դուք կտեսնեք, թե թուրքերը մեղ ինչքան են արհամարհում և ուրիշներին հարցում:

Այդ նմանապես մեր Հայրենիքում է, որ Արդուկ Համբիկը Հագուս իր անձին բռնապրավիլ է ամենաշատ հողատարածությունները, Հորդանանի ողջ Հովիտաց, Սփրատի Հովտի երեք քառորդը, Տամասկոսի դաշտավայրի մի մասը և այլն, և այլն, մի խոսքով, իրան է պատկանել այն, ինչի համար նա տակը է՝ դրանք իմն են, նու նախկին տերերին ոչինչ չի կոխուա-տացել:

Ի՞նչն է մեր բաժինը այս ընդարձակ կայսրության մեջ, որին մենք զորավիր ենք կանգնելու Թշվառությունը, ազիտությունը և Ընշումը:

Այդ հելացն է, որ Թուրքերի իշխանության վլուխ անցնելուց ի վեր ոչ մի արար արժանի լին Համարվել լինել Շեյխ ուշ-Խուամ, մեծ վեղիր, մինիստր, մարշալ, գեներալ, գեղապետ կամ նահան-դի կառավագարիչ:

Խոշո՞ւ ենք մենք Հետևողական կերպով Հեռացված քիչ թե շատ կարևորաթյուն ունեցող պաշտոններից:

Թող ձեզ շշլացնի այն բարեհաճությունը, որից այս պահին սպավում են Արուկ Հուկան, Իդեթ ալ-Արիդը և Սելիմ Մալհամեն, Սրանք միայն սովորական և գոհեցիկ լրտեսներ են, որոնք իրենց Հերթին լրտեսվում են թաթարների և շերքեզների կողմից, որոն-ցով իրան շրջապատել է Արդուկ Համբիկը: Այս գժբախտների տեսլու բախտը մի սարսափելի տանշանք է, Բունակալը վախճնում է, որ այս արարները կվերադառնան իրենց երկրները և կդառնան ազ-գային շարժման նախաձեռնողներ:

Թաշալերված մեր ստրկամտությունները, Թուրքերը այսօր հա-վակնում են ստրկացնել արար ազգի անկախ Մասցած բոլոր ցե-ղերին: Հնաց Հառուրանը, Նմենը, Իրաքը և Նեշղը ենթարկելու մատ-դրությամբ է, որ նրանք ուզում են կառուցնել Բաղդադի և Հիջազի երկաթուղին: Եվ այն, ինչ ազիլի ստորացուցիչ է, որ այն է, որ արդ բանում երանց օգնելով մեր գողով և գործուենությամբ, մենք ինքներս ենք պահում մեր սեփական ստրկության ղղթաները: Եթե այս երկաթուղիների կառուցումը վերջացած կլինի, Թուրքերը մեզ կժառացնեն մնշնուու համար իրաքն ու Նմենը և այս երկու եր-կրքներին էլ կժառացնեն մեզ իրենց լծի տակ պահելու համար:

Համոզված լինելով, որ շուտով իրենց վերջացալից կվանգին, և որ Հայաստանը իրենց ձեռքից դուրս կգա, նրանք մեր հաշմին ուզում են առեղջել մի ուրիշ կայսրություն, որը նրանց ազա՞ն ձեռ-քերում չի ուշանա դառնալ ստարերկրացիների զո՞ր:

Այդ մեր սիրելի հայրենիքը բոլոր լարիքներից փրկելու և նրա ազատությունն ու վաղուցքա փառքը նրան վերադարձնելու համար է, որ մենք հիմնել ենք ԵԱՀԱՐԱԿԱՆ հայրենիքի լիգաներ, որը շնորհամենը մի քանի ամսում մեծ առաջադիմության է հասնի. Մենք արդեն կոմիտենքը ունենք Պազհատինի, Սիրիայի և Միջազգային բոլոր մեծ քաղաքներում, ինչպես նաև նգիպառասում և նվրապարամում. Բոլոր լուսավորչաւ մեծ տերությունները միաձայն հավանություն են տալիս մեր շարժմանը և մենք կարող ենք վստահ լինել երանց համակրանքին:

Ահա մեր ժրագիրը.

Մենք ուզում ենք ամրողապին ազատվել Բուրբիոյից և հիմնել արարական կայսրություն, որը կընդողութիւն իր մեջ բոլոր ասիստենտ-արարական երկրները, տարածվելով իր բնական աանմանեներում. Տիգրիսի և Նիղրատի հովտից մինչև Սունգի պարանոցը և Միջնականից մինչև Օմանի ժողով:

Կառավարման ձեր կլինի լիբերալ սահմանադրական և առաջադիմական միապետություն, Մեր առաջնորդը կլինի որպար և մուտքման:

Մենք Հիշապի վիրայնթից, Մեղքնաւոյից և նրա շրջակայթից մինչև Ակարացի ծոցը կկազմենք մեր կայսրությունից անկախ մի ուրիշ կայսրություն, որի առաջնորդը լինելով արար, միաժամանակ կլինի Խոլամճի համբնդանուր խայիթը:

Մենք կհարգենք Լիբանանի ինքնավարությունը, Պաշնտինի քրիստոնեական առնորների և Ծմենի, Նեշդի ու Իրաքի անկախ իշխանությունների status quo-ն. Մենք արար պաշտոնակարին կթողնենք իրենց պաշտոններում, նրանց համար կսահմանենք քավարար աշխատավարձ և կապահովենք մի պատվազոր թոշակով: Ջինվորական ժառայությունը կլինի ծրիու տարով: Վակինների նկամուտները կժախսվեն վակինների համար,

Սուլթան Համբդի անձնական սեփականությունը կրածանվի նրանց միջև, ովքեր կնպաստեն արարական հայրենիքի փրկությանը: Անմշակ Հողերը կեցվեն մերձակա գյուղերին:

Մենք ընդհանուր ներում կշնորհենք բոլոր քաղաքական քանտարկայիններին առանց խորության, ինչպիսին էլ լինի նրանց պատիժը:

Այս հոյակապ նախագիծը իրագործելու համար պետք չէ ոչ մի կաթիլ արյուն: Անկախ զանալու համար քազական է, որ մենք այն ցանկանաք: Խշքա՞ն թուրք կա արարական երկրներում: Նրանք ամենաշատը 500—600 են, իսկ մենք՝ 12 000 000.

Մենք ամեն ինչ մտածել ենք, ամեն ինչ պատրաստ է ազա-
տագրական շարժման համար։ Մեր սիրելի Հայրենակիցներին, ուն-
կախի կրոնական համբարձումքներից, մենք խնդրում ենք միայն
պահպանել հանգստություն և շղիմի ոչ մի գործողության, որը կո-
րող է պատճեռության վառակ բոլորի կամ օտար անբարեթաների ներ-
խուժման, և վասա՞ռին ապագինել արար կառավարիչներին,
որոնք կփոխարինեն թուրք վայիներին և մութասարիթներին։ Մենք
նույնու կպատվիրներ մեր քաջ և խեղա զինվորներին։ Թող նրանք
հարցին իրենց արար սպաներին, որոնք նշանակված երը կփոխա-
րինեն չերքեղական զերապետներին և գենրալներին։

Մենք նմանապես մեր թուրք Հայրենակիցներին խորհուրդ ենք
տալիս այլևս իրենց հողատարածությունները լվաճառել ստար-
երկրացիներին լւջին գներով, քանի որ երբ ազատ զանակը, հո-
գային ռեփականությունների արժեքը կբարձրանա 400%-ով։

Ինչ վերաբերում է մեր մեջ ազգու թուրքերին, ապա մենք
նրանց հետ կմարզներ եղբայրաբար, եթի նրանք միանան մեզ, և
թշնամարար, եթի նրանք գործեն ծրագրով հրոսակախմբի օգտին։

«Արարական Հայրենիքի Արդա-
րշավոր Կոմիտե»

Eugène Jung.

Les Puissances devant le révolte arabe. La crise mondiale de demain,
Paris, 1906, p. 24—29.

№ 2

«ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԱՐՒՆԵՐԸ ԱՐԱԲՆԵՐԻՆ»

Նիւռայի և Հյուսիսային Ամերիկայի բաղաբակիցր, լուսավորյալ
և մարդասե ազգերին
(1905 թ.)

«Թուրքիան զանվում է խաղաղ Հանապարհով տեղի ունենալիք
մեծ փոփոխության նախօքեին։ Արարները, որոնց թուրքերը բռ-
նակում էին նրանց երկարուսկելով կրոնազավանական ունշան
հարցերում, պիտակցել են իրենց ազգային, պատմական և ազգա-
գրական միասնարությունը և ցանկությունը են անշատվել սամանի
փուած ծառից՝ միավորվելու մի անկախ պետության մեջ։

Արարական այս պետությունը պիտի տարածվի իր ընտ-
կան ուշմաններում։ Տիգրիսի և Ոփրատի հովարից մինչև Սունջի

շրանցը և Միջերկրականից մինչև Յամակի ժող. Այս պիտի կռառվարմի արար մի ռուլթանի սահմանադրական և լիրերալ միապետության կողմից:

Հիշողի այժմյան վիլայեթը, Մեղքեայի երկրամասի հետ պիտի կազմի անկախ պետություն, որի վեհապետը միաժամանակ պիտի լինի բոլոր մահմեդականների կողմանական խալիֆը (կրոնակապետը):

Այսպիսով, ի շահ բոլորի, յուժված պիտի լինի մի մեծ գծվարություն. քաղաքացիական իշխանության բաժանումը կրոնականից:

Մենք պիտի հարգենք մեր երկրամ ներկայում ժառայող բոլոր ռազմակրաքացիների շահներ և այն բոլոր կոնցեսիաները, որոնք այսօր թուրքերի կողմից արձել է նրանց: Մենք նույնպես հարգելու հեր լիրականի ինքնավարությունը, Պաղեստինի պրատեղերի, Ամենի և Պարսից ծոցի անկախ իշխանությունների գոյավիճակը:

Ու մի պարզեցա և ուզզամիտ մարդ լի կարող հակառակվել այս բարերար շարժմանը, որը հսկայուկան շուկա է բացելու, միշտագոյն առնորին և նվրոգական կապիտալներին շահարկման մեջ և ձեռնուու հարավորություններ է ապահովելու:

Թուրքիայից մեր արաւման փաստի շնորհիվ, Շնչված բոլոր ազգերը՝ թղթերը, հայերը, այրանացիները և այլն իրենց տղառությունը պիտի ձեռք բերեն, քանի որ արարեների միջոցով է, որ սահմանարում են այրանացիներին և այրանացիների ձեռորդ է, որ ճզմում են բուրգարներին: Դարձյալ արարեների ձեռքով է, որ նրանք նեշում են թրգերին և քրգերի ձեռքով է, որ շարզում են հայերին: Հետևաբար, հենց որ մենք լինենք ռուլթանին, ամեն մի ազգ պիտի իր անկախությունը հռչակի և աշխարհը պիտի փրկվի երկպառակության այն աղբուրից, որը արնելյան հարց է կոչվում:

Մենք խնդրում ենք պետություններից մեզ համար ոչ մի զուղություն լկատարել, ոչ էլ ի նպաստ մեզ զինվորական որեւէ բարձր դիմել: Մենք նվրոգայի և Հյուսիսային Ամերիկայի լուսավորյալ և մարդասեր պետություններից խնդրում ենք միայն իրենց շեղորությամբ նպաստել մեր շարժմանը, քաջալերել մեզ իրենց համակրանքով, իսկ մենք պիտինք մեր սուրբ և փառապանծ զործը իրավաբարին հասցնել:

Մենք 12 միլիոն արարեներ ենք, Շնչված թուրք և շերքեղ մի քանի հարյուր պաշտոնատարեների կողմից, որոնք պատրաստ են

իրենց գաղթահրեն զավանանելու՝ Հենց որ զգան թե մենք ավելի զարավոր ենք»:

«Արտական Հայրենիքի կրօն
Դյավոլոր Կոմիտ

Eugène Jung, Les Puissances devant la révolte arabe. La crise mondiale de demain.

Paris, 1906, p. 22—24.

№ 3

ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ԿԱՆԱԿԱՐՉՈՒ ՆԱԽԱՌԻ, ՕԳՆԱԿԱՆ, «ԱՐԱԲ
ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՐԹՈՒԹՅ ԱՍՏՎԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻՒՄ», ԴՐԵՒ
ՀԵՂԻՆԱԿ ՆԵԶԻՐ ԱՃՈՒԹԻՒ ԱՄՄԱԿԸ «Լ' ARMÉNIE» ԹԵՐԹԻ
ՀՐԱՄԱՐԱԿԻՑ ՄԻԱՍ ԶԵՐԱԳՆ»

Փարիզ, 1902, ապրիլ 22

«Միքայել Հրատարակիլ

Ձեզ և Ձեր զանշատելի թերթի հետ կառ հաստատելու համելի պարտականությունը ստանալով, ես ապագիտում եմ Ձեր համակցրանքին, Հույս ունենալով, որ օգծելու եք ինձ՝ տեղադրելով Ձեր թերթում այս մի քանի տողը, որով ցանկանում եմ հրապարակուն տրամադրել իմ շնորհակալությունը Ձեզ և Ձեր աշխատակիցներին այն խանդավառության համար, որով դիմավորեցիք արարենքի Հայրենիքի զարթունքը և այս վեհանձն կամպանիայի համար, որ բարեհանել եք ձեռնարկել ի նպաստ մեր ազգային շարժմանը:

Խույն շնորհակալությունը հղում եմ ձեր բոլոր Հայրենակիցներին, որոնք հիմք ունեն կարծելու, նույն զգացմունքն ու Համակրանքն ունեն մեր հանդեպ:

Թաքարար առաջարկելով ամբողջ ուժով օժանդակելու արարենքին թուրքական պետության դեմ, մյուս կուսակցություններից տուզ Հայերը մի անգամ ես ցույց տվեցին, որ զիտակցում են մեր քննչանուր շահերը, նրանք նույնպես ցույց տվեցին իրենց արժանիքը մյուս ազգությունների համեմատ, որոնք օսմանյան կայսրություն կոռզված այդ անհնակողական կառավարության ճնշման տակ են գտնվում գետ։

Այս արժանիքը գեռնա բավականին մանաշված չէ, իմ կարծիքով այդ արժանիքը կարանում է նրանում, որ Հայերը չեն վախեցել տասը տարի տառա արթեացնելու իրենց ազգային զգացմունքը ասիսկան ժողովուրդների մեջ թուրքա-շերքեղական բռնակալության դեմ, այնպես, ինչպես Հույները 19-րդ դարի սկզբում

Համարձակություն ունեցան ազգանշան տալ բարկանյան ժողովուրդներին ազատազրկելու քմանան փաղիչաների դաժան բռնակայությունից: Եվ թուրքերը երբեք չեն կարող շարգիրի մեջ խեղդել Հայերի որինական ձգումները, ինչպես նվազապայի, Ասիայի և Աֆրիկայի միացյալ ուժերը չկարողացան խեղդել Համական ապրաւամբությունը, որի բարիքները տարածվեցին ամբողջ Բալկաների վրա: Հայ հերոսների արյունով թրչված Հողից բարձրացել են նրան մեծ հսկաներ՝ քրդերի Հայրենիքը և արարտների հայրենիքը, որոնք հիմք բարձրացնում են իրենց ծանր մահաները, իշեցնելու համար բռնակայի զբանի:

Հետևաբար, պետք է հասկանենք և հասկանանք իրար և պետք է միանանք համակիցներու համար ցնդհանուր թշնամու զեմ, որը այնքան շատ օգտվեց մինչև հիմա մեր անհամառայինությունից մեզ առանձին-առանձին շախուզակելու համար: Նա Ալբանիայի, Մակեդոնիայի, Հայաստանի, Հայութանի, Նեղդի, Նմինի և Հիդայի հեղափոխական տարրեր ուժեր մեկը մյուսի դեմ կանգնեցրեց: Այսպիսով, ոչ մի ազգ Թուրքիայում չի ցանկանում այնու սուրուկ լինել, քանի որ բոլորն էլ ապստամբվել են մեկը մյուսի հետեւց: Իրար յ՛հականալին է նրանց պահում առելի լծի տակ: Բայց այսոր արարտկան բոլոր նահանգները միացած են նույն Հայրենասիրական զգացմունքով, մեկ զեկավարության տակ: Հայերը արդին միացել են մեծ հաս: Ուրիշ խմբագործները նույնպես միանում են մեզ և ազատազրության որը այնքան հնուու չեն, որքան կարծելու:

Նեշիք Աղուրի

«L'Arménie», Paris, 15 ապրիլ 1905.

№ 4

ԱՊԱԿԵՆՏՐՈՆՆԵԼՄՐԱՆ ՍԱՀԲՈՒԽԵՔՆԵՐԻ ՎՐԱ ՀՄԻՆԱՍ ԲԱՐԵՓՈԽԵՌՈՒՄՆԵՐԻ ՄՐԱՎԻՒԹ (1913)

«Բեյրութի, Հայեակի և սիրիական Տրիպոլիի վելայեթների խորհրդարքներից յուրաքանչյուրը բնորոշել է արարտների կողմից պահանջվող վարչակարգը: Խոսքը վերաբերում է ծայր աստիճանի հասցված ապահնարկնեցմանը, բնդուուղ մինչև ինքնավարությունը, Պահանջվող զիխավոր կետերն են.

3. Արարտներն ընդվյա նաև աշխատ որպես նահանգի պաշտօնական լիզու բոլոր գրասենյակներում և գատարաններում, թուրք-

թենք թողնելով սրբն պաշտօնական յեզու Ստամբուլի հետ պացության համար:

Թեյրութի նահանգային խորհրդի կողմից ընդունված գրագրի նախագծում պահանջվում է նույնպես, որ արարերեն յեզու ընդունվի նաև երեսփոխանական ժողովում և ծերակույտում:

2. Որպես Հաշորդ քայլ Միրիայում պետք է նշանակվեն միայն արարերեն յեզու իմացող պաշտոնյաններ:

3. Թաղարացիական և զատական պաշտոնյաներին, ինչպես նաև ժանգարմերին սպաներին նշանակելիս ուներ է հաշվի առնել տեղական իշխանությունների կարծիքը:

4. Նրանազմի, Դամասկոսի, Թեյրութի, Հայեադի և այլ նահանգներում արձակված վճիռները քննելու համար պետք է սահմանվի վճռաբեկ գերազույն առյան: Ներկայումս վճռաբեկման բայոր հարցերը քննում են Կոստանդնուպոլիսում:

5. Խաղաղ ժամանակ զինվորական ծառայությունը պետք է լինի ռեգինոնալ:

6. Խանգանյային եկամուտները պետք է բաժանվեն երկու կարգի:

ա) մաքսատների և փոստ-հեռագրական եկամուտների ու պիտուրական տուրքերը պետք է գրվեն կնեստոնական կոռուպտության արամադրության ներքո:

բ) մեացած բոլոր հասուլիները պետք է գրվեն տեղական կառավարության արամադրության ներքո՝ հոգալու նահանգի կայիրեները:

7. Պետք է ստեղծվեն վիլայեթների խորհուրդներ:

Նրանք պետք է ունենան վարչական և որոշ լափով նաև օրենսդրական լայն իրավունքներ:

Բացի կենտրոնական կառավարությանը թողնվող ընդհանուր քաղաքականության և ազգային պաշտպանության հարցերից, բայց հարցերը կորվեն նրանց իրավասության տակ:

8. Ժանգարմաններին, ոստիկանությունը, արգարադատությունը և ֆինանսները վերակազմենու համար պետք է նշանակվեն օտարերկրացի խորհրդականներ: Նրանք պետք է նշանակվեն 15 տարով և ըստրվեն տեղական սահմուրությունները և արարերեն կամ թուրքերեն լիզում իմացող համապատասխան համապետներից:

(Թեյրութի, Հայեադի և սիրիական Տրիստանի վիայեթների խորհուրդներ):

ՓԱՐԻԶԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ*
 (1913 թ., նունիսի 18—23)

1. Չափազանց անհրաժեշտ է Հայան ոճքորմները սամանական կայսրության համար և նրանք պետք է իրագործվնեն արագ կերպով:

2. Միանգամայն թույլատրելի է, որ արարենքը սպավեն իրենց երաշխավորված քաղաքական իրավունքներից և գործեական լաւագցություն ստենան կայսրության կուռովարմանը:

3. Արարական յուրաքանչյուր նահանգում պետք է ստեղծել ապահովագույն վարչություն, որը զբաղվիր է նահանգի զարգացման հարցերով:

4. Անդրութիւն նահանգը 1913 թ. հունվարի 31-ին ներկայացրել էր միամայն ընդունված իր պահանջները՝ հասուն ժամանակով, որը հիմնվում էր երկու պլիսավոր ակզեռունքների վրա—պլիսավոր խորհրդի իշխանության ընդունակում և օսմանյան պետության կողմից առարկերյա երկու խորհրդականների նշանակումը որպես այդ պետության պաշտոնյաների:

Կոնգրեսը պահանջում է կենսագործել այս երկու պահանջները:

5. Արարերեն յեզուն պետք է հարզվի սամանյան պառամենտում և պառամենտը պետք է հաստատի արարերենը որպես պաշտոնական յնդու արարական նահանգներում:

6. Զինվորական ծառայությունը կատարվելու է տեղում, արարական նահանգներում, միայն ժայռանձն անհրաժեշտության գնացքում այդ ծառայությունը պետք է կատարվի նահանգներից զուրո՞ւմ վայրերում:

7. Կոնգրեսը ցանկանում է, որ օմանյան բարձրագույն կառավարությունը կիրականի մութասարիֆությանն ապահովի ֆինանսական միջոցներով:

8. Կոնգրեսը հավանություն է տալիս և իր համակրաքը է արտահայտում Թուրքիայի հայերի պահանջներին, որոնց հիմնված

* Կոնգրեսը հրավիրվել էր Փարիզում 1913 թ. հունիսի 18—23-ը, ոնրիտառը արարերեն նախանձենությամբ: Նրան մասնակի էի Շնչալարքաջայտ, մինչուրի ռեփրենտերի լիգայից և Ամերիկայուն գրեթե Շնչարքայական միության 24 պատգամավորներ և 200 հյուրներ:

ճեւ ապահենարոնացման սկզբանեցների վրա և նրանց պատվիրակի միջազգայի ողջույն է ՀՀում նրանց. Կոնգրեսը ողջունում է նաև նրացին:

9. Այս որոշումները հազորդվելու են օսմանյան կառավարության մասին:

10. Այս որոշումները հազորդվելու են նաև եվրոպական կառավարություններին:

Կոնգրեսը շնորհակալություն է Հայունում ֆրանսիական կառավարությանը որտարաց հյուրասիրության համար:

Հավելում որոշումներին

1. Եթե շնորհագործվեն այս որոշումները, որոնց հավանություն է ավելի կոնգրեսը, ապա արարական ուժորմների կոմիտեների անդամները առանց այդ կոմիտեների հասուն համահայության, կհրաժարվեն օսմանյան կայսրություն մեջ որևէ պաշտոն գրավելուց:

2. Այս որոշումները քաղաքական ժրագրեր պետք է Հայեցիաման օսմանյան արարական համար և պարզամենուական ընտրություններում նրանք կարող են աշակեցնել ամեն մի թիկնածուի միայն այն գեղարքում, եթե նա պարտավորվի պաշտպանել և կինսագործել այս ծրագրերը:

3. Կոնգրեսը շնորհակալություն է Հայունում վարանդիներին՝ նրանց Հայրենականիքին և Հայրենիքին օգնելու համար:

احسان هندی، کفاح الشعب العربي السوري ۱۹۰۸—۱۹۴۸، دمشق،

۱۹۷۷، ص ۲۰۱—۲۰۲

Իշտան Հինգի, Սիրիայի արար ժողովրդի պայքարը, 1908—1948, Դամասկոս, 1962, էջ 201—202.

№ 6

ԿԱՀՐԱԲ

ԵՐԶԱԲԵՐԱՆԱԼ № 403

27 ԹԱՄՄՈՒԹՅՈՒՆ, 1332 թ.

(20 օգոստոսի, 1914 թ.)

Խմաստում և մեծապատիվ Սեյիդ էֆեզի Շուքրիին՝
պատիվ և խոնարհանք

Այս օրերին, երբ Համաշխարհային պատերազմի հրդեհը այրվում է վառ բացով, Հայրենիքն իր որդիներից մեծ զաներ է տպա-

¹ Արարական ազատագրական շարժման ականչ գործիչներից մեկն էր:

սում: Համաշխարհային հրդեհը կարող է կայծ գցնլ Արևելքում և բորբոքի նրան. այդ ժամանակ մեղավորները կխառնվեն անմեղ-ներին՝ թուրքերը արարտներին: Հարկավոր է Հիշել, որ եթե Հակա-ռակ բոլոր սպասումների, կառավարությանը² մոնիք այդ մեծ պայ-քարի մնջ, նա կը յուժի իր վերջին ուժերը և կկործանվի. Ծիկ պա-տերազմը ավարտվի Անտանատի Հաղթանակով, ապա կառավարու-թյան կործանումը այս դեպքում կիրակ ավելի հավանական, իսկ դա Ռուսաստանի Համար կՇեշտացնի Արևելյան Հարցի լուծումը: Արարտների Հոգերը կենթարկվեն այս նույն վատանդին, ինչ որ թուր-քական հողերը նվաճեն որ թուրքերը բոլոր դեպքերում ամեն շանք կներդնեն կայսրությունը պահելու համար, պատահղը արար-ների համար կդառնա ավելի անավոր: Հնաց այդպիս էլ կօգատածի:

Մեզ՝ արարտների համար, այժմ ամենակարևորը մեր անկա-խությունը պահպանելն է: Մեր կազմակերպությունը հիմնալի կադմակերպված է և նրա անդամները անձնվիրաբեր և վիրված են իրենց գործին: Մեր կազմակերպությունը իր արքազան պարտըն է համարում ձեռք առնել զնուական միջոցներ Հայրենիքի բարորու-թյունը և իր որդիների կյանքը պաշտպանելու համար: Դրա համար էլ մնաց յօնդրում ենք անհապաղ պատասխանել Հետևյալ Հարցե-րին:

1. Բնշպիսի³ միջոցների եռ տեսրինում դու ուվյալ պահին այն բանի համար, որպեսզի ազգանշանի դեպքում սկսեք ակստամբու-թյունը:

2. Կարսո՞ղ ես դու մեզ նյութական աշակցություն ցույց տալ կամ մեզ համար դրամ հավաքել, Բնշպիսի³ դումարի վրա մնաց կարող ենք հայու ունենալ:

3. Արգյուք դու Շաբավորություն ունե՞ս աղանով ապաստա-րան արամագնել մեր գաղտնի գործակալներին, որոնք մեր աշուկ-ցությամբ զեկավարելու են ապստամբությունը:

4. Կարսո՞ղ էիր արգյուք դու մեզ սկզբակել քա ներկայացնուցլին՝ վստահելի մարզու, որ ժամանի նախօրոք նշանակված տեղը, որ-պեսզի մեզեկց ստանա անհրաժեշտ հրահանգներ:

5. Եթե քեզ մետ չգտնվի այդպիսի վստահելի մի ժարդ, այդ դեպքում անհրաժեշտ կհամարեն, որ մնար ուղարկենց քեզ որևէ մեկին մեր հրահանգներով: Խնդրում եմ այս բոլոր հարցերին մեզ պատասխանել մանրամասնորեն:

2 Ի հիման ունի թուրքական կառավարությունը:

Հապազման յուրաքանչյուր բոլով կարող է արարի կյանք արժենար:

Հասել է ժամանակը զոհարձելու հանում պարտքի և հայրենիքի: Ա.՝

Հ. Գ. — Մենք կառարագրենք միշտ այս ձևով, բայց խնդրում եմ, որ պատասխաներում եղիք զգույշ և մի հիշատակիր իմ ակունքը: Սրբը պիտի է դրված լինի մի ուրիշ ծրարի մեջ՝ հասցեապրված հետեւալ ձևով:

Կահիքի

Տարի ադ-Դիվանին, շեյխ Հաքբի Խալֆին:
Հանգուցյալ շերիֆ փաշայի պալատի գիւմազ:

«Записки Джемаль-паши, 1913—1919 гг.»,
Тифлис, 1923 г. стр. 166—167.

№ 7

ԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԺՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ՖԵԹԽԱԾԻ ԴԱՐԱՎԱԿՈՍՈՒՄ (1915 թ.)*

1. Անհրաժեշտ է պատամրություն բարձրացնել ընդդեմ թուրքերի, քանի նրանց արարական երկրներից և ազատվել նրանց տիրապետությունից:

2. Ապատամրությունը կսկսվի Սիրիայում, որը կլինի նրա հետակետը, այնուհետև կապստամրվի Հիշազը, Հուսեյնը կզիւազորի պատամրությունը:

3. Ապատամրության ընթացքում ստեղծված արարական կառավարությունը գաշնազիր կկերի Անգլիայի հետ:

4. Ապատամրության նպատակը ու թե մի տիրապետությունը մյուսով փոխարինելն է, այլ արարական երկրների ազտապրու-

* Արդ աշ-Շահի ալ-Արխայ, ալ-Ղամար քայլություն կողմանքության գեկազարերից:

* Ֆեթխը Մեքսիքի Ծառիքի որդին էր և արարական ազտամրությունից հրամանատար, Շատապայում Սիրիայի թագավորը Ֆեթխը 1915 թ. դաշտում Պամականում հակդիրում է ունենալ Սիրիական ազգային շարժման գեկազարերի հետ, որոք առաջարկում է վերաբերյալ պահանջները Հայունի Ծերիֆ Հաւայինին:

մը, արարական կառավարության ստեղծումն է, որը կվերականգնի հախնեների գիտությունը:

АМИН САИД. Восстания арабов в XX веке,
Москва, 1964, стр. 61.

№ 8

ՄԵՐՔԱՅԻ ՇԵՐԻՆ ՀՈՒՍԵՅՆԻ ՄԱԿԱՖԵԱԾԸ

...Հմբիրները³ շարունակեցին աշակցել ամանյան պետությանը մինչև այն պահը, երբ պետության մեջ երեան նկազ ունիությունն է Առաջադիմությունը կազմակերպությունը՝ նա շարունակեց իր վրա վերցնել կառավարումը և բոլոր գործերը, որի արդյունքը եղավ այն, որ պետությունը տերիտորիալ մեծ կորուստներ ունեցավ, որը լրիվ, վերջնականորեն դժես նրա վարկը, նեշպես հայտնի է, որը աշխարհն ընկզմվեց պատերազմի ստրափների մեջ, որը նրան հանդեցրեց բոլորին ակնհայտ ներկա վտանգություն վիճակին: Այս բոլորը հաստարվեց որոշակի, լավ հայտնի նպատակներով, որոնց մասին տարածվելը մեր զգացմունքները արգելում են:

Նրանք⁴ մուսուլմանների սրտերին վշտալի ցավ պատճառեցին իրաւական հայության համար, նրա եաւանգների մուսուլման և ոչ մուսուլման բնակիչների ոչնչացման համար: Նրանցից ոմանք կախազան բարձրացվեցին կամ սպանվեցին ոյլ կերպ, մյուսներն էլ օշվեցին աքսոր: Ի հավելումն արանց՝ մարդկային և նյութական կորուստները, որ նրանք կրեցին պատերազմի ընթացքում, հատկապես սուրբ երկրում: Դա համառոտ կերպով երեաց այն փաստի մեջ, որ այդ շրջանում ընդհանուր լարվածությունը հակադրեց անդամ միջին խավերին վաճառել իրենց տների գոները, պահարանները և առաստաղի փալտերը, Վանառում էին ողջ ունեցվածքը, որպեսզի իրենց կյանքը ապահովին: Այս բոլորը ցույց է տալիս, որ ունիություն և Առաջադիմություն կազմակերպության ժրագրերը լիրագործվեցին:

...Սակայն վերջապես քողը բարձրացվեց և ակնհայտ դարձավ, որ կայսրությունը էնօեր փաշայի, Զեմալ փաշայի և Թալատի թիյի ձեռքերումն է, որոնք կառավարում էին այնպես, ինչպես

¹ Տպագրված է կրթառություն:

² Խոսք արտօ իշխանացուների մասին է:

³ Երիտարքեցիք:

իրենց գույք էր գալիս և վարդում էին այնպես, ինչպես իրենց բազ-
տը կամքն էր ուզում:

...Միանդամից կախաղան բարձրացվեցին 21 դարդացած ու
արզակած մուսուլմաններ և արարեներ, ի հավելումն նրանց, ովքեր
սպանվել էին մինչ այս— էմիր Օմար ալ-Խաջահիրի, էմիր Արիֆ
աշ-Շիհարի, Շեֆիկ թեյ ալ-Մուայյադ, Շուբրի թեյ ալ-Ասլի, Արդ
ալ-Վահար, Թաուֆիկ թեյ ալ-Բասիթ, Արդ ալ-Համիդ ալ-Ջահրա-
վի, Արդ ալ-Դանի ալ-Ռուբյան և նրանց ընկերները, որոնք շատ
հայտնի մարդիկ էին:

Անիսիզն մարդիկ չէին կարող հեշտությամբ իրենց թույլատրել
կործանելու արյօնն կյանք մեկ հարգածով, նթե անզամ նրանք
անապատի զայտանեներ լինեին: Մենք կարող ենք լսել նրանց ար-
դարացումը և ներում շնորհել նրանց այդ արժանավոր մարդկանց
սպանության համար, բայց ինչպես կարող ենք ներել նրանց, ով-
քեր առնչայի և սրտակեղեց պայմաններում արտաքսել են իրենց
զոհերի անմեղ շնորհելիքներին, երեխանեներին, թույլ կահանց ու
տարեց մարդկանց և նրանց պատճառել տառապանքի այլ ձևեր,
ի հավելումն այն սարսափելի ցավերի, որ նրանք արգել էին:
Տերե տառը է, ո՞չ մի տառապայալ հոգի լսենք է կրի ուրիշի տա-
ռապանքը: Նույնիսկ եթե մենք կարողանենք անտեսել այս բո-
լորը, ապա մի՛մե հետարկոր է, որ մենք կարողանանք ներել
նրանց, ովքեր թալանել են այն մարդկանց ունեցվածքը և դրամը,
որոնք կորցրել էին իրենց հարադարձներին:

...Մենք ունենք բավական ապացույց այն ժամին, թե ինչպես
են նրանք վերաբերվում կրօնին և արար ժողովրդին, թեկուզ այն
փաստի մեջ, որ նրանք ուրաքնությին Հնամյա Տունը՝ Աստվածա-
յին Միասնության տաճարը, որի մասին աստեղ խոսրի մեջ ասված
է, «Մաքրիր իմ ուսւըն նրանց համար, ովքեր քայլում են նրա մո-
տով», մուսուլմանների Կիրլան և Միասնությանը հավատացող-
ների Թարան: Արձակեցին երկու արկ նրանց վրա իրենց խոշոր
թնդանոթներից, երբ երկիրը ուտքի կանգնեց պահանջելու իր ան-
կախությունը: Մենք ընկազ մեկ ու կես յարդ Սև Թարից վերեն և
մյուսը՝ երեք յարդ՝ Հրկիզզեց Թաարայի ծածկոցը: Հազարավոր
մուսուլմաններ խուժեցին տագնապի և հուսահատության աղաղակ-
ներով հանգնելու բօցերը: Կրակին հանելու համար նրանք հար-
կադրված էին բացել շենքի դուռը և մազցիլ տանիքը: Թշնամին
նրբորդ արկը արձակեց Մակամ նրբաշմի վրա, ի հավելումն այն

արկերի և գեղազնների, որոնք արձակվեցին շնչերի մեջած մասի վրա: Ամեն որ երեք կամ չորս հոգի սպանվում էր շնչերում, և վերշապես անհարին զարձավ մուտումանեների հումար թատրային մոտենալը: Մենք թողնում ենք ողջ մուտումանական աշխարհին՝ Արենիքից-Արևմուտք, դատելու Մրրազան Տունը արհամարհելու: և սրբապղթելու համար: Թայց մենք վճռել ենք լիովնել, որ մեր կրոնական և ազգային իրավունքները խաղալիք դանան չՄիության և Առաջադիմություն կուսակցության ձեռքին:

Առաջած... առիթ շնորհեց երկրին ապստամբվելու, օգևեց նրան իր իշխանությամբ և Հղորությամբ ձեռք բերել իր անկախությունը և նրա չափերը պահպանից կատարյալ հաղթանակով, թեև հետագայում նա կործանվեց թուրքական զինվորական և բազարացիական պաշտոնյաների վատ կառավարման հետանաբռով: Նա կանգնած է մեկուսի և տարրերվում է այն բոլոր երկրներից, որոնք գեռ անքում են ԵՄիության և Առաջադիմության կառավարության լին ներբռու: Նու անկախ է բառիս բուն իմաստով, ազատված է ռատրինի իշխանությունից և մաքրված ամեն տեսակի տար աղդեցություննեց: Նրա սկզբունքներն են՝ պաշտպանել իսլամի հավատը, բարձրացնել մուտումանական ժաղովրդին, Հիմնել նրա վարքը Առաք Օրենքի հիման վրա, ստեղծել արդարազատության օրենսդիրը այդ նույն Հիմքի վրա և ներդաշնակ՝ կրոնի սկզբունքներին, կիրառել նրա դրույթները համաձայն արդյուն առաջադիմությանը և կառարել իսկական հեղափոխություն, լինայելով ոչ մի չանք տառածելու կրթությունը բոլոր գասակարգերի մեջ՝ համահայն նրանց մինակին և կարիքներին: Այս է այն բազարականությունը, որի կիրառմանը մենք ձեռնամուխ ենք եղել, որպեսզի կատարենք մեր կրոնական պարագը, վատահ լինելով, որ մեր բոլոր մուտուման եղրայրները Արևելքում և Արևմուտքում կհետապնդեն նույն նպատակները իրենց պարուրը մեր նկատմամբ կատարելիս և այսպիսով կուտեղացնեն իսլամական եղբայրության կապերը:

Մեքքայի շերիֆ և էմիր ալ-Հուսեյն իրեն Ալի
25 շատրան, 1324
(27 հունիս, 1916)

„Արարատ”, London, 1917, vol. v, N 54, p. 270.

ԷՄԻՐ ՖԵԼԻՇԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՍՄԻՒԱՅԻ ՄՆՄԱՄԵՄՆԵՐԻՆ
(9 մայիսի, 1919)

«Թուրքերի դեմ պատերազմի անմիջական պատճառն էր՝ փրկել արարներին պատերազմի հառեանքներից, այն պատերազմի, որից չէր ակնկալվում, թե թուրքերը և նրանց գաշնակեցները կարող են հաջողություն ունենալ»:

(Այսուհետեւ Ֆելիշալը խոսում է Փարիզի խաղաղության կոնֆերանսում իր ներկայացրած առարարկների մասին):

«Կոնֆերանսում ես խոսեցի երկու կետերի շուրջը.

1. Արարական երկրների անբաժանելիության և այն մասին, որ արար ազգը պահանջում է իր բացարձակ անկախությունը:

2. Ն նկատի ունենալով տարբերությունները, որոնք գոյություն ունեն երկրի զանազան մասերի սովորականությունների, կրթության մակարդակի ու քաղաքակրթվածության միջև և նրանց միջև հաղորդակցության կապերի դժվարությունները, ուս խնդրեցի, որ Հիշաղը, Սիրիան և Իրաքը ունենան յուրաքանչյուրն իր անկախ կառավարությունը, բայց միացած լինեն արարական երկրների մի մեծ միության մեջ:

Դեռ ազնիլին. Նեշդը և Արարիայի ավելի փոքր շրջանները պետք է միացվին Հիշաղին. Այն փոքր զիմաղրությունը, որը ես սկզբում հանդիպեցի, յասամը թյուր հասկացողությունից էր և մասամը էլ արարների ցանկություններին անտեղյակ լինելուց:

Եզրուացյինները կարծում էին, թե հուզումները, որ ընդհանրապես տեղի էին ունենալու երկրում, արարների պատճառով էին և իրենց մտավախությունը արտահայտեցին¹ թե մեր այդ հուզումները նորից կամվեն:

Բայց երբ նրանց բացատրվեց, որ Սիրիայում բոլոր դժբախտությունների պատճառով թուրքերն էին, նրանք սկզբունքը ունենալու մասնակին այն ամենին, ինչ որ դուք պահանջում էիք:

«Դիմելով ներկաներին, Ֆելիշալը հարցնում է, թե արդյոք նրանք համանություն են ունին նրա զիրքորոշմանը և քաղաքա-

¹ Սույն ուշերձավ Ֆելիշալը զիմեց Դամասկոսի քաղաքապետարանում հագործությանը, այդ թվում նաև Պաղստինի, Լորդունի և Աբրամունի աշխարհի առաջնորդներին. Այդերեւ Հրապարակում նոք կրթառությունը:

կանությանը, Ներկաները միաձայն դրական պառագիան են տալիս՝⁷

Պատվիրակներին լսելուց հետո Ֆեյսոլը շարունակեց իր հա-
սք՝ կանգ առնելով երկրի կառավարման ձևերի վրա. «Ես կարծում
եմ, որ ավելի շատ ուշադրություն է դարձվելու փոքրամասեռ-
թյունների իրավունքներին, որպեսզի սրանով վերացվի տակու-
թյունը և կրօնական թշնամունքը, որ ստեղծել էին թուրքերը. և
դրա փոխարձն ցանել սիրա և նպայլության սերմեր տարբեր կրօ-
նի պատկանող մարդկանց միջև»:

„Documents on British Foreign Policy. 1919—1939”,
1st series, London, 1952, vol. IV, pp. 267—272.

№ 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԴԱՎԱՐՈՒ ՀՈԽՈՒՏԻՆ ԻՐԻ ԱՎԻԿ ՀԵՌԱԳԻՐԸ
ՀԵՏՍԱԼԻՆ, 29 ՆՈՅԵՄԲՐԻ

1919 թ.

«Անկասկած, Հայեալից Հյուսիս-արևմտաք, որոշ մարդիկ բա-
նակցություններ են վարում Թեմալ փաշայի հետ:

Դուք պետք է զիտակցեք, թե ինչ կարող է լինել դրա հետհան-
քը»:

Դուք Հազորդիք ում որ վերաբերվում է՝ շմոռանան իմ խոր-
հուրդը կամ սիալ լկատարնեն, ինչպես ոս արեցին նրանք անտ-
սելով իմ ազդարարությունը Ջյուլնիայի հարցում և...” բազմուկի
իմ զգուշացումները Զաֆարին:

„Documents on British Foreign Policy. 1919—1939”,
1st series, London, 1952, vol. IV, p. 533.

7 Ի պատճենակ Ֆեյսոլի հարցադրման, ելույթ է ունենալ նոն այս Շովիրիկ
ներկա տակեց Միջիայում սեղազարման հայ զավթականների նովեր առաջնոր-
դու. Նո շնորհակալությունն է հայում արտքներին շրջ տարգա ընթացքում հայ
գացթականների նկատմամբ հրաց վերաբերմունքի համար և առաջ, որ պատ-
ճեմներն մեջ արտքների անոնք կըսէ ուկ տառերու:

* Տեսաց արտնոց անքիթեանէի է:

НЕКОТОРЫЕ АРАБСКИЕ ДОКУМЕНТЫ ОБ АРАБО-ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЯХ

Составители:
А. С. Саркисян, А. Г. Топалян

Р е з ю м е

В сборнике помещены некоторые документы, касающиеся арабо-турецких отношений в первом двадцатилетии нашего века. В некоторых из них выдвигались требования о проведении реформы в Османской империи, предоставлении широких прав арабам и уважении их национального достоинства. Об этом говорится в документах Глашного комитета «Лиги арабских стран», в решениях арабского конгресса в Париже и т. д. Часть документов относится к периоду первой мировой войны и арабскому восстанию. В них вскрываются причины восстания, показываются требования арабов и их правящей верхушки, в частности Хашимидов, и т. д.

المذاق العربية عن العلاقات العربية - التركية
من اعداد: هاروتيون، سركيسيان و ارشالويس - توباليان
(ملخص)

تعالج بعض المذاق العربية الموجدة في المجموعة «علاقات العربية - التركية» في العقود الاولى من هذا القرن. فتلقي الضوء على مطالب العرب لتحقيق الاصلاحات ضمن سلطنة العثمانية، و اعطائهم المزيد من الحقوق، و احترام كرامتهم الوطنية. ذلك ما تحدث عنه وثائق المجلس العام، «جامعة الدول العربية». و مقررات مؤتمر باريس وغيرها، كما و تتعلق بعض المذاق بالحرب العالمية الاولى، و شورة العربية: فتشرح اسبابها و تعرّض مطالب العرب و طبقتهم الحاكمة، و على الاخضر العاشميين وغيرهم.

ՄԵՆԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Հ. ԽԱՉԱՐՅԱՆ

ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ
ՄԸԱԿՈՒԹԱՑԻ, ԿԱՊԵՐԸ

(Սիրիա և Վրանան)

1945—1970 թ.

Ա. Ռ. Զ Ա Բ Ա Ն

Կյանքի բոլոր բնագավառներում Հայ ժողովրդի արձանագրած անհայտնինեց առաջինազարդի և ազգահաջարման գործում ձեռք բերված վերընթացի պայմաններում, երբ լուրջ ու ծանրակշիռ գործեր են ձեռնարկվում մեր անցած ուղին համապարփակ և պիտականորեն բարձր ընդգրկմամբ պատկերելու համար, սրբատար անհատաձգելի է դառնում նորագույն պատմության կարևոր էջերից մեկի՝ պատմական գմբախտ նակատագրի բնորումով ի սիյուռա աշխարհի ցրված գաղթօջախների կյանքի պարզահաման անհրաժեշտությունը:

Այդ անհրաժեշտության բավարարումն, անկասկած, կապված է յուրահատուկ գմբարությունների հետ, քանի որ Հայրենի հողեց հեռու Հայության քանակով թե որակով պատկանելի բնեկորների կյանքը, հատկապես այդ կյանքի համար խիստ բնորոշ բազարական ու մշակութային եռուն գործունեությունը, անընդհատ այս կամ այն կերպ առնչվել ու առնչվում է տարրեր ժողովուրդների ազգային շարժումների և ազդային տարրեր կուլտուրաների հետ։ Հասկանալի է, որիմն, թե ինչքան կարևոր է կանխարրոց հետազոտված ունենալ Հայկական հոծ գաղթօջախներ Հյուրընկալու ժողովուրդների և Հայերի բազարական ու մշակութային կապերի պատմությունը՝ համապարփակ շարադրելու համար մեր նոր սիյուռի պատմությունը, որն իր հերթին առաջնային նախահումքը է լինելու Հայ ժողովրդի համընդհանուր պատմության,

Այդ տեսակներից դժվար է զերագնահատել մազնշական ծանրաթյամբ իրար զողված երկու ժողովուրդների՝ Հայերի և արարակարների մշակության նոր կապերի հետազոտման նշանակությունը:

Արարական երկուներում, Հատկապես Սիրիայում և Լիբանանում բնակություն հաստատված բազմարյուր Հայերի մշակութային դրսումներում, միախառնվելով արարակարների կուլտուրական շարժման հետ, ոչ միայն մեր աղքատյին մշակությը նորություններով գրասանզելու հետափորություն է ձեռք բերում, այլև լուրջ նպաստ է մատուցում Սիրիայի և Լիբանանի մշակութային վերելքին: Եվ ուրեմն Հայ-արարական կապերի հետազոտումը անհրաժեշտ առաջնային կայսերական սիրիական ու լիբանանական նորագույն պատմության հոգնոր նվաճումների էլի ուսումնափառելը:

Առանձին ընդգծել է պետք այն հանգամանքը, որ մշակութային առնյությունների զարգացման և երկու ժողովուրդների կուլտուրական փոխազդեցության օրինաշափությունների բացահայտումը կծառայի Սիրիայում և Լիբանանում արարակարների ու Հայերի փոխըմբռնման ուժեղացմանը, նախադրյալներ կառեղծի արար և Հայ աշխատավորների Հակաբինակերիայիշատական համատեղ պայքարի զարացման:

Համաշխարհային հետազիմությունը միշտ էլ փորձել է, և Հատկապես մեր օրերում, վիճեցնել աարքեր ժողովուրդների միջև փոխըմբռնման ու համագործակցության ամրապնդումը, առարքի աղքի ու կրոնի աշխատավորների միշտ եղայրական շփումների և համատեղ գործողությունների աշխատացումը:

Արևմտաեվրոպական բուրժուական մեջ շարք հեղինակներ՝ Պ. Ռոնժեն, Է. Մակկալումը, Շարլը-Ռուն, Ջ. Անտոնիսուր, Հ. Թունը, Ա. Լոնգրիջը, Ռ. Լաբյորը և ուրիշներ, մերձավորարևելյան Հարցերը քննեարկելիս, պատշաճը հասուցելով հանդերձ Հայ նորարականների կարևոր մասնակցությանը Սիրիայի և Լիբանանի զարգացման գործին, օրպես կանոն Հայերին և արարակարներին փոխկապակցության մեջ են տեսնել միայն ու միայն համայնքային տարածաշեռությունների և բախումների պահերին¹. Այդ տեսակները

1 Տես Հատկապես՝ P. Rondot, *Les Chrétiens d'Orient*, Paris, n. 6-ը, pp. 188, 232; S. H. Longrigg, *Syria and Lebanon under French Mandate*, London, 1958, pp. 80, 86, 159—164; E. Maccallum, *The Nationalist Crusade in Syria*, N. Y., 1928, p. 130; G. Antonius, *The Arab Awakening*, N. Y., 1939, p. 378.

որոշակի արտացոլում է զանել նաև մի շաբթ արար բուրժուական հեղինակների՝ Ա. Հառիքաների, Բ. Հինդիի, Մ. Ալ-Մաֆարջալանիի և այլոց երկերում³:

Արար և Հայ բուրժուական որոշ հեղինակներ էլ, ի վիճակի ըլինելով ուրանալ Հայ-արարական մշակութային կապերի սերտացման փաստը, այն շարամտորին գնուհատել են որպես արարահայ գաղթոշախների ձուլման արհավիրքը արագացնող ազգական այց անսակնեն է զարգացրել, ի շարս այլոց, ժորժ Հաղպաղը, ընդունելով, որ մինչև առաջին աշխարհամարտը արարական երկրներ ապաստանած Հայերը պիրենց ազգային դիմագիծը կորցնելու և ձուլվելու վրա հնա միայն ու միայն երկրի ինքուն սովորած լինելու հետանաբարված⁴: Արանանանահայ լուսպարող ն. Փաթանյանի կարծիքով, արարական ունդվին, մշակույթին ու ֆուկլորին... լավապես ծանօթանալու պարագային, առաջին հերթին մեր ժողովրդին մտագորական դաստիարքն է, որ կուժանա, կայլասերից⁵:

Այս որոշոք վկայում է ոչ միայն Հարցի բարդության, այլև այն բազմակողմանիորեն ուսումնասիրելու և Հայ-արարական մշակութային կապերի պատմությունը շարադրելու անհրաժեշտության մասին, մի բան, որը մինչև այժմ չի արվել ինչպես մեծանում, այնպիսի էլ արտասահմանում:

Ընդունելով Հանդերձ, որ ցարդ մշակութային նոր կապերին թեկուզ և թուցիկ անդրագարձող ոչ մի աշխատություն լույս լինեած և որ առ այսօր հիմնականում արարական ազգային-ազատագրական շարժումների կամ արարահայ գաղթոշախների Հարցերն են եղել մեր հետազոտութերի տեսազաշառմ, պետք է նշել Հետկերալը. Հրապարակված աշխատությունները թեև զրծին լիովին շրջանցնել են մշակութային կապերը, սակայն գդալի լափով հոգ են նախագագառասանել զրուց Հետազոտման Համար, քանի որ արժարել են կուտառուական առնվտթյունները հրահանգավորող մի շաբթ նախադրյալներ:

³ A. Hourani, Syria and Lebanon, New York, 1946, p. 188.
احسان، کفاح شعب العربی "سوری" ۱۹۴۸ - ۱۹۵۸، ص ۱۷۷ - ۱۷۸، دمشق
هندی، کفاح شعب العربی "سوری" ۱۹۴۸ - ۱۹۵۸، ص ۱۷۷ - ۱۷۸، دمشق

⁴ G. Haddad, Fifty years of modern Syria and Lebanon, Beirut, 1960, p. 15.

⁵ Ա. Փաթանյան, Մշակութ և քաջարականություն՝ գաղթահայությունը իր տոքառական մեջ, «Սփյուռք», Բեյրութ, 18.7.1955.

Լ. Խուրշեսլյանը, սրինակ, սփյուռքահայ բազմական կուտահցությունների մերօրյա վարքն ու գեմքը բացահայտող իր աշխատության³ էջերում բրուրեղացրել է Հայկական ինչպես զեմուկրատական, այնպես էլ Հետադիմ շրջանների վերաբերմունքը ընդհանրապես աղքային-աղատագրական և մասնավորապես արարժողովուրդների հակամապերիացիստական շարժումների նկատմամբ։ Իր հերթին Հ. Միմույանը, սփյուռքահայության առցիւթաղացական պայքարի ուղիները գծելիս, անհրաժեշտ ուղաղորություն է դաշճրել արարժողովուրդների աղատագրական և հակամապերիացական պարումներին արարահայ գաղթօջախների մասնակցության փաստերի մրա։ Այդ փաստերը միշտ էլ հետաքրքրություն նն արարժողովուրդների աղքային-աղատագրական շարժումները մասնակիուրդներու հետազոտող Ն. Հովհաննեսիսյանին⁴, որն, ի տարրերություն սօվետական մյուս արարագետների, կարևոր տեղ է հատկացրել այդ շարժումներին աղքային փոքրամասությունների, և առաջին հերթին, հայ ժողովրդի տարագիր թիկորների հոսնդաշատ մասնակցությանը։ Մշակութային կապերի մեջ հետաքրքրող նախադրյալին առնվազն է նաև Հ. Թոփուլյանի մձնագրությունը⁵, որը Միրիամի և կիրանանի աղքային-աղատագրական և դեմքրատական շարժումներին հաշերի մասնակցության մի շարք փաստերի շարադրումն ունի որպես հիմնական առաջազրանք։

Հիշատակել է պետք նույնագեն Ս. Դասպարյանի⁶ ընդհանրապես հայ գաղթօջախներին և Լ. Տեր-Մկրտչյանի⁷ մասնավորապես արարահայ համայնքներին նվիրված տեղեկագրական աշխատությունները։ Պատշաճ տեղ հատկացնելով՝ լիբանանահայ և սփյուռքահայ համայնքների աղքային-մշակութային կյանքի, արարական աղքային-աղատագրական շարժումներին նյանց մասնակցության և

³ Լ. Խուրշեսլյան, Սփյուռքահայ կուտահցությունները ժամանելունից հաջորդ, Երևան, 1954։

⁴ Հ. Միմույան, Սփյուռքահայությունը առցիւթաղացական պայքարի ողջնորմ, Երևան, 1968։

⁵ Ն. Հովհաննեսիսյան, Ազգային-աղատագրական պայքարը Արմենիա (1939—1945), Երևան, 1967. Նույնի Օբրաչունություն Կազմակերպություն (1939—1945 թ.), Մ., 1968.

⁶ Հ. Թոփուլյան, Հայեր մասնակցությունը, Միրիամի և կիրանանի աղքային-աղատագրական շարժումներին, Երևան, 1955.

⁷ Ս. Դասպարյան, Սփյուռքահայ գաղթօջախների այլուր, Երևան, 1962։

⁸ Լ. Խուրշեսլյան, Արմենիա և Հայաստան աղքային-աղատագրական պայքարական գլուխառական շարժումներին, Երևան, 1965.

ճայր Հայրենիքի հետ մշակութային կազերի պատկերմանը, այդ Շեղինակները ակնօրեկն են նաև Հայերի և արաբների կուլտուրական շփումների մի շարք փառանքներ:

Արոշակի Ծաղ է նախապատրաստվել նաև գրական կապերի հետազոտման համար: Այս բնագավառում հրչարժան նրախահիք ունի առաջին հերթին Ա. Արշարունին, որին և պարուական ենք Հայ-արաբական գրական նոր առնչությունները պարբերացման հեթարկելու առաջին գործը¹¹: Զգալի գործ է կատարել նաև Կ. Դալշարյանը¹²: Արանձանահանայ գիմոնիրատական մամուլի պատմությունը շարադրելիս նա, ըստ արժանվույն գնահատելով կոմունիտական հրապարակախոսության աշխատանքը արարական ազատագրական պայքարի բառագովման ուղղությամբ, կանգ է առել նաև ԱՄԷր Նշանարանն է Հառաջը-ի և Հատկապես նրա գրական հաջելվածի էջերում արարական գրականությունը Հայերին ժանոթացներու փորձների վրա: Իր հերթին Մ. Բարլուանը, լիրականահանայ գրական մամուլին նվիրված իր Հետազոտություններում¹³, լոկ Հապեցիկ կերպով է արտացոլել «Անի» և «Նոր ուղի» պարբերականների արարական գրականության նվիրված էջերը, քանի որ այդ Հանդիսներում սոսկ թռուցիկ կերպով են շոշափվել արարական պարփռելուն Հարցերը:

Դժվար չէ կուանչել, որ բուն իսկ Հայ-արարական մշակութային նոր կապերի պատմության հոգը, որի մրս ուոք ենք զննուու Հաշորդ էջերում, հիմնականում լիրկ ու անմշակ է մնացել ցարդ¹⁴:

Սիրիայի և Լիբանանի բնական, պատմա-բաղարական և արքունական պայմանների Հանդիսություններն ու կապերը պատճառ

¹¹ Ա. Արարուն, Կ առօս առ արաբական մշակութային, «Известия АН Арм. ССР», Օճակ լայն, 1960, № 5—6.

¹² Կ. Դալշարյան, Արանձանահանայ գիմոնիրատական մամուլի պատմությունը, Երևան, 1964.

¹³ Մ. Բարլուան, Արանձանայ մամուլի պատմությունը, Ելեք, Երևան, 1965: Խոյեր՝ «Նոր ուղի» պարբերագիրը, «Պատմարանական Հանդես», Երևան, 1965, № 1.

¹⁴ Ուոք է Հրատանիկյան, որ Արարական Արևելքի երկրների Ծառ բարեկամության և մշակութային կապի ստեղծումին ընկերության Հայկական բաժնեմունքի այսինքն պահպանվում են զգայի բանակությանը և յամեն, որոնք կարենդ և բառ արձերացը աշբար է Հայ-արարական մշակութային փոխունշությունները հնագույնությունը, հատկապես Սովորական Հայուսական մշակութային կապերը Արքայի և Արքաների Ծառ ուսումնառիւու համար:

են դարձել, որ սիրիանայ և լիբանանանայ զաղթաշխները, ընդհանուր մինչև Հիսուսնական տաճառաբանի վերջերը, ընկալվել են որպես միասնական զաղթօջախ: Այդ ընկալվածը նպաստել են նաև այլ՝ ներհայեական գործունեքը: սիրիանայիցի և լիբանանայիցի առվար մեծամասնության կիրիկեցի լինելու ու Հազմոր-Համայնքային հոգի վրա Անթիլիասի (Մեծի տաճն Կիլիկիո) կաթողիկոսության ճնշարձկելը, մինույն ազգային կուսակցությունների, մշակութային, մարդարական, բարձսիրիական և այլ կազմակերպությունների հավասարաշափ գործունեքությունը թե՛ մեկ և թե՛ մյուս զաղթօջախում: և այլն:

Այդ բոլորն, անշուշտ, հաշվի ենք առել Սիրիան և լիբանաներ միասնաբար ընդգրկելիու նրկու նրկուները համաժամանակյա ընդգրկելու համար, սակայն, մենք ունեցել ենք սիրիանայ և լիբանանանայ զաղթօջախների միասնությունը հրաժանապրոց ավելի անմիջական մի հանգամանք: այն, որ նրկու նրկուներում հայ-արաբական մշակութային նոր կապերը մինույն նախազրյալների հրահնգով են ապրել սազմեավորման դժվարին վերիվայրունենքրի նրկու տասնամյակ, համաշխարհային նրկորորդ պատերազմի սարիներին հիմնականում մինույն հասարակական կյանքի ներգործությամբ են հարթել իրենց զարգացման հունը և հետպատերազմյան աարիներին, ընդհուպ մինչև մեր օրերը, զերելը են ապրել որպես մշտէ ունենալով մինույն փաղանգը հայ մատվորականների, որոնց շրջանում սիրիանայի ու լիբանանանանայի տարրերակուում գոյություն լունի և որոնք (ինչպես իրենց զաստիարակությամբ, այլապես էլ գործունեքությամբ) առնշըում են սիրիա-լիբանանյան մինույն գեմոկրատական միջավայրի հետ:

Անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ հայ-արաբական մշակութային նոր կապերը և հատկապես մերօրյա զրական առնչությունները պատկերելիս մեր համար ուզենիշ ենք զարգանել Վ. Ի. Լենինի հայտնի ածսությունը ազգային նրկու կուլտուրաների տոկայության և զրականության պարտիականության մասին: Մեզ մեծապես սգենի են Վ. Ի. Լենինի մտքերը այն մասին, որ կատարելապես անանի են բուրժուազիյի զաղթափառախոսների պեղումները և լիբանական հոսանքի գոյության և ավյալ ժաղավազի ազգային կուլտուրայի ներսում զասակարգային ձգտումների բախման բացակայության վերաբերյալ, որով և հավաստրության նշան է զրվում տվյալ ժողովրդի կուլտուրայի առաջադիմ և հնատղեմ բաղադրատարրերի միջև: Լենինյան պրոլետերն սգենի են մեզ հիշտ

կողմնորոշվելու Հայ-արարական մշակութային նոր կապերի հետ աղնուսվող մի շարք բարդ ու հակասական երևութների մեջ, սահմանադատելու հայկական և արարական մշակույթի առաջադիմ և հետագիմ հոսանքները ու ցույց տալու նրանցից լուրաբանվուրի վերաբերմունքը Հայ-արարական մշակութային կապերի զարգացման նկատմամբ:

* * *

Դեռ վաղ անցյալում արարա-Հայկական փոխադարձարար Հարդաբիր շփումների մասին խոսող մատենագրական շատ փաստեր և խիստ ուշադրավ ավանդություններ են ի հայր եկեղեց հայկական շրջանակներում։ Եապուն Բագրատունուն վերաբրվող աշխատության էջերում, օրինակ, տրված է արարեների առավելականությունը խորհրդանշող Հաթեմի պատմության Հայկական հրաշալի կրկնօրինակը՝ Դրիգոր-Դերենի նովիլը, որը հայ և արար ժողովուրդների Հնադարյան բարեկամության մասին վկայություններուն հմայիլ հիշատակարան է։ Մեր ժողովուրդը պահպանել է և մի գողորիկ լեզնեղ ու Հոռոմը նվաճողների գեմ մարտի դուրս եկած Հովհան Օձնեցուն Թաղդադի խալիթային ուղմական օվանության մասին։ Հայերի և արարեների հնամյա գաշինքի ու մերձավորության մասին Հորինված միջնադարյան ավանդությունների այդ վերապրուկը Հավասարում է, որ չյուրաքանչյուր արար, պատահելով որևէ քնած հայի, պարտավոր էր կանգնել և իր հանդերձի փեշով արեգակի հառագայթների գեմ ստվեր արձակեց հայի վրա, մինչև նա կղարթները¹⁵։

Մեր մատենագրության էջերում արարեների, իսկ արար պատմիչների ու աշխարհագիրների երկերում հայերի մասին հանդիպող մեծածավալ նյութը լավագույն փաստն է երկու ժողովուրդների պատմամշակութային Հնադարյան շփումների աշխատության։ Փոքր լի եղան թիվը ծագմամբ հայ պետական ու մշակութային գործիչների, որոնք հնում իրենց մասնակցությունն են բներել արարական կուլտուրայի ծագկմանը։ Փոխագործարար, և հոգ չէ թե ժամանորեն, պատմությունը հուշում է արար անանուն մտավորականների մասին, որոնք Դվինում ու Անիում, Հռոմելայում և այլուր իրենց լուժան են ներդրել հայկական դպրության վերելքի գործում։

¹⁵ Ֆայրենմի, Հանապարհորդական հկառուզությունը, «Փոքր», Թիֆլիս, 1885, Ա 4, էջ 85։

Մշակութային գորիստարձ ժանոթության և աերնդմնչ շփռմների մասին են վկայում նաև բազմատասնյակ թարգմանությունները, որ հայերը կատարել են արարական գիտական ու գեղարվեստական գրականությունները, ինչպես նաև արարեների ու շաղիր հակումը դեպի հայ մորի արգասիքները:

Հայ-արարական մշակութային բազմադարյան շփռմները պատմական տարրեր ժամանակաշրջաններում, նայած բաղաբական հանգամանեքներին, մերթ ուժեղացել և մերթ թուլացել են: Մեր խնդրի մեջ լի մտնում այստեղ կանգ առնել արդ եկեղեցների վրա: Յանկանում ենք միայն նշել, որ հայ և արար ժողովուրդների պատմության հեռավոր խորքերում ձևավորված մշակութային անձնությունները սկսեցին նոր շունչ ստանալ մեր գարի բանական թվականներից: Երբ հայրենիքից բրոտրեն տեղահանված հայերի ստվար բեկորներով կազմակերպվեցին արարահայ զաղթօջախները, և իրենց զարգացման բարձրակետն հասան երկրորդ համաշխարհին պատերազմից հետո միարեւ:

Զենքամուխ լինելով Սիրիայում և Լիբանանում հայ-արարական մշակութային նոր կապերին նվիրված սույն աշխատության շարադրմանը, մեր առջև խնդրի ենք դրել թուլցիկ մի ակնարկով բացահայտել կապերի զարգացման բաղադրական ու տեսնասական նախադրյալները: Հանգամանուրեն լուսարանել գրական առնելությունները, ժանրահանուլով հատկապես սիրիահայ և լիբանանահայ գրականության էջերում արար ժողովովդի աղջային-աղջատագրական պայտարի արտացոլման փաստերի վրա և, վերջապես, ցույց տալ հայերի և արարեների կապը մշակույթի ու գիտության տարրեր բնագավառներում:

Հաշվի առնելով, որ վերշին տասնամյակում Ասիայի և Աֆրիկայի երկրների հետ Սովետական Միության նոր թագի ստուգած մշակութային կապերին ուշադրավ մասնակցություն է բերում Սովետական Հայաստանը, ոերա Հարարերություններ պահպանելով արարական երկրների, առաջին հերթին հայ հայ ուրվագագեն ենք նաև երկրների հետ Սովետական Հայաստանի մշակութային կապերի անցած ուղին:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻ, ԿԱՂԵՐԻ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱՎԱՆԵՐԸ

1

Քանակական թվականների սկզբին շուրջ 200 հազար հայ եռարեակենքի տեղաբաշխումը Սիրիայում և Լիբանանում, Հայ-արաբական մշակութային նոր կապերի սազմավորման համար կհնաական նախադրյալ Հանդիսացավ, մանավանդ որ Հայ ժողովրդի և մասնավորապես նրան առաջավոր մշակութի համար միշտ էլ խորթ է եղել ազգային մեկուսացումը:

Հայ-արաբական մշակութային կապերը, սակայն, միանգամբց լթեակոխեցին զարգացման հւզին: Ակադեմիան շրջանում տրաբների և հայ տարագիրների շփման կետերը համեմատարար սակավաթիվ ու աղքատ էին, ուստի և մշակութային առնչությունների ոլորտը այնպիս բազմարնույթ ու բազմաբովանդակ չէր, ինչպիս երկրորդ համաշխարհային պատերազմին հաշորգած տարիներին: Եվ դա իր պատճեններն ուներ:

Դադիօքախների կազմավորման օրերին, Հայության շրջանում բնազգական զառնալու լավ սրգած լոկ մի տագնուպ էր գերիշխում՝ ոիրը առժամանակիա բնակիլ աշխատիլ իր և իրեններուն օրապահիկը Հայթայթելա¹, այլ խոսքով՝ լոկ սևիական գոյությունը պահանելի: ԵՊաղութերու մեջ մենք ունենք միայն մեր գոյության պահպանության և նյութական հառաջիւմության խնդիրը Հայությունը էր ըստ բարեւթաշաւայ մի լրագրող²:

Անհատական ներամփոփության մզող այդ տագնապին զուգորդվում էր նաև Հավաքական տիկնամփոփումի և մեկուսացման

¹ «Արև», Կահիրե, 23.5.1925.

² Հ. Գիգանի, Ռուբինոսյ կյանքն, Ելքե, 22.10.1926.

առարձրացին ծգտումը՝, որը հոգերանական տեսակետից հասկանալիք բնապահական մի նիգ էր օտար (ու շատերի համար համակրոնության խարուսիկ ճանապարհով թուրքականի հետ նույնացվող)՝ միջավայրում հայությունից առավելագույնը պահպանելու համար:

Մյուս կողմից, պատերազմից անեստապես գրիթե իսպան Հյուծված և իր ազատափրական ակնկալությունների մեջ խարված արար ժողովրդի պայքարը զաղութային կարգերի դեմ և պարբերաբար բարձրացող տրտություն եկվորների հասցեին, Սիրիայում և Լիբանանում առաջ էին թրբել տագնապալիք մի միջնորդու, որը տարագիր հայերին մղում էր շրջանցելու արարների հետ երկարատև համակեցության ամեն մի հեռանկար և հայրենիքից ժամանակավորապես հեռու թնակություն համար երազելու ավելի խաղաղ երկնակամարներ, նախընտրաբար քրիստոնյա ազգաբնակչությամբ և թուրքական նիբանից հարավորին շափ հեռու միջավայր, հիմնականում հատինական Ամերիկա, մասամբ Ֆրանսիա, ԱՄՆ և այլուր⁵:

Այս հարցում սակագ ներգործուն չէին նաև մի շարք այլ հանգամանքներու կիրկուան զեռն թարմ փորձից խրառված, հայ տարագիրները Սիրիայում և Լիբանանում իրենց տիրապետությունը հաստատած ֆրանսիական մանդատային իշխանություններին⁶ չէին վատահում, ուղղակի երկնշելով, որ եթե ոչ ամրող Սիրիան, ապա առնվազն երկրի հյուսիսային շրջանները ի վերջո կզիշվեն թեմա-

⁵ «Մեր երանեանն է Հայությա, Թիւրք, 17.10.1955».

⁶ Սիւն ՀՀ գարանիչը ելքուպական հնցիւակների մաս «Թուրք անդամ ները Հայության մասնակիության հայության բարեւթյան բայուր իւրամեները, անկայի իրեւ ազգային պահանջությունները, իսկ տրութ անձնություն վերապահված չը անապատի ռազմու շնորհմանը էլ առարկակի թուրքերին և իրաւական գործիւններին, երբ թյուրքմանմամբ չն առարկակի թուրքերին և իրաւականներին ու վերցնեններին էլ համարն ու մթուրքն (անս, որինակ՝ Մ. Տաճառյանի որինիք նյութերը, Շառաբակը, Թիւրք, 16.1.1952), Հայ վճուռարքի (7.5.1955) թյուրքիք, Հայերի առաջնորդ Արտավազ Սյուրմենին պատվին կազմուերազմա մի հակառակյան ներկա են եղի պիտինացի, թուրք և ոչ պարտական բայրության անհանդությունները, որոնցից պիտիքը հասկանայիշան... արարներ են» են:

⁷ Արտավազի նախապատրաստությունների մասին անս «Անդրբակն աւալու, Հայկա, 12.4, 27.5 և 23.6.1955, վելուարից, Կոմիք, 15.9.1955»:

⁸ 1955 թ. ապրիլին Ասկ-Ռեմարտ անդ անցած կանքարեան Սիրիայի և Լիբանի հառավարան մակարաց Ազգերի լիգայի համբից արվեց Ֆրանսիային:

լականներին և յաթաղանի գործունեության նոր ասպարեզ կրացվի: «Մ”կ կրնա հաստատել, որ Ֆրանսա միջու պետք է մեա Սուրբո մեջ, Թուրքիա Հռու այլնս պիտի չմտնէ և տեղացի ժողովուրդն ալ, իր զաղացած առնություններուն լիզու տված առնեն, մեղավորը անմեղն պետք է տարբերեա, —իսունազահարում էր «ՀԽւարերը»¹:

Այս բոլորը առաջ էր բերում արաբական միջավայրից հեռանալու ձգուու:

Այդ ձգուուից անկախ, Հայ նորարենակները, թեկուզ զեռ սեպում նստած, իրականում անդրագետված էին արաբական միջավայրից, Հիմնական զանգվածով Համակենտրոնացված լինելով իրենց ուրույն քաղաքամտսերում², սկզբնական շրջանում ապրելով սոցիալ-տեսական ինքնուրույն ու ներփակ կլասսով:

Մյուս կողմից Հայ նորարենակների, վերցին հաշվով Միրիայի և Լիրանանի Համար խիստ բարերար նախաձեռնող ոգին ու եռանդաշատ միզը, որնը ավելի ուշ և ավելի բարենպաստ պայմաններում արար ազգային գործիչների միահամուռ զրվատանքին էին արժանանալու, առաջին երկու տասնամյակներում շեն կարող բնիկների կողմից բարեհաճ աշբով զիտվել: Եվ զա ոչ միայն այն պատճառով, որ Ֆրանսիական իշխանությունները տհանելի շահերով Շովանավորում էին Հայ գործարար շրջաններին, վերցիներին որպես մենաշնորհ մատուցելով Պաղեստինի, Ալեպինորդանանի ու մինչև իսկ Հիշապի հետ առնուրուի մի շարք ճյուղեր³: Կայ և նույնքան Հիշարժան մի այլ հանգամանք: Գաղութային վարչապետական, ինչպես և Ֆրանսիական կապիտալին ուղղակի հնմակա մի շարք մեծ Հիմնարկներ (ժիախոտագործական, երկաթուղարյին և այլն) հանուլցով նախապատվություն էին տալիս Հայերի ազելի բարձրարակ, այլ պարագաների բերմամբ ազելի էժան աշ-

¹ «ՀԽւարեր», 27.11.1883:

² P. Birot et J. Dresh. La Méditerranée et le Moyen Orient, t. II, Paris 1956, p. 328.

³ Հայերի ազելի բառ 2500 ֆարաոնն և բարայն աներից բաղկացած և 15000 բնակչություն ունեցող տիտի քենիքը, օրինակ, իր շշումաներու, հենցեղիներով, գաղացերով, զարսկան մաշմեներով ու պաշտօնյաներով և այն երեսութեարավ հայեական մեծ զարգացագարի մը պատրանք կուռս այցելուն (տե՛ս, ուշիւ, 24.8.1925). Պարագանելին (յ Գամակայ և Բեյրութի Հայ գաղթակայուններու):

⁴ Ն. Ֆարավան, Հանոն երանեաթյան, Կայիր, 1860, լ. 88—90 և 29—101:

խառութին¹¹. Գետը է ավելացնել և այն, որ Հայ առկարգականներն ու արհեստավորները, սպասարկման ոլորտի և ազատ առկարգականների աշխատաղեները զգայիրըն սահմանափակում էին տեղացիների Համախորդութիւնների շրջանակը։ Եզ իրավացի էր անշուշտ բանական թվականներին Տրիպոլիում ապրող և աշխատող Ծ. Ստյանը, երբ գրում էր, տիրու տեղացի տարրը Հայտ աւքով չի դիմեր մեր այստեղ արմատանալի։ Ամեն Հայ, որ գործ մը կտկախ, ըլլա արհեստավոր, ըլլա խանութպան, անախործ ու վեսասակար մրցակից մը կեկատվի տեղացիներում կողմեն Իրազությունն այն է, որ Հայերը իրավցնեն վեսասակար մրցակիցներ ճեն¹²։

Եթե մատենաշերու լինենք նուև արարների և Հայերի, ինչպես Հասարակ մարդկանց, այնպես էլ Հատկապես զեկավար գործիչների շփումներն ու իրարհասկացողությունը գժվարացնող լեզվական պատվարը, ապա դժվար չի լինի պատկերացնել այն ապակողմնարշումը, որին մատենգել էին ինչպես արարները, այնպիս էլ Հայերը։

Արարների ապակողմնարշումն վրա կտեղ առնելով և շրջափակվելով լիբանանյան սահմաններում, ասենք, օրինակ, որ իսլամ արարների Համար Հայերի ներկայությունը պարզապես տհաճ էր, որովհետեւ նորարնակները ավելացնում էին քրիստոնյաների թիվը և դրանով իսկ ամրապնդում մարոնիաների հճնարանը¹³, Բանք նրանում էր, որ ֆրանսիական իշխանությունների առաջին միջոցառումներից մեկն էր եղել պատմական Լեռնալիբրանանին վերամիավորել ծովափնյա լիբանանը (Թեյրութ, Տրիպոլի, Սայզու և Սուր քաղաքներով) ու Անդրկիրանանը (Թեկայի գաշտավայրով) և ստեղծել Մեծ լիբանանի պետությունը, գուշանակություն պահանջելով մարոնիաներին։ Վերջիններին, սակայն, մատահոգում էր նորաստեղծ պետության մեջ իսլամ ազգարեակլության ոռկուսացին ակնառու հավելումը։ Եզ տիրու ատոր Համար ալ, — զիայում է Մ. Նաթանյանը, — Կիլիկիո պարպումով այդ կողմերը խուսոց Հայերու լիբանանի մեջ հաստատվիլը բարձրակարգեցամ մարոնի շրջանակներն և անոնց պատրիարքին, որպեսզի, այդու, Նոր

¹¹ «Առաքեալայ Ժամանէ», 17.5.1922, SN, Plan d'Établissement des Réfugiés Arméniens, Genève, 1927, pp. 73—74; „Syria“, Revue d'Art et d'Archéologie, tome IX, fasc. 3, Paris, 1928, p. 173.

¹² Յ. Օսյան, Առաքեալայ կյանք, «Ազգ», 3.10.1924.

¹³ L. M. T. Leo. Lebanon. Improbable Nation, Bloomington, 1965, p. 58.

կարգադրությամբ ազելացած ինչպես երու համեմատությամբ բրիտանյա տարրը ևս ավելինաւ¹⁴: Արարագեա Գ. Մըսովյանի հետ ականկցության ժամանեակ. Կանքիքի տալ-Անրամա թերթի գլխավոր խմբագիր Ճարուիտ Դառուդ Բարակատը իր հերթին լէր թարթեամ, որ սրբատոնյա սուրբացիներու համար այլապես օգտակար է Հայ գաղղականությունը, որուն ներկայությունը քաղաքացի կապահով է իբրանանի մեջ¹⁵:

Այս ապակողմնորոշման պարմանեներում արարներին հայերից էլ ավելի խրտնեցնելու և կողմերի միջև անշրափեաց խորացնելու գործում իրենց լուման էին ներդնում հատկապես նորածնակների ֆրանսիացի բարեկամները: Հ. Մատեյանը, վերլուծելով այն ազգակաները, որոնք զաղթօչախների կազմավորման որերին և Շանր մինուրատ էին առաջացրել Հայ-արարական փոխհարաբերություններում, դրեւ է. «Դժրախտարար իրողություն է նաև այն, որ 1922 թ., պաշտոնապես իմպերիալիստական Ֆրանսայի հոգաւավորության տակ կատարված Հայերու զանգվածային զաղթը զեսպի Սուրբիա և Լիբանան, արարներու մոտ ստեղծած էր հատկանալի կասկածածը: Մյուս կողմէն, ֆրանսացիները ամեն միշտցի կողմին արարներուն տայլու համար այն ապագարությունը, որ նորեւ հայերը իրենց պաշտոնայիներն էին և թէ անոնք մինեւոյն տակն կրնային սպոտագործվիլ արարներու ազգային-ազատազրական շարժման դեմք¹⁶:

Արարական բազականին լայն շրջանակներ, լըմբոնելով տարբեր համայնքներին միմյանց գեն լարելու ֆրանսիական իմպերիալիզմի բաղադրականության էությունը, Միքայելի ու Լիբանանին սպառնացող Հիմնական վատանգը սինալ կերպով համարում էին... և Հայկական վատանգը¹⁷:

¹⁴ Մ. Խորենան. Մէճ Լիբանէի կողմության հակոռնյա պատմաները, էլեքտ., 1.2.1925:

¹⁵ «Հայաբերձ», 20.4.1926:

¹⁶ Հ. Մատեյան. Հայ բաղադրական ժաքի կազմավորման և հառնեաթյան և հոմոլիքներու զերց արարտին Արևելցի մէջ, ո՞մք երանարան է ընտառ. 4.1.1959:

¹⁷ «Լ. Տիգրես», 14.1.1939: Արարեկի ապահովմեարութան խորաբան մտան բազականացով զիստություն կարող է լինել այն, որ թերթի ուզ համերում լրացրադ և ներքին որպէս շահուազութմբյուն է ներկայացնեան 1924 թ. իր թափառմենը Հայկական գաղցնակայի գողացներուն...

Սիրիայի և Լիբանասի ընկերության պայմանների ապահովմեռուման պայմաններում ակնհայտ գեր էին խաղում նաև թուրքական գործակալները, որոնք իրենց ժառայագրված տեղական մասունքի միջոցով երկու երկրների քաղաքական ու տեսչության դժվարությունների ազրյուրը հայերի ներկայության փաստի շուրջ էին ընկացնում¹⁸, և նույնիսկ արարական ազգային դիմադիմը վառապատճեն էին հայտարարում։ Եթե այլ փակենք, ապա շատ շատով Սիրիա և Լիբանան անունները պիտի վերանան և փոխարինվեն Հայաստանով։ — գրում էր Դամասկոսի թերթերից մեկը¹⁹:

Հայ-արարական գոխահարարերությունները քսանական թվականների կեսերից թիվ վերիվայրումների լճնթարկվեցին նաև գաղեակ գտարանդիների մեջքով։

Հայաստանում սովորական իշխանության ամրապնդման և ուժեղացման պայմաններում, արևմտահայ գաղթականության զինակի բարվոցման և հայրենադարձության կազմակերպման ուղղությամբ նրա ձեռնարկած քայլերը լայն արձագանք գտան ափյուռքով մեկ, հասնելով նաև արարահայ գաղթօջախներին և առաջ բերելով աստիճանական հոգիփոխություն։ Ելիմա նոր փափաք մը, նոր զարթնում մը կա հայ ժողովուրդին մեջ՝ գողթելու և հաստատվելու ընտանյութ մայրենի երկիր, Հայաստան։ — գրում էին Դամասկոսից²⁰:

Մյուս կողմից, զաղթօջախների ընդհանուր վարքագի վրա ազգող մտավորականության և գործարար մարգկանց շրջանում, հակառակ գաղութարարների ակնկալության, հաւզճառե խորանում էր երկինքումը ֆրանսիական և արարական կողմերի միջև²¹, թանը նրանում էր, որ որոշ գործիչների մոտ նախանշվող թիվ թե շատ գեղուկրատական հակումները, հայ զաղթականության աստիճանական հոգիփոխության պայմաններում, սպանում էին ծավալվող ոհայաստանասիրության կրակով զոլորշիացնել մտավորականության լայն խավերի գգացական հիմքերից բխող ֆրանսիա-

¹⁸ Տե՛ս «Հայկապետ» ընթացիկ, 6.2.1924, 19.7.1925, 10.8.1926 և այլ «Համարներ».

¹⁹ 1920 / 2 / 22 : Համար 1.

²⁰ Ելքի, 2.1.1924, 1924 թ. պատուին արարելեցի 25 արշակուազլուկերի Բաղդադի և Թերմենի վրայի Սրբութ մեկնեամը։ Սրբիայից հայութեազարձության առաջին էր (Տե՛ս «Ալքի», 14.8.1924)։

²¹ Հայ զաղթօջախների երկինքիման շորք հյութեց տե՛ս «Ալուրիական ժամանակ», 12.8.1925, Ելքի, 24.8.1924 և 9.9.1924։

սիրությունը, որը կիրիկյան աղետից պատրանաթափավելով անշափ թուլացել էր Այնունակ և ույզքան ծրերուն էին և ձեռվորմող հայ գործարար շրջանները՝ ինչպես մինչև պատերազմը տեղում դրժող, այնպիս էլ տեղահանության օրերին իրենց հարստություններ բեկորներով Սիրիա և Լիբանան եկած հայ տևայնագործական շարդյունաբերողներն ու տեղաբանները, օրոնք չէին կարող աշխաթող անել տեղական պարմանները. լեռկելել շնչա՞նդության այն նոպայից, որը կարող էր ի վերջո առաջանալ տեղական ույմանների ու արամազրությունների հետ հանգուցակապերի բացակայությունից:

Նզ ալսպիս, այն ժամանեակ, երբ մինույրուց աստիճանաբար շիկանում էր իր տիրապետությունը ամբաւնդել լուսացող գաղութային իշխանության և իր ազգային անկախության հետամտող արար ժողովրդի գոխաւարաբերություններում, հետզհան ակներն էր գառնում Հայությանը առաջնորդող շրջանների երկիրեղկումը ֆրանսիական և արարական կողմերի միջև Հայ համայնքի դեկավար շրջաններում ավելի ու ավելի էին աշխատուում առնվազն հավասարակշռություն իրենց ժերախտապարությունները մի կողմից և Սուրբ հյուրընկալ ափերուն վրա՝ արար շեղին ասպեցականությանց և մյուս կողմից շմանաթեն ֆրանսիական կառավարության աղնջվության, հռամատության և գուրգուրաներինց միջնց²²:

Գաղութարաբներին, սակայն, ձեռք չէր տալիս արդախսի ու համասարակշռությունը, մանավանդ որ այն սպառնում էր խախտվել ու իրենց օգտին և ներգործությամբ հայ աշխատավորական խաղմերի, որոնց շրջանում արմատավորվել սկսած կոմունիստական և առաջազեմ մյուս խմբակները կարող էին հետզհան աղդեցության գոտի շահել. Անհրաժեշտ էր, ուրիմն, հայության շրջանում որոնել մի ուժ, որը նվիրվածությամբ ժառայեր իմպերիալիզմին, Այդ ուժը գաշնակցությունը եղավ, որը, դիմելով մատնությունների ու նույնիսկ սնիրների, Սիրիայում և Լիբանանում ֆրանսիական գերագույն կոմիսարի անմիջական հոգանակությամբ և նրա զորական ուժի բացահայտ օժանդակությամբ, 1926 թ. ի վերջո ձեռք բերեց ազգային իշխանությունների մենատիրությունը, Սիրիայի և Լիբանանի ժողովուրդների ազգային-ազատագրա-

²² Ա. Անդյան, Մ. Խինայան, Ա. Շակերիչյան, Սուրբիայի առքեցույց, Ա տարի, 1924, Առաջարանը:

²³ Տէ՛ս «Վելպրական ճամուց», 27 և 21.1.1924, 20.2.1924 և 15.4.1924, «Արև», 2.3.1925, 27.3.1925 և 1.3.1925.

կան շարժման բոլոր հանգրվաններում բացըրոշապես դիրքորոշվելով գաղութարանների կողքին, դաշնակ վարարանները ժամ հարված հասցեին Հայ-արարական փոխարարերությունների բարվոր զարգացմանը:

Հայկական «Սպարտակ» կազմակերպության (1923 թ.) և լի-րանեանյան ստոդուլյան կուսակցության (1924 թ.) շարքերում գործող դեմոկրատների միավորումով 1924 թ. Հռկտեմբերին ստեղծված Սիրիայի կոմունիստական կուսակցությունը ծննդյան իսկ օրից մի կողմից բանաց Հայ գաղթօջախներին որպես Հայա-րականություն սահմանադատել դաշնակների արկածանդրու-թյուններից ու դիրքորոշել արարական ազգային գատի պաշտպա-նության նակատում, մյուս կողմից եռանդ շինայից արար ժողո-վրդի լայն իսավերին հասցնելու Հայ աշխատավորների հզբայրա-կան զգացմունքների հավաստիքը:

Տվյալ ժամանակաշրջանում Հայ դեմոկրատների Համագոր-ծակցությունը արար դեմոկրատների հետ՝ օրյեկտիվորեն հայ-արարական գոխինարարերությունների մասնակարչին սոսկ նախա-քայլ լինելով Հանգերձ, որակապես նախանշեց Հայ նորարևակների ճիշտ կողմնորոշման սկիզբը։ Հայ դեմոկրատների առաջնային երախտիքը պետք է համարել այն, որ նորանք դժվարին շանազրու-թյամբ աշխատեցին նորարևակների գիտակցության մեջ արմատա-վորել այն առողջ սերմբ, որ Հայ գաղթօջախների ապահով ու բար-զավաճ վարդա հեռանկարը արար և Հայ աշխատավորների բարե-կամության ու Համագործակցության հետ է առնչվում միայն։

Այդ առողջ սերմբ, ասկայն, չէր կարող առաջ հռնմանը խոս-տանալ այնքան ժամանակ, քանի դու Հայ դեմոկրատները չէին ստացել մի կողմից Հայկական ազգային Հակագաղնակ կուսակ-ցությունների նվազագույն աշակցությունը, իսկ մյուս կողմից ուս-կամքին չունեն ուժեղ հենարան, հռնման արարական առաջազմեմ աշխատավորական կազմակերպությունների՝ արար ժողովրդական մեծ զանգվածին հասցնելու համար Հայ գաղթօջախների հարա-զատ խոհներն ու զգացմունքները։

Իրավիճակը աստիճանական հեղաշրջման ներարկվել սկսեց երեսնական թվականների երկրորդ կեսին միայն։

Այդ ուղղությամբ առաջին քայլն արվեց 1936-ի հունիսին, երբ Հայեազում և Դամասկոսում Հայ կոմունիստները, Ծնշակյաններն ու ուսմկավարները ստեղծեցին «Սիրիահայ ժողովրդական Հակա-

արքա²⁴, նույն տարգմա հուլիսի 19-ին հրապարակված ծրագրային հայտարարության մեջ, ընդգծելուց հետո, որ զաղութային վարչակարգի պարզմանենքրում տանտեսութեա Հյուժման հեթակա, բազարական ու մշակութային մարզիրու մեջ բառորեն մնշված Սուրբո մեջու և ողաշնակցության արկածախնդրական բազարական հազարականության հետեւնքով խոռվաճույզ պատային կյանքի պայմաններում՝ հայությունը լի կարող է ունենալ լուսավոր ապագայի ոչ մեկ հօսանքարհարու, հակատը նշում էր, ոժողովրդական նակատը միակ կարելիությունն է արար ժողովրդի հետ նոր առցելակերպ մը ատեզժելու և սուրբահայ ժողովրդի բարօրությունը ապահովելու համարը²⁵, Ենշտելով, որ Շուրբին կատարյալ ազատապրումն ու առաջադիմական հզուումները միմիայն հրնվանք կներշնչեն հայ ժողովրդից զիտակից զանցվածներուն, հակատը իր հիմնական առարագրանքներից մենքն էր համարում բարձենականապես փաստել մեր տեղացին նորայրներուն, թե հայ ժողովրդը այս երկրի անկախության գեմ ոչ մենք ձգտում ունի պաշտպանելիք, թե պատրաստ է հայ մշակույթի կողքին զարգացնելու արար լեզվի ու մշակույթի ուսուցումը մեր կրթական հաստատություններն ներա, թե հայ բանվորն ու աշխատավորը միմիայն երկրի ընդհանուր շահերուն նվիրված, իրենց արար եղբայրներուն հետ ձեռք-ձեռքի, հավաքարար երկրի հասարադիմության ու աշխատավորության շահերու պաշտպանության համար զորժակցելու պատրաստ հետ²⁶,

2

Հայ-արարական փոխհարաբերությունները, բառին բուն իմաստով, շրջապարձ ապրեցին համաշխարհային երկրորդ պատերազմի արթիներին, Հիմնականում 1943 թ. Հունիսից սկսած, երբ Միքրիայի ու Լիբրանի կոմունիստական կուսակցությունը, ընդհատակից դուրս գալով և թվականորեն ու կազմակերպութեն նկատելի ուժ դարձած՝ ազատ դորժունեության լայն առաջարկ իրավ. և երբ արար ու հայ բազարական առաջադեմ գործիչների, դեմոկրատ մտավորականների և հասարակ աշխատավորների

²⁴ Հ 2002 ԳԱ արնեւպիտության ինսիսուար արխիվ (այսուհետև՝ ՀԱ ԱՌ արխիվ), ֆ. 5, գ. 2, գ. 5. Այս առումով Շշշրաման կարգը ունի և հուշուցյանք այն պետություն (անոն ՖՀՊ. աշխ., էջ 22), որ սովորութանց առարաջմանն ուժի միանական հակատը սկսել է կողմանը որդենի 1942 թվականից:

²⁵ ՀԱ ԱՌ արխիվ, ֆ. 5, գ. 2, գ. 5.

²⁶ Խոյն տեղադր:

շփումներն ու համագործքակցությունը սկսեցին հանախակի և էլ ավելի նպատակաւուց դառնար և հակաֆաշիստ լիգաներին, ու Սովետական Միության բարեկամների ընկերություններին և ուշայառանի պաշտպանության լիգաներին շրջանակներում:

Սիրիայի և Լիբանանի կոմմենտատական կուսակցությունը անհերքելիորեն հանդիսացավ այս շարժիչ ուժը, որ լիովին արժեքավորեց և գործարկման դրեց հայ և արար ժողովուրդների բարեկամական, այդ թվում հատկապես մշակութային կապերի զարգացման հիմնական հախագործալները՝ բազմաժարյան պատմա-մշակութային շփումների առկայության փասով, հայ Հռովդաշախների ներկայությունը արարական երկրներում, արար և հայ աշխատավորների համատեղ կյանքն ու աշխատանքը, համանձան նակատագիրն ու խեցիրները: Ծգ իրավացի էր անշալչու և թ. թէկդաշը, երբ Սիրիայի ու Լիբանանի կոմմենտատական կուսակցությունը անվանում էր բնամ և արար, իսլամ և քրիստոնյա ժողովուրդներու նղանյալության գործիչների:

Սիրիայի և Լիբանանի դմբկրատական կումբակերությունների կողմից անդադրում կիրառված հայ-արարական կապերի սերտացման և խորացման բարերականության կենսագործումը առաջին հերթին անխզելիիրեն առնչվում է կոմմենտար դեկավարներ նաև թէկդաշի, Ֆարժալլա Հելուի և նիկոլա Շատրիի, բազարական ու մշակութային գործիչներ Անտուան Թապեան և Ժորժ Լանեալի²⁷ ու արար բարեկամության այդ ուսուցիչներից անվան հետո Լիբանանահայ մանուչը դիմուկ է բնութագրել նրանց, զրելով, որ հայերին նրանք սովորեցրին ու իրեն արար ժողովուրդը, իրանանցի ըլլա ան թէ սուրբիացի կամ իրաբցի, սիրու արար ժողովրդի գատը, նաևնաւ անոր հոգեկան խոռվճներն ու բազմաներները, սակայն նախ իրենք սիրեցին հայ ժողովուրդը, ժանոթացան անոր պատմության զանազան դրվագներուն, ժանոթացան անոր մեծություններուն ու նաև տկարություններուն, բայց սիրեցին հայր որպես մարտնչող ժողովուրդ, և հայր սիրելով՝ արարը սիրել սորվեցուցին մեղքով²⁸:

Դեռ երկրորդ աշխարհամարտի տարիներին, բազարական պայքարների թուռուրո՞ի մեջ անգամ կոմկումի դեկավար գործիչ-

²⁷ ժանոթացի հայեր, Բեյրութ, 2.3.1943.

²⁸ Ս. Սիրակ, Հայ և արար բարեկամության ուսուցիչը, ԵՄՀՀ հշակարան Հ Համաշխատ, 1.7.1952:

ները աշխաթող չեն արել արար և հայ գեմոկրատ մտավորական-ներին միմյանց մերձեցնելու անհրաժեշտությունը։ Լիբանանահանչայ մամուլը արձանագրել է, օրինակ, որ 1943 թ. մարտին սիրիահայ առաջադիմ մշակոթային գործիչները եւ, թեկազի նախաձեռնությամբ նև սկսել անմիջականորեն շփվել արար գործիչների, լրագրողների, գասախոսների և լրուաների հետ²⁰:

Պատերազմի տարիներին Հակաթաշշիստ լիգայի և հետպատճապման առաջին տարիներին հաղաղության պաշտպանության սիրիական և հատկապես լիբանանահանչան կազմակերպություններն են, որ գեմոկրատ զննավարների կողմից վերաժնեցին հայ-արարական մտավոր շփումների ժամադրավայրի:

1939 թ. հիմնադրված «Հաշշիզմի դեմ պայքարի լիգա»ն առանձնապես աշխատացավ Սովետական Միության վրա հիտերական ներք նախահարձակումից հետո։ 1941 թ. զննամբերին նաև սկսեց հրատարակի և Ա. Բարիկը ամսագրությունը, որի խմբագրապետությունն առանձնեց անվանի գրող Օմար Ֆախուրին։ ուիզայիք շուրջ խմբված արար և հայ գործիչներն էին, որ Օ. Ֆախուրիի գըլիսավորությամբ 1941 թ. հիմնադրեցին «Սովետական Միության բարեկամների ընկերությունը» և «Հայաստանի պաշտպանության լիգա»ն (այլ անվամբ «Սովետական Հայաստանի բարեկամների ընկերությունը»), որոնք վերաժնեցին հայ-արարական բարեկամության գարուցների։

Այդ ընկերությունների շրջանակներում առանձնապես բնողություններություն անեցան Ա. Բագեար և Ժ. Հաննան, որոնց ծառայությունները հայ-արարական կապերի զարգացման բնագավառում անդնահատելի են։

Խոսկերով երկրորդ աշխարհամարտի տարիներին և նրանից հետո հայ-արարական հարաբերություններում տեղի ունեցած բնկաման ու նրա պատճառների մասին, անհրաժեշտ է առանձնահատուկ կերպով ընդդեմ Սովետական Միության, այդ թվում և Սովետական Հայաստանի գոյության փաստը և նրանց հեղինակության բարձրացումը ավյալ ժամանակաշրջանում։

Արդարն արար մտավորականության առաջավոր թերի հայ ժողովրդի պատճենաթյան ու մշակույթի հետ հազորդվելու և ուրինեայ զաղթօջախների հետ կուլտուրական առնչությունները զարդացնելու խորացող ձգտումը շատ բանով է աղերավոր Սովետա-

²⁰ Շահովազուրդի հայեա, 12.3.1943.

կան Հայաստանի կենսունակ գոյության փաստի հետ։ Արար ժողովրդի և առաջին հերթին նրա առաջազմոր մտավորականության շրջանում հայ գաղթօջախների բարոյական կըսի աննախընթաց շափով բարձրացման գործում արձանագրենք թեկուզ ֆաշիստական Գերմանիայի բախչախման հերթապատճեմի էջերում հայ ժողովրդի գաղակների սխրանքների առկայությունը։ «Սովետական Միությունը խարսխաբարը» գրքի անվանի հեղինակ Օմար Ֆախրին, օրինակ, Հայաստանի խորհրդայնացման տարեգարձի տոնակատարություններին արարենքի մասնակցությունը բնականոն է դանի հենց այն պատճառով, որ տերը խորայի բնուության ու բարբարոսության դեմ մղված ազատագրական պատերազմի մասին, սովոր ժողովրդներու առաջին շարքին վրա պիտի հիշվի նաև անունը հայ ժողովրդի, որ իր լայն բաժինը բերազ այս պայքարին։ Ըստ արդյունք մեկնարանության կարիք ունի իր ժողովրդի ազատամարտի հանապարհին զոհված բազարական ականավոր գործի հարժալլա Հելուի հայտարարությունը։ «Սովետ Հայաստանի նկատմամբ մեր սրտերուն մեջ կա նույն սերը, ինչ որ կա Սուրբու և կիրանանի հանդեպ, որովհետեւ այդ աշատ ու անկախ Հայաստանի մեջ կատանենք բոլոր փոքր ժողովրդներուն ազատության և անկախության խորհուրդը։ Բոլոր պիտակից արարենքը Հայաստանի մեջ կատանենք իրենց ժամանակ։»²⁰

Այսպիսով, ստեղծված օրինկտիվ նոր պայմանների և արարական ու Հայկական գեմոկրատական կազմակերպությունների և ռուադար մտավորականության աշխատանքքի շնորհիվ, արարենքի և Հայերի ապակողմնորոշումը միմյանց նկատմամբ ատտինարար սկսեց լրանալ և առջի ավելի ավելի փոքրագարձ վկատառության ու համադրժակցության։ Արար ժողովրդութը հանձին հայ գաղթօջախների ապահովեց հուսալի մի դաշնակից, որը, հակառակ բոլոր մեքենայություններին, այնուհետև իր հիմնական զանգվածով ակտիվ մասնակցություն նենցած սիրիա-լիբանանյան ազգային պայքարի կարևոր բոլոր հանդրվաներում (անկախության հաջակման, ռռար զորքերի զուրա բերման։ և այլն) ցանկալի հաղթանակը ձեռք բերելու գործում, ինչ վերաբերում է հայ ժողովրդի ատրագիր զավակներին, ապա նոր մթնոլորտում նրանք սկսեցին լիաթոք շընչել՝ առաջին հերթին թոթափելով թղթանիք արերից հետո

²⁰ ժողովրդութիւն ձայն, 25.11.1946.

²¹ նույն տեղում, 7.7.1946.

ավելի բան երկու տառամաժյակ իրենց հոգում նստած շղթուշավորությունը, շրջանայնցություններ ու գոյապահպանման սննդուն մտահոգությունը և հնարավորություն ձեռք բերելով ոինքնամփոփումի ու մեկուսացման տարբերային ձգումներից՝ ձերբագատվելու²⁵:

Անում էր, որ հայ նորանաս սերտմզը, լավապես տիրապետեց արարերներին լեզվին ու խորացնելով արարական պատմության ու կուլտուրայի իմացության իր աստիճանաշախիք, հաջարարար ընդառաջ վեար սիրիա-լիբրանենյան ազգային մշակույթի առաջնախառնությաց շարժմանը:

3

Հայ նորարանակները առաջին բակ օրից հոգ տարան իրենց ազգային կրթարանների ստեղծման գործին։ Եռաւով դպրոցներ բացվեցին Սիրիայի և Լիբրանենի այն բոլոր քանակավայրերում, որտեղ հայերի թիւ թիւ շատ առվար խմբեր էին հաստատվել։ Թասնական թվականների սկզբին տարբեր հարանվանությունների պատկանող կամ հայրենակցական տարբեր միությունների կողմից զեկավարվող 50 ուսումնական հաստատություններ, այդ թվում և մի քանի երեքրորդական դպրոցներ էին արգելն գործում Հայկապում, Թելլութում, Դամասում, Տրիպոլիում, Հռոմում, Ջանիեում և այլուր։

Հայ ազգային դպրոցի հիմնական առաջարանքներ, անշուշտ, մայրենի լեզվի ուսուցումն էր, մանավանդ որ աշակերտները հիմնականում թուրքախոս կիլիլիահայերի երեխաններն էին²⁶։ Մայրենի լեզվից հետո նախապատվությունը տրվում էր ֆրանսիերներն։ Այսպես, Հայեացի ազգային ուսումնական խորհուրդը 1925 թ. հայ դպրոցների համար պատրաստում էր կրթական ծրագրի մի նախագիծ, որ նախատեսում էր քարձու դասարաններում հիմնականում սիրանակներն լեզվին ուժ տալը²⁷։ Ազգային դպրոցների վարչական գործառնությունների համար ևս օգտագործվող լեզունները հայերնեն ու ֆրանսիերնեն էին²⁸։

Նորարանակության սկզբնական շրջանում մի շաբթ որյանկակ պատմաներ լին կարող շարգելակել հայերի շրջանում արարե-

²⁵ «Մեր համարանք է Հայոց», 17.10.1925։

²⁶ «Ընդհանուր պատմություն կիլիլիցին», թրաման մեջ՝ ներկայականին և Հայերների խոսից կոսրմին վարժարանին մեջ, — 1924 թ. Տրիպոլիից գրու էր ծ. Սոյանը (ամեն ընդհանուր պատմություն կիլիլիցին կամ այլ պատմությունների մեջ առաջարկվում էր այս պատմությունը)։

²⁷ «Ընդհանուր պատմություն կիլիլիցին», 18.9.1925։

²⁸ «Մարտիսկան ժամանք», 18.8.1925։

բնել լեզվի մասսայականացման գործը։ Այդ պատճառներից կարելի է հիշատակել նորաբնակների ու մանավանդ երեց սերնդի՝ բացառապես նվազագույն ապահովությամբ ձեռք բերելու ձգտումը, որի բավարարման համար չշուկայական արարերների տարրական իմացություններից ազելին անհրաժեշտ չէր և հաճախ նույնիսկ թուրքերին էլ գործը գլուխ էր բերում, Հայկական նորարաց դպրոցների անկաղմաներով վիճակը, մասնավոր արարագեան հայ և առաջել ևս Հայապետ արար մանկավարժական կադրերի բացակայությունը²⁶, կիլիկիահայ մատագորականության իր հետ ֆրանսիակիւթյան բերած լինելը և ֆրանսիական մտնդատի պայմաններում երան կապված մնալը. և այլն²⁷:

Թիւ ներգործություն լի ունեցել և այն հանգանակը, որ առտիճանարար մնավորվող աղքային մարմինները, իրենց համար ոռոշչային նպատակ դարձնելով Ծղեռնից փրկված բնկորների հոգում ազգույին դպացմունքների շեշտավորումը, նոր ու բարյացակամ արարական միջավայրում աղքականացման գործը հեշտացնելու և պատմական բնօրրան վերագրանքի երազանքը աշխատացնելու մատհուգությամբ, ամեն կերպ աշխատել են Հայկական գրուցները գարձնել հաօքս տաղային և ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել սոսկ Հայերներ լեզվի ուսուցման վրա, ենենով մանավանդ այն իրողություններից, որ Սիրիայում և Լիբանանում Հաստատված Հայերը ճեշիւ մեծամասնությամբ թուրքանու կիլիկեցիներ էին։

Ազգային մարմինների բարեմիտ այդ ձգտումը, սակայն, արարերն լեզվի նկատմամբ ֆրանսիական զաղութարարների քաղաքանության պայմաններում, ծալրահեղ կենսագործում էր զատել հայ հետազնմ մտավորականության կողմից։

Առաջին հերթին պահպանելու համար անջրապես արարեների և ազգային փոքրամասնությունների միջև²⁸ (վերշիններիս շրջանում արարերների իմացությունը սահմանափակելով) և վերջին հաշվով արարական ազգային մշակույթի զարգացումը խափանելու, մասք (տեղական լեզվի սեղմումների Հանապարհում), զաղության իշխանությունները իրենց տիրապետության առաջին բակ օրից պետական պաշտոնական լեզու հռչակված ֆրանսերներ պարտավորիչ գարձ-

²⁶ «Արտրուա», 10.7.1949։

²⁷ «Եփրատ», 7.4.1933, «Անրիմ», 5.3.1953։

²⁸ «Հայուաց», Բեյրութ, 17.10.1955։

րեցին նախնական, միջնակարգ և բարձրագույն կրթության սիստեմում: Դերադույն կոմիսարին կրթական խորհրդատու Եղվալելը լին թարգման, որ հենց 1918 թ. Հակոబեմբերի համակ հրամանագրով կարգադրել է բալոր դպրոցներում թուրքերներ փոխարեն 30 դասամաներից 5—14 ժամը, համաձայն տեղական հայոց վարագություններին, որամադրել ֆրանսերներն լեզվին, բանի որ 1919 թ. ավարտական քննությունների ժամանակ հիմնական լեզուն ֆրանսերներն էր լինելու, իսկ արարերները զանալու էր անզիներներն, իտալերներն, համարներն և Հայերներն Համահավասարեցված ոճաւողակ լեզու³³: Դադութարանները իրենց միջացառումը փորձել են արգարացնել այն պատճառարանությամբ, որ իր ժողովուրդը խոսում է դշորություն չունեցող բարար-սիրիական բարբառված և ուրեմն լին հասկանում գրական արարերներ....³⁴:

Մանական թվականների կեսերից սկսած հայկական շրջանակներում հայոցնետն հասունանում է արարերներն լեզուն ազգային գրպրոցներում ուսուցանելու զաղափարը: Հիրանանում, որտեղ մինչ այդ հայկական կրթարաններում ավանդվում էին միայն Հայերներ և ֆրանսերներն լեզուները³⁵, ուսումնական խորհուրդները առաջինը որոշեցին արարերներ լեզվի ուսուցումը պարտավորիչ դարձնել: Արարական ժամանում գրեթե ակունքի արարերների ուսուցումը, որպես միայն հայ երիտասարդ հայերների հոլոր գլուխեները միանարար որոշել են իրենց ծյագրներում ընդգրկել արարերների ուսուցումը, որպեսզի հայ երիտասարդը ակրապետներն Հայրենիքի լեզվին³⁶: Սակայն Սիրիայում գրությունը շարունակում էր նույնը մնալ, նվազ է Սուսրիական մամուլը և Սուսրինք տեղական լեզուն խորագրված առաջնորդողում ըննադատում էր այն, որ Սիրիայի հայ վարժարաններում շարարերներն չեն արգած այն անդը, որին իրավունք ուներ և որը կպահանջեն մեր շահն բակը³⁷:

Փաստորեն մինչև Սիրիայի և Հիրանանի անկախության հռչակումը հայկական գպրոցներում արարերների ուսուցումը ընդհանուր առմամբ եղել է տաշմանափակ և ունական բնույթը է կրել³⁸:

³³ M. Chevalley, L'Enseignement en Syrie pendant la période d'organisation (1919—1921), „La Syrie et le Liban en 1921”, Paris, 1921, p. 106.

³⁴ Ж. Валерс, Крестыне Сирин и Ливан, М., 1932, стр. 198.

³⁵ «Սուսրիական ժամանակ», 8.3.1925:

³⁶ 1920/2/17: «التقدمة»، حلب:

³⁷ «Սուսրիական ժամանակ», 8.3.1925:

³⁸ «Հայոցի», Թիվութ, 13.10.1953:

1943 թ. Հոկտեմբերին, Լիբրանեսի վարչապետ Արիադ Սոլցը խորհրդարանին ներկայացնելով իր առգային կառավարության ժրադիրը, խիստ քննադատության հնքարկեց զաղութարանների պարտադրան Մաշնանադրության այն հոդվածը, որ ֆրանսիանեն ու արարերենը հայտարարում էր համահավասար պետական լճակու և որ փաստորն կիրառվում էր հօգուտ ֆրանսիանենի վարչապետաց հայտարարեց, որ իր կառավարությունը վճռել է արարերենը դարձնել երկրի պետական պաշտոնական միակ լեզում, առանց սպասելու, որ Մաշնանադրությունը համապատասխան վերանայման հնքարկվի, Մրեսիոնաների բախչախիչ մեծամասնության հավանության արժանացած այդ հայտարարության հաջորդ օրն իսկ պետական բոլոր սպասարկություններին հրահանգվեց տպավոր հաղորդագրություններն ու գործառությունները կատարել արարերեն լեզվով, որ երկրի պաշտոնական լեզուն է⁴⁰.

Արարերեն լեզվի՝ սկզբում լիբրանեում և այնուհետև Միրիայում, պետական պաշտոնական լեզու հոչակվելը ոչ միայն կարելոր անկյունադարձ էր երկու երկրների մշակութային կյանքում, այլև լայն հորիզոն էր բաց անում հայկական դպրոցներում արարերեն լեզվի ուսուցման և արարագիտ հայ երիտասարդ մատավորականությունն պատրաստելու հեարավորությունների առաջ

Արարերեն լեզուն պաշտոնականացնելու առաջին իսկ օրից հայկական դպրոցը չէր կարող շփմանք ուրագեն արարական լեզուն, պատմությունն ու մշակությը հայերին ծանոթացնելու և այդ հանապարհով էլ հայ-արարական ազգային-լեզվական դժվարանցանելի պատվարը հաղթահարելու միջոց։ Հատկապես հայկական գեմակարտական շրջանները արարերեն լեզվի տիրապետման մեջ էին տեսնում ու հայության բարձրացման և բարգավաճման ուղինե, հայ մատավորականության բնույթուն հեռանկարներուն հրաշիիք⁴¹, իսկ արար բաղարական գործիչները զիտակցում էին այդ սպարեզում հայ գաղթօջախներին լայն աշակցություն ցույց տալու անհրաժեշտությունը։ Ֆ. Հելուն իր ճառքերից մեկում հայ գարժարաններին պետական աշակցությունը հայտարարում էր առաջնային գործ⁴²: Լիբրանանի հանրապետության նախագահ Բեշարա էլ-Խուրին ելույթ ունենալով Անթիլիասի կաթողիկոսարանում շեշտում էր,

40 Շառավարք ձայն, 10 և 14.10.1943:

41 Նոյն տեղում, 20.10.1942:

42 Նոյն տեղում, 29.8.1943.

որ ռհայերը պետք է ավելի սերտորեն կապվին Հիրանանի Շուշ, և այդ կապակցությամբ խոստանում էր տարարելոն լեզվի ուսուցման մեջում ուսուցիչներ առաջ հայկական գլորոցներին¹⁸, իր հերթին վարչապետ Ծիփադ Մոլոր լիրանանա՞յ առաջադիմ լրագրողներին բնդունելով, Հայ զարոցներին ավելի մեծ ուշադրություն ընծայելու և ավելի մեծ թվով զասատուներ տրամադրելու երաշխիք էր աալիս¹⁹:

Նորանեկանի Հիրանանի ազգային առաջին կառավարությունը անհապաղ միշտցներ է ձեռնարկել՝ Հայ Համայնքին տրված խոստումները իրականացնելուն զարձնելու համար, կրթական-մշակութային նպատակներով գորագործներ կոչված կարևոր մի գումար տրամադրելով²⁰ և առաջնային ժրագրերի շարքում նախատեսնելով տարարական լեզվի ուսուցումը ընդունելու հայ վարժարաններու մեջ՝ պետության կողմէն գնարված ուսուցիչներու թվի ավելացման միջոցով²¹,

Համանման նիզ է զարծ պրվել և սիրիական կառավարության կողմից, որ բացի արարերեն լեզվի զասատումներից, նաև նյութական դաշտի նպաստ և հատկացրել հայկական գլորոցներին²²,

Հակառակ այդ բոլորին, արաբերենին սիրիապետներն ընթացել է դանդաղ և երկար ժամանակ Հայերի շրջանում արարերենի իմացությունը դուրս չի եկել տարրականի առնմաններից:

Սիրիայում Հիսունական տասնամյակի երկրորդ կեսից, իսկ Հիրանանում վաթումական թվականներին սկզբից Հայ մտավորականության լայն շրջաններին սկսել է մտահոգել այն իրողությունը, որ Հայկական գլորոցներում արարերենի ուսուցման ահնախանձելի պիճակի հետևանքով բարձրագույն ռամական հետամտող բազմաւարյուր Հայ երիտասարդներ արտադրագիրը են Արևմտյան նվազուա և Միացյալ նահանգներ, որտեղ նրանք տիրուալ ենք ու միայն արարաշարության, այլև բնդշանրապես Հայության համար:

ԵՄԷՐ նշանարանն է Հառաջ շարաթաթերթը մի անդամ չէ, որ անդրադարձէ և առանձապայի այդ հրագրության, ընդգծելով, որ

¹⁸ Նոյն տեղում, 22.10.1943.

¹⁹ Նոյն տեղում, 4.11.1943.

²⁰ Նոյն տեղում, 12.12.1943.

²¹ Նոյն տեղում, 22.12.1944. Խախարաթյան ընդունելու քիչից Մ. Խակեղիքյանի հավասարաւով, լիրանանին կառավարությունը Հայկական ուշ ժակ դրցոցի ինքառողիքը լի մերժու և միայն 1945—1948 թթ. 28 նոր ուսուցիչ է դարձուակել Հայկական վարժարանները (անժ «Հարթությա», 18.1.1948).

²² «Մարտիս», Հայաս, 26.2.1944.

Հայ երիտասարդության համար ռայլասերման և ուժացումի վառեղոք կուզա Արևմուտքներ և որ այն կանխելու համար ուշագրած պարագաներուն է մեր ուսանողներուն սորունքներ արարերն լիզուն և սեր հառաջացնել արարական մշակույթին հանգեցնէ³³, բայց որ արարերներն տիրապետելով միայն Հայ երիտասարդը Շնօրավորությունը ձեռք կրերի Արևմուտքից հրաժարվելու և տեղական համալսարաններ հանախելու³⁴:

Արարերների ուսուցման ասպարեզում բնկում մտցնելու ուղղությամբ Հայ մտավորականության ջանքերին իրենց անմիջական մասնակցությունն են բերել սիրիական և լիբանանյան կրթական իշխանությունները: Բավական է ասել, որ միայն Լիբանանում, ունենալով Հայկական և համալիրանահյան ջանքերներ, կրթական նախարարությունը Հայկական գպրոցների համար 1960 թ. պաշտուին է կոչել «Հայվելլյալ» 200 ուսուցչների³⁵, իսկ արար մատուցանությունը (ինչպես նախկինում) իր կամազոր, ոճանշակությունն է բերել Հայ երիտասարդությանը արարերն լիզուն ուսուցանելու գործին:

Հայ և արար առաջազոր շրջանների ջանքերի ցանկալի պառազները չեն ուշացել: 1963 թ. առաջին անգամ լինելով լիբանանահյայ 30 գպրոցներ զանգվածային մասնակցությունն են բերել պետական քննություններին և արձանագրել ակնառու առաջադիմություն: Բավական է ասել, որ Սահակ-Մեսրոպյան, Հովհակիմյան-Մանուկյան, Դարուչի Հակոբյան և նոր բարձրագույն գպրոցներից պետական դիպլոմի հավակնորդ Հայ պատանիների և աղջիկների Հոծ խմբի 90—100 առկուս գերազանց քննությունն է բռնի:

Այդ հակողությունները հիմք են ովել Հայկական պետքառատական մամուլին գոհունակությամբ արձանագրելու, որ շարդին ուղին բացված է բանի մը տարիին ի վեր. այս ձևով լիբանանահյայ լությունը պիտի ունենա արարագետ երիտասարդությունը մը³⁶ և որ շայիմ արարերների ուսուցումը սկսած է գրավել իր արզար ակզր մեր կրթական ծրագիրներուն մեջ³⁷:

33 Ա. Վարդանյան, Խոչք գպրոցների ուսուցումին աթիմ, «Մեր նշանաբանն է Հայաց», 10.9.1962:

34 Գ. Խակորյան, Ուսումնական և ազգային հրատակ Հարց մը, «ՄԵՐ նշանաբանն է Հայաց», 25.3.1962:

35 ո՛Մեր նշանաբանն է Հայաց», 29.9.1963:

36 Ժ. Քորդելյան, Կրթական ուսուցչությին հաջողեցիք, «Մեր նշանաբանն է Հայաց», 7.7.1962:

37 Ժ. Քորդելյան, Դրական և բացառական ձեռություր, «Մեր նշանաբանն է Հայաց», 29.9.1963:

Արարերեն լեզվի աստիճանական մասսայականացումը հայ զազբաշխելու ներսում և հատկապես հայ մտավորականության նոր սերնդի ջրահանում, նրկու ժողովուրգների մշակութային կազմերի հանգացման ու ամրապնդման հիմնական նախադրյալներից մեկը հանդիսացավ:

4

Սիրիայի և Լիբանանի Հայությունը, Կույսիսկ 1946—1948 թթ. Հայրենադարձությունից հետո, բավականին ստվար թիվ էր կազմում²⁸:

Հայությունը, սակայն, պատկառելի տեղ էր գրավում ոչ միայն իր թիվը. Զիա կյանքի մի բնագավառ, որտեղ հայերը ցուցաբերած լինեն իրենց առանդն ու ընդունակությունները:

Հոկտյանան բանտկ են կազմում հայ բանվորները, արհեստավորները, հոգամշակները, նրանց առկղծած բարիքները, արդյունաբորժակ ապրանքները, մեկը մյուսի ետևից բարձրացրած շինքնը գործել են Սիրիայի և Լիբանանի Հարաւությունն ու Հայաստանը. Հայ կոչեակարները, գերմանիները, կահույզագործները, ժամադրութեարքը, ոսկերիները, լուսաեկարիները²⁹, կաշեգործները, շինարարները, ավտոմեքանորոգները, տերստիագործները և մյուսները Հոյակած են որպես հմուտ, ձեռներեց, ոչինուաստիք ու պարկեցու մասնագետներ Լիբանանյան գրող Մահիդ Ռեշը Բնյութի հեռուստատեսությամբ իր օնեցած ծլույթում նշել է. «Մենք հու, Լիբանանի մեջ, երախտապարու ենք հայերու հանգիւ, որութ մեջի սորվեցուցին աշխատիւ»³⁰. Սիրիացի պատմաբանները հայության մասին առաջին գործ երկու տասնամյակ առաջ ընդունել են, որ հայերը այրի են ընկնում հատկապես առկարի և ար-

²⁸ Ա. Գուգարյանը (Եղջ. աշխ., էջ 109) և Լ. Խորենյանը (Եղջ. աշխ., էջ 21) սիրիանայիր և լիբանանայիր թիվը ցույց էր տալիս շոշ 270000, ինչ «Հայութեարքի ձամբը» (4.12.1950) 330000. Պոյու զեզեցամ հայեր Սիրիաում առգերից հնաւ, իսկ լիբանանու հովերից հնու հնապատճեազման տառընի առբիերին հաղմել է աշխային ամենայորներ փերամանությունը (անշ. Հայության Ընթացք, Մ., 1958, տր. 11—15; R. Paron, Le Proche Orient, Paris, 1957, pp. 31 et 42).

²⁹ Միայն Բնյութում 1955 թ. սիրիական խոհութ ունեն ավելի քան 70 հայ ժամադրութեարք, 150-ից ազիք հայ առկերիներ և 50 հայ լուսաեկարիներ («Աֆունք», 1958 ապրիլի 4, 11 և 20):

³⁰ «Աֆունք», 18.1.1954.

զբանարերության ճյուղերում և բազմաթիվ արհեստների բնագավառում²²։

Իրոք, Հայերի ձեռքում են կենարունացված Միրիայի և կիրանանի արդյունարերության մի շարք ճյուղեր։ Հիրանական թվականների վերջին կիրանանի խոչար արդյունարերական ձեռնարկությունների 18 տոկոսը, մասն արհեստավորական ձեռնարկությունների 43 տոկոսը, իսկ մեծաքանակ ներմուծումներ կատարող տների 10 տոկոսը հայերին էին պատկանում։ Կիրանանի աղքային խոշոր արդյունարերության մեջ ներդրված 375 միլիոն լիրանաևյան լիրայի աղելի քան մեկ երրորզը հայ արդյունարերական բուրժուազիայի սեփականությունն էր²³։ Զգայի թիվ են կազմում նաև այն հայերը, որոնք զբաղվում են մեծաժախ և փոքրաժախ առևտորք, լումայափոխությամբ և բանկային ու բորսային գործարքներով։ ՎՄՀեց կորիսներ հայերը, — հայտարարել է Միրիայի Հանրապետության նախագահը Շ. Թումաֆյանը, — որովհետ մեր երկրին մեր մարտարվեստը և այլ արհեստներ առաջացուցին և ամեն զնող կաշխատին մեր վերելիքին համարը²⁴։

Աղելի ակնառու է եղել հայերի տեղը աղատ առարկեզների բնագավառում։ Միայն Բեյրութում 1958 թ. տվյալներով նախագծային ինքնուրույն գրասենյակ են ունեցել 70 հայ նարտարապետներ, Հարյուրից ավելի ճարտարագիտներ, տասնյակ իրավաբաններ²⁵, 1948 թ. Հայեաց քաղաքի հայ բժիշկների թիվը աղելի քան 40 է եղել²⁶, իսկ 1959 թ. կիրանանում հաշվառման են հեթարկվել հայ 68 բժիշկներ, 84 առամենարություններ, 35 գեղագործներ և 200 հրվանդապահներ²⁷։ Խույսքան զգայի է եղել հայերի գերը լրագրության առարկեզնում, այդ թվում նաև ֆրանսիան լեզվով սեփական թերթեր և հանդիսաներ հրատարակելու գործում։

Կիրանանի և Միրիայի խորհրդարաններում հայերը մշտապետություն են իրենց ներկայացնեցիները, իսկ լիրանաևյան կառավարության կազմում՝ նախարարները։ Հայ գաղթաշախները երկու երկրներին տվել են պետական բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնատարներ, դիվանագիտներ²⁸ ու մանավանդ՝ աղքային պաշ-

22 A. Hourani, Minorities in the Arab world, London, 1947, p. 77.

23 Հ. Հայեաննելիսյան, էջմ. աշխ., էջ 28—27.

24 «Արքայոց», 4.5.1957.

25 «Սփյուռք», 4.5.1958.

26 «Ազգայաց», 5.10.1946.

27 «Արքայոց», 2.1.1959.

28 Տե՛ս «Արքայոց», 15.8.1954 և 8.1.1955.

գանության մակատի երեկի գործիքները։ Հետպատճառազմյան ժամանակաշրջանում Հյայը Միրիայում երեք հայեր՝ Ա. Գարամանեակյանը, Հ. Մոլոյանը և Ա. Թիկնյանը հասել են զններայի աստիճանի, առարեք ժամանակներում ժառայելով որպես սպայակուրահ անդամ, Հրետանային ուժերի ընդհանուր հրամանատար, զինվորական կառավարիչ, ուղարմական առյանի անդամ, ոստիկան գորաց ընդհանուր հրամանատար, զինվորական կցորդ և այլն⁵⁵, Միրիական ու լիբրանեայան բանակներում ժառայել են նաև բազմատանիյակ Հայ առաներ և զգալի թվով Հայ զինվորներ, որոնց մասին կիրանանի պազարին պաշտպանության ընդհանուր վարիչ Մ. Թարինդդիքներ լի վարանել նշելու օնս անունման վատահություն ունին մեր Հայ զավութին վրա։ Մեր լավագույն սպաները, մեր լավագույն զինվորները Հայեր են։ Ոչ մեկ զավաճան չկանվեցազ իրենց մեջը⁵⁶։

Այսանդ ավելացնենք, որ երրեմենի զաղթականներից շատերը, տարրատկան Հայրենիքին մասուցած ժառարությանց համար արժանացել են սիրիական և լիբրանեայան բարձրագույն շքանշաների։

Հայ ժողովրդի վայելած վարեկի ու կշռի ժամփի կարող են պերճախոսու կերպով վկայել Հետեւյալ փաստերը։ Միրիայում 1956 թ. ցուցատախտակներից ստար լնդուններով արձանագրությունները շենքու Հրամանատագիրը շտարածվեց Հայերներ ցուցատախտակների վրա⁵⁷, իսկ լիբրանեանում 1963 թ. յայրացաղաքի փողոցները վերամկրածելու կապակցությամբ Հայացաւ շրջանների բազմաթիվ փողոցներ կուղիցին Օրենս, Արարտ, Արարատ, Հայք, Հայաստան, Անի, Մասիս, Կիլիկիա, Անգրանիկ, Բաթթի, Վարդան, Սիամանթա, Վարուժան, Ս. Նշան և Արամ Խաչատրյան, իսկ մի մեծ պողոտա՝ Արմենիա անունով⁵⁸։

Միրիական պետական գործիլ Ռ. Թեխիան ասել է. «Հայ տարրը եղած է մեր ամենասիրելի փոքրամասնությունը, որը իր ազատամտությամբ, աշխատասիրությամբ և ուշիմությամբ՝ մեծ ժա-

⁵⁵ Միրիայի և լիբրանեան բանակներում ժառայած Հայ բարձրաստիճան սպաների ժամփին նշութեր անց է ընթառաւ, 20.11.1945 և 20.12.1945, «Յարթուր», 22.12.1958, «Այս», 12.6.1965, 8.1.1966, 1.8.1968 և 20.4.1968, «Աֆյուն», 17.4.1968.

⁵⁶ «Եկեղեց», 18.6.1965.

⁵⁷ Հայեր տեղայի, 17.2.1966.

⁵⁸ «Աֆյուն», 8.2.1963.

ռայություններ մատուցած է Սբրիային»¹⁰: «Հայերը շատ պատահար տարր են այս երկիրներում մեջ՝ իրանց աշխատասիրությամբ և մանավանց իրանց յանձնագիտություններով», —ըստ այսուհետո: «Հայ ժողովությոր իր ճիգերով, աշխատանքով, նարտացությամբ և նվիրումով շնչեցուց մեր երկիրը, աշակցելով Առարիս առաջազդիմության և բարգավաճումին», —հաստատել է Արդել Ռահման Քայալին¹¹: Հիրանանյան մշակույթի հայտնի գործիչ Ռ. Արթուրան իր հերթին հայտարարել է, «Մենք ոչ միայն զաներ հայերից, այլև ուրախ ենք, որ այդպիսի մի կանոնական ուստեղեագործ տարր չժամանակ է հավատարմորներ ու անվերապահներն էնք»¹²:

Նախապատերազման շրջանի հետ համեմատած՝ հզուրընկալ երկու երկրների կյանքի բռլոր թևագավառներում հայ գաղցօսախնդրի տեղի ու դերի այսպիսի վերելիք պայմաններում, արար ժողովրդի և երա առաջընթացի հուսափի թեմարկու հայ ժողովրդի հաջու ու համերաշխ գոյակցության հոյն վրա չէին կարող լսաղմնավորվել և հետզհնահ լընձյուղն Հայ-արարական մշակութային կապերը:

ԵՐԱՐԴԱՐԴՅԱՆ

ՀԱՅ-ԱՐՄԵՆԻԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1

Սուլթանական բռնատիրության դարավոր լուծը ոչ միայն խաղանել է Օսմանյան կայսրության ժաղավարագնների մշակութային քննականուն զարգացումը¹, այն արգելակել նրանց գործադրան

Mc Gregor, 6-11-3345.

Digitized by srujanika@gmail.com, 11.11.2014

74 - սԱԿԱՆԻՒԹՅԱ, 18.12.1957,

18 March 1861.

¹ Հակոբաց էն պար Հայութի նորութիւն (1888—1889) թիմուշը, յօսուքը այս ժամանակ, որ 1817 թվական եղած Ա. Ահշեցի զորագործ համայնքին նպաստութիւն, պարագանեալ աշխարհում սփռությունը նորութիւն պարագանեալ (անգլ. «The Life of the Armenian Church in the 19th Century»), Վանաձարձան, 1990 թ.

շփումները. Երկու հարնան մազովուրդներ՝ արաշներն ու հայեցչ
մի քանի հարյուրամյակ հարավորաթյան շնու ունեցել մոտիկից
հաղորդակցվելու միմյանց մշակութային և գանձումներին:

Միայն 19-րդ դարի երկորորդ կեսից, հերիաթային Արնելյի
նկատմամբ Արևմուտքում հարանող հետաքրքրության ազգեցու-
թյան ներքո, Արարիայի և արարացու մասին հարյուրավոր հող-
վածներ են լույս ընծարվել դադլուշախներում հրատարակված հայ-
կական պարբերական մամուլում:

Դարավերջին և բանենքրորդ դարասկզբին, հայ պատմաբանա-
սիրության աստիճանական վերելքի պայմաններում, ավելի ու ա-
վելի էն ուշադրություն գրավել հայ-արարական պատմուկան և
մատճեազրուկան տոնշությունները:

Եզր սակայն արարական գեղարվեստական գրականության
ամենագլուխ էջերն անգամ դուրս են մնացել հայ մտքի մշակ-
ների տեսագաշտից, բացառություն են կազմել միայն սրպեն թեր-
թուն Զմյունծիայի և Արքի Արարատյանի ընթերցողներին մատուց-
ված «Հազար ու մեկ գիշեր» հերիաթաշարը և «Բազմավեպի» ու
«Հյուսնուփայիշ» հատուկնետ էջեր գրակեցրած Անթարի վիպերգը:

Ափառապով, որ հայ ընթերցողին զրեթե ոչինչ հայունի չէ
արարական գպրությունից, և արարական բարոյալիք հերիաթների
թարգմանության ձևուարկելով, թ. Պատկանյանը դեռ անցյալ
դարի վերջին նշել է. «Ոչ մի ազդի հանձնար այս կեա սուեղծապոր-
ծության և երևակայության վերամբարձ մախրելու չի հասած, որ-
քան արևելցինք»². Արարական գրականության, որպես շարարտցու
զուու երևակայությունը իր բակաւածողմական և գեղարվեստական
սրանշելի գույներով գրանորոզ դպրության, շատ բարձր զեահա-
տական է տվել Մաֆֆին³, իսկ այդ գրականությունը հանձնելու առ-
պարեզում մեր իրականության մեջ աիրոզ անբնականուն վիճակն
ակնարկելով. Դ. Վարուժանը շեղգծել է. «Ռևոլյուցիոն բազուկներով
մեր օվլուպա՛ աղաղակելը շատ լավ, բայց թիւ մըն ալ մեզ և մեր
դրացիները հարկ է նաև նաևնքը»⁴:

Դժբախտաբար փառու է, որ նույնիսկ բազմաբյուր հայերի
արարական երկրներում հաստատվելուց հետո էլ, ամրաց երեք
տասնամյակ, մինչև հիսունական թվականները, արարերեն լիդ-

² Ա. Աղասամի, Հանգիւուններ անցյալի հայ, Օրենս, 1952, էջ 76.

³ Բաֆֆի, Երեցի ժողովածու, Հ. Տ, Օրենս, 1964, էջ 72.

⁴ Դ. Վարուժան, Խամսիսնի, Օրենս, 1965, էջ 62.

վին գիտակ Հայ մտավորականների սակավաթվությունն ու արարական մշակույթի մասին փոքրաթիվ այդ սարարագեանների պատկերացումների մակերեսայինությունը դարձապես դժվարացրել են արարական զարության նկատմամբ գաղթօջախների հետաքրքրության թեկուզ տարրական բավարարումը:

Տակամին 1930 թ., Հայեակի սեփատօք, արարական գրականություններ հայացումներ կատարել առաջադրելով, ընդդժում էր ուշակառակ անոր, որ գարավոր տեսյուլ մը մեզ կկապէ արար աղնիվ ազգին Հետ, չենք ճանչեար անոր տակդժագործ տաղանդը գրականության և գեղարդեստի այլ մարդերուն մեր: Ծվ փոխադարձարար: Սանոթության այս խնդառությունը գուցե անցյալին մեջ իր արամարանական պատմաններն ուներ: Բայց այսոր ներելի չէ, որ նմանօրինակ զանցառության մեջ գտնվինքո՞ւ:

Քանի տարի անց, ափսոսալով, որ գրաքն բովանդակ իմաստով գօքախտարար Հայ արարագիտություն մը չենք ունեցած և որ տարօրինակ մատայնությամբ մը երբեք չենք մատահոգված մշակույթի պատմությամբ այն ժողովուրդին, որուն Հետ հանիսկի շփումները ունեցած ենք, լիրանահանայ լրագրութ Հ. Պարումյանը հարկ էր համարում կոչ անել. «Գեր այսոր լավ ճանշեար Արարը իր ամբողջական գիծներուն մերց»²:

Թառանական թվականների վերջներից, արարական գրագոր մշակույթին հազորգվելու առաջին փորձերը Հայ մտավորականությունն ակնձի է Արու Արայով: Ծվ գա Հասկանալի է, ԶԵ՝ որ ալ-Մարին Հայ ժողովրդի համար սրտամուտ անուն էր վաղուց շնորհիվ Ա. Խաչակիյանի Հանրահույսկ պոնմի: Ծվ սակայն Արու Արայի կյաներին ու ստեղծագործության նվիրված ավելի քան մեկ տասնյակ արարագիտական այդ թոթովաներները մերթ եվրոպական աղբյուրներից բանահավաքումներ էին³, մերթ՝ Խաչակիյանի պեհմին շաղկապվող մտորումներ⁴, քիչ անգամ միայն շրջապատի և

² Հնիքուս Հայեա, 10.9.1925.

³ Հ. Պարումյան Արարագիտությունը Հայ պահանության մեջ, «Հարթեր», 8.4.1925.

⁴ Ա. Արյանի, «Արու Արայ է՛ Մարտրի», «Ազգակ շարտերյակ», 1944 թ. 1—11 (հայեր և Շամազենի Արու Արայի մասին ժողովրդական զրուցներից ան շնորհացային տարբերքը, 1952, էշ 703—718); Գ. Արամեյսն, Հոգու Արա (Ա. Մարտրի, «Ծփուուք», 11.11.1951, էշ 2).

⁵ Ա. Արտակյան, Արու Արայ ալ-Մարրին Հայ պահանության մեջ, «Եւ Խոր», 8 և 15.8.1931 (հայեր Համազուգած ան ալլագարա թ 293), Թ. Խիմյան, Արու Արայի տան առաջ, «Ազգարար» թ 22—25.

ժամանեակի Հետ արար գիլիսովայի մորի և հոգու կապերը ինք-
նուրույն բացահայտելու փորձերը։ Արու Ալալով Հայ դրահանու-
թյունը հարատացնելու առաջի ուշագրավ և երախտայի փորձը կա-
տարել է իրանահայ գրող և թարգմանիչ Զ. Միրզյանը, որի ու-
սումնասիրությունը լույս է տեսել լիբանանահայ մամուլում¹⁰։ Միր-
զյանը առաջին է, որ Արու Ալայի ըլուզումիատից աասնյակ ու
առանյակ բառառողներ բարձրարվեատ թարգմանությամբ (հոգ չէ
թե պարսկերնեից) լույս է ընծայել Մեմրուլյան լեզվավ։

Չի կարեի լավասար, որ Արու Ալայի մասին լույս տեսած
համարյա բոլոր հազմանդերում անխուսափելիորնն արձանագրվել
է առողջ Ա. Խուշակյանի, սակայն ոչ ոք ցարդ և վազագույն փորձն
էլ չի կատարել տեսու և լայ Մահարի պահմի ստեղծագործական
հեերում արար հեղինակի գիլիսովայական հայացքների ուսումնի
աատինանաշափը որոշելու նդ. Տարանյանը, Հ. Պարսումյանը, Ա.
Տուոյանը, Ա. Էլլանին և ուրիշներ, առանց որևէ փաստարկի,
արար հեղինակի (և միայն նրա) խոհերի ուղղակի արձագանքն են
տեսն Հայ բանաստեղծի մասրումներում, մինչ Հ. Թերլիկյանը և
այլր ուրդ արձագանքի աղբյուրը Մաարուց վերցնելով վերացրել են
Շոպեկենուիրին և մանագանդ նիցշերն¹¹։

Մաարուց Հետո, արարական զրահանության ոսկեդարյան
մատրանից ուրիշ մի քանի հսկաներ էլ են Հայ ընթերցողներին ժա-
նոթացվել սիրիահայ և լիբանանահայ գրական մամուլում։

1962 թ. Իրարի մայրաքազարում հանդիսավորապես նշանաց
թաղադրի Հիմնագրման 1200-ամյակը և արար մեծ գիլիսովիա ալ-
Քինդիի մանվան 1100-ամյակը։ Հորելյանական հանդիսաւթյուննե-
րին մասնակցեցին ոչ միայն արար, այլև առարերկրուա արևելա-
գիւներ, որոնց թվում է առվետական մի պատվիրակություն։ Այդ
առիթով, սովորական արարագիւն Ս. Եիրոյանը լիբանանահայ մա-
մուլում սուրագրեց ալ-Քինդիին նվիրված մի լուրջ հետազոտու-
թյուն¹², շեշտելով որ Նրա ս՛անհարեղ գործերը առուցագիւմական

¹⁰ Ս. Թիրյայան, Ազու Ալա է Մաարի, սմասովորդի հայե, 31.7.1947 և
«Հայրենիք», 28.11.1947 (արտապություն «Հայրատանի հունակցու»)։ Հ. Ավագ-
յան, Արու Համբարէ բանասեց և թուսամակը Ապու է Ալա է Մաարի,
«Մեր եղանակն է Հայոց» 4.8.1957։

¹¹ Զ. Միրզյան, Արու Ալա է Մաարի՝ արար թերթողության մայր հա-
յունը, «Բագրիկ», 1954 թ 5—7։

¹² Տե՛ս «Անդրահետեւ», Խ 295: «Համապայմին առեցիցք Բիլութ, 1922,
էլ 116, «Ազգական Ակադեմիք, 16.11.1957, և այլն։

¹³ Ա. Ծրբյան, Արևելյան մեծ համայնքական» ալ-Քինդի, «Մեր եղանակն է
Հայոց», 16.12.1962, էլ 8։

Հռատեսքի մը ծնունդ տվիլ Մհրձավար ու Միջին Արևելյան փիլիսո-
փայության պատմության մեջ: Ծին սովհետահայ արևելյագեաց իր
հոգմագիր որպես նորակացություն ընդգծել է աշ-Թիրզիքի արխուու-
տելյան իմաստասիրության յուրացման հետ եակ երա կողմից մնե
աթենացու առաջազնեմ զաղափարների զարգացումը, ապա 7. Աս-
թարյանը նույն հեղինակին Խվիրզած իր մակերեսային հետազո-
սության մեջ, շակերտելով աշ-Թիրզիքի արար զիրազանց փիլիսո-
փա ընթելլ, հիմնական շեշտը դրել է միայն ու միայն հելլենական
փիլիսոփայությունից նրա կրած ռուժն աղջեցության վրա:
Դեռ է ընդգծել, որ Ասթարյանի հետազոտությունների հազա-
րական ու մակերեսային ուղ բնորոշ է նաև նրա մյուս հոգմատնե-
րին՝ 12-րդ դարի անգայուցյան արար իմաստանոր երե Ծյուղի,
հՀազերժական բանաստեղծ Մուտանարքին և այլոց մասին¹²:

12-րդ դարի արար փիլիսոփա աշ-Ղազալիից մի հատված
(«Մուրանք ազատություն»), հսկանիայում 10-րդ դարում ծաղկած
«Մալրիտանական» գրականությունից տաղեր՝ Մոկտար Բեն Բաե-
րից և Օսման Խալիֆայից. մի շարք արաբական հոգմիրզական հե-
րիտեներ և բարոյաշիր պատմություններ («Այսպիս էր ժամանա-
կին», «Արևելյան Շուրասիրություն», «Խալիֆան և աղջատ Յա-
գուար», «Խալիֆը և նրա մոհքիմը», «Հարուս աշ-Խաչիկ և Օմար»),
իսլամական կրոնի հետ առնվազող մի շարք նյութեր («Մուհամեմեդ
մարզարքի կյանքն ու գործը», «Մամլիկ էն-Նասիր և այլն), արա-
բական միջնադարյան կյանքից մի շարք դրվագներ՝ քաջած Մ-
Միրզինիի և Արաբական մասրադեպերը գրքից և այլ աղյուրներից.
առաջնային աշխ ամենը, ինչ արաբական գրականության հին շրջա-
նի հետ կապված լույս է տեսել Միրիայի և Լիբանանի հայկական
մամուլում¹³:

